

Հաստատված է

«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ Տնօրինության

07.08.2020թ.-ի թիվ 237 որոշմամբ

«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ ԿՈՂՄԻՑ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ԿԱՆՈՆՆԵՐ

(ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՕՖԵՐՏԱ)

«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ

Հասցե ՀՀ, ք. Երևան, 0006, Մանանդյան 33/3

հեռ. 87-87, (+374 8000) 87-87 (արտասահմանից զանգելու դեպքում)

Էլեկտրոնային հասցե՝ headoffice@vtb.am

Բանկի պաշտոնական կայք՝ www.vtb.am

ՀԱՐԳԵԼԻ ՀԱՃԱԽՈՐԴ՝

Սույն ««ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ կողմից ֆիզիկական անձանց մատուցվող ծառայությունների պայմանները և կանոնները» (այսուհետ՝ Կանոններ) սահմանում են Բանկի կողմից ֆիզիկական անձ հաճախորդներին (այսուհետ՝ Հաճախորդ) մատուցվող սույն Կանոններում ներառված ծառայությունների ընդհանուր պայմանները, այդ ծառայություններից օգտվելու կանոնները, Հաճախորդների և Բանկի իրավունքներն ու պարտականությունները, փոխադարձ ստանձնած պարտավորությունների խախտման համար նախատեսված պատասխանատվության միջոցները և Բանկի ու Հաճախորդի միջև առաջացած վեճերի լուծման տարբերակները:

Սույն Կանոնները հանդիսանում են Բանկի ներքին իրավական փաստաթուղթ, ինչը Բանկի հրապարակային առաջարկն (օֆերտա) է կնքելու պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր) Բանկի կողմից մատուցվող (սույն Կանոնների շրջանակում) և Հաճախորդի նախընտրած ծառայության մասով (այսուհետ՝ Ծառայություն):

Եթե սույն Կանոններով սահմանված դրույթները տարբերվում են Բանկի և Հաճախորդի միջև կնքված կոնկրետ Ծառայության/վարկային պայմանագրով նախատեսված պայմաններից, ապա կիրառվում են տվյալ պայմանագրի դրույթները:

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Բանկը տեղեկացնում է, որ ստորագրելով դիմումներում/պայմանագրերում առկա Համաձայնությունը, Հաճախորդը հաստատում է, որ տեղեկացված է սույն Ծանուցմանը և տալիս է համաձայնությունն առ այն, որ Բանկը մշակի Իր անձնական տվյալները, այն է՝ անուն,

ազգանուն, հայրանուն, անձը հաստատող փաստաթղթի տվյալներ, սոցիալական քարտի/հանրային ծառայության համարանիշի կամ դրանք չունենալու մասին տեղեկանքի տվյալներ, հասցե, հեռախոսահամար և/կամ այլ տեղեկատվություն, որը հնարավորություն է տալիս ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել հաճախորդի ինքնությունը համաձայն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի:

Հաճախորդի անձնական տվյալները մշակվելու են՝ Հաճախորդի և Բանկի միջև պայմանագրեր կնքելու, հետագայում Բանկի կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու, Բանկի կողմից անցկացվող ակցիաների/առաջարկների/այլ ծառայությունների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով:

Անձնական տվյալների մշակման համաձայնությունը տրվում է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի համաձայն Հաճախորդի անձնական տվյալների հետ այնպիսի գործողություններ կատարելու համար (հավաքագրում, ամրագրում, մուտքագրում, համակարգում, պահպանում, փոփոխում, օգտագործում և այլն), որոնք անհրաժեշտ են սույն Ծանուցման մեջ նշված նպատակներին և ՀՀ օրենսդրությամբ Բանկի վրա դրված պարտականությունների կատարմանը հասնելու համար:

Ստորագրելով Համաձայնությունը՝ Հաճախորդը թույլատրում և լիազորում է Բանկին հարցում կատարել Հաճախորդի աշխատանքային վայր, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և/կամ այլ անձանց պատկանող տեղեկատվական համակարգերին (այդ թվում՝ «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ին (ԷԿԵՆԳ)), ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ ՓԲԸ-ին, ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ, ինչպես նաև վերջիններին տրամադրել Հաճախորդի անձնական տվյալները և ստանալ վերջինիս մասին տեղեկություններ:

Անձնական տվյալների մշակման համաձայնությունը համարվում է Հաճախորդի կողմից տրված, և Բանկը ստանում է Հաճախորդի անձնական տվյալները մշակելու իրավունք՝ Հաճախորդի և Բանկի միջև կնքված պայմանագրերի գործողության ընթացքում այդ պայմանագրերով սահմանված գործողությունների կատարման նպատակով, ինչպես նաև Բանկային գաղտնիքի մասին ՀՀ օրենքի համաձայն Բանկի հետ համագործակցող/Բանկին ծառայություններ մատուցող/Բանկի համար աշխատանքներ կատարող կազմակերպություններին տրամադրելու նպատակով՝ պայմանով, որ դա անհրաժեշտ է տվյալ ծառայությունները մատուցելու կամ աշխատանքները կատարելու համար և/կամ բոլոր այն դեպքերում, երբ այդ տվյալների մշակման պահանջն ուղղակիորեն սահմանված է օրենքով:

Սույն համաձայնությունը համարվում է տրված նաև վերոնշյալ տվյալների աղբյուր հանդիսացող վերոնշյալ մարմինները վերանվանվելու, վերակազմակերպվելու կամ այլ մարմիններով/աղբյուրներով փոխարինվելու դեպքում, եթե սույն համաձայնության հիման վրա ստացման ենթակա կամ տրամադրվող տեղեկատվության ծավալը մնում է նույնը:

(Ծանուցում բաժինը լրացվել է նոր պարբերությամբ 16.02.2022թ. Տնօրինության թիվ 29 որոշմամբ)

Հաճախորդի կողմից վերջինիս անձնական տվյալների մշակման մասին համաձայնության գրավոր հետ կանչման, կամ անձնական տվյալների ուղղում կամ ոչնչացում (եթե անձնական տվյալներն ամբողջական կամ ճշգրիտ չեն կամ հնացած են կամ ձեռք են բերվել անօրինական ճանապարհով կամ անհրաժեշտ չեն մշակելու նպատակներին հասնելու համար) կատարելու պահանջ ներկայացնելու դեպքում: Բանկը պարտավորվում է դադարեցնել Հաճախորդի անձնական տվյալների մշակման գործողությունները կամ ուղղել կամ ոչնչացնել Հաճախորդի անձնական տվյալները տասն աշխատանքային օրվա ընթացքում, եթե Հաճախորդի և Բանկի միջև առկա չեն չկատարված պարտավորություններ և բացակայում են գործող պայմանագրային հարաբերություններ, այլապես Հաճախորդի և Բանկի միջև պայմանագրային

հարաբերությունները ենթակա են դադարեցման՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով: Հաճախորդի անձնական տվյալների մշակման մասին համաձայնության հետ կանչման կամ Հաճախորդի անձնական տվյալների ոչնչացում պահանջելու դեպքում Հաճախորդի անձնական տվյալները դադարում են մշակվել Բանկի կողմից, սակայն դրանք պահպանվում են տեղեկատվական արխիվում և կարող են օգտագործվել միայն օրենսդրությամբ նախատեսված դեպքերում: Համաձայնության հետ կանչը հետադարձ ուժ չունի:

Անձնական տվյալների մշակման համաձայնությունը տրվում է պայմանագրերի գործողության ողջ ժամանակահատվածի համար, իսկ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ այդ դեպքերի համար սահմանված ժամանակահատվածի համար:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Կանոնները, Բանկի կողմից մատուցվող ծառայությունների սակագները (Սակագին), սահմանվում և հաստատվում են Բանկի համապատասխան կառավարման մարմնի կողմից և կարող են միակողմանի փոփոխվել վերջինիս կողմից: Կանոններում և Սակագներում փոփոխություն կատարվելու դեպքում Բանկը պարտավորվում է վարկերի մասով՝ 7 աշխատանքային օր առաջ, ավանդների/հաշիվների մասով 15 օրացուցային օր առաջ Բանկի և Հաճախորդի միջև կնքված համապատասխան պայմանագրով ընտրված հաղորդակցման եղանակով, վերջինիս ծանուցել Բանկի հետ կնքված պայմանագրով մատուցվող ծառայությանը վերաբերվող Կանոնների և Սակագների փոփոխությունները:

1.2. Բանկը պարտավորվում է ապահովել Հաճախորդին սպասարկելու կապակցությամբ իրեն հայտնի դարձած և ՀՀ օրենսդրության համաձայն բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների գաղտնիությունը: Բանկային գաղտնիք են համարվում Բանկի Հաճախորդին սպասարկելու կապակցությամբ Բանկին հայտնի դարձած Հաճախորդի հաշիվների վերաբերյալ տեղեկությունները, Հաճախորդի հանձնարարությամբ կամ հօգուտ Հաճախորդի կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև նրա առևտրային գաղտնիքը, գործունեության ցանկացած ծրագրի կամ մշակման, գյուտի, արդյունաբերական նմուշի մասին տեղեկությունները և նրա վերաբերյալ ցանկացած այլ տեղեկություն, որը Հաճախորդը մտադիր է եղել գաղտնի պահել, և Բանկը տեղյակ է կամ կարող էր տեղյակ լինել այդ մտադրության վերաբերյալ: Հաճախորդի, նրա հաշիվների և դրանցով կատարված գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը կարող է տրամադրվել միայն Հաճախորդին և նրա օրինական ներկայացուցիչներին, ինչպես նաև այլ անձանց՝ Հաճախորդի համաձայնությամբ կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Հաշիվների և դրանցով կատարված գործարքների վերաբերյալ գաղտնիությունը երաշխավորվում է ՀՀ օրենսդրությամբ: Հաճախորդին սպասարկելու կապակցությամբ Բանկն իրավունք ունի նման տեղեկություններ հաղորդել վճարահաշվարկային համակարգերի օպերատորներին, քարտային վերջնահաշվարկի մասնակիցներին և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ իրավասու մարմիններին:

1.3. Բանկը պատասխանատու չէ պետական մարմինների գործողությունների կամ անհաղթահարելի ուժի, այդ թվում՝ սարքավորումների անսարքության կամ էլեկտրաէներգիայի մատակարարման չնախատեսված ընդհատումների կամ խափանման հետևանքով առաջացած Հաճախորդի վնասների, կորուստների կամ ուշացման դեպքերի համար:

1.4. Բանկը Հաճախորդներին սպասարկելիս ղեկավարվում է ՀՀ օրենսդրության և Բանկի ներքին իրավական ակտերի պահանջներով: Բանկը ծառայությունները մատուցում է ՀՀ օրենսդրության, Բանկի կողմից սահմանված ներքին իրավական ակտերի, Կանոնների և Սակագների պահանջներին համապատասխան:

1.5. Հաճախորդը ցանկացած ժամանակ Բանկի մասնաճյուղերում կարող է ծանոթանալ սույն Կանոններին, Սակագներին և այլ հրապարակային տեղեկատվությանը, որոնք տեղադրված են նաև Բանկի պաշտոնական կայքում:

1.6. Գործարքներ կատարելու նպատակով Հաճախորդը կարող է դիմել Բանկի մասնաճյուղ՝ ներկայացնելով համապատասխան Ծառայության շրջանակներում գործարքների իրականացման համար Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը/տեղեկատվությունը: Հաճախորդի կողմից գործառնությունների իրականացում երրորդ անձանց միջոցով հոգուտ Հաճախորդի կարող են իրականացվել պատշաճ վավերացված լիազորագրի կամ օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթի հիման վրա, Բանկի կողմից պահպանվելով իրական Շահառուի/Հաճախորդի և ներկայացուցչի նույնականացման օրենքով և ներքին իրավական ակտերով նախատեսված պահանջները: Բանկի կողմից կատարման չի ընդունվում Հաճախորդի կողմից հասարակ (առանց պատշաճ վավերացման) գրավոր ձևով տրամադրված լիազորագրեր:

1.7. Հաճախորդը պարտավորվում է իր կողմից տրամադրված տեղեկությունների՝ անձը հաստատող փաստաթղթի, հասցեի, այդ թվում էլեկտրոնային հասցեի, հեռախոսահամարի և այլ տվյալների, որոնք նախօրոք տրամադրվել էին Բանկին, փոփոխության դեպքում անհապաղ տեղեկացնել այդ մասին Բանկին՝ ներկայացնելով համապատասխան տեղեկատվությունը/փաստաթուղթը: Սույն պարտավորության չկատարման հետևանքով առաջացած անբարենպաստ հետևանքների համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.8. Բանկը ոչ պակաս քան տարին մեկ անգամ իրականացնում է Հաճախորդի հավաքագրված տեղեկությունների թարմացում (Հաճախորդի նույնականացման և ինքնության ստուգման արդյունքում ձեռք բերված տեղեկությունների թարմացում)՝ տեղեկությունների արդիականության ու վերաբերելիության հարցում հավաստիանալու նպատակով:

1.9. Բանկն իրավունք ունի մերժել Հաճախորդին Ծառայություն մատուցելը, այդ թվում Հաշվի բացումը/ավանդի ներդրումը, վարկի տրամադրումը, եթե՝

- Հաճախորդը Բանկին չի ներկայացրել տվյալ Ծառայության մատուցման համար ՀՀ օրենսդրությամբ և Բանկի ներքին իրավական ակտերով նախատեսված փաստաթղթերը, այդ թվում՝ Բանկին տրամադրված նույնականացման տվյալները բավարար չեն օրենսդրությամբ (այդ թվում՝ Օտարերկրյա հաշիվների հարկման մասին՝ ԱՄՆ օրենքով) սահմանված նորմերի և պահանջների շրջանակում Հաճախորդին նույնականացնելու համար,
- Հաճախորդի կողմից ներկայացվել են ոչ արժանահավատ տեղեկություններ,
- Հաճախորդի կողմից նշված արժույթով կամ պայմաններով Բանկը չունի նախատեսված հաշիվներ/ավանդներ,
- Հաճախորդը չի վճարում Ծառայության մատուցման համար Սակագներով նախատեսված վճարները (եթե այդպիսիք նախատեսված են),
- Հաճախորդի վերաբերյալ առկա են տեղեկություններ փողերի լվացման, ահաբեկչական գործունեության, ահաբեկչության ֆինանսավորման մեջ ներգրավված լինելու մասին՝ համաձայն «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի» մասին ՀՀ օրենքի և Բանկի ներքին իրավական ակտերի,
- Ոչ ռեզիդենտ Հաճախորդի կողմից չի ներկայացվում ինքնահայտարարագրման թերթիկը «Ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ավտոմատ փոխանակման մասին» համաձայնագրի շրջանակում:
- Բանկի մոտ առկա են հիմնավոր կասկածներ Հաճախորդի կողմից անօրինական/զեղծարարական գործունեության մեջ ներգրավված լինելու վերաբերյալ և

Հաճախորդը չի ներկայացրել բավարար ապացույցներ/փաստաթղթեր այդ կասկածները բացառելու համար,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

(1.9 կետը լրացվել է նոր ենթակետով 15.04.2025թ. Տնօրինության թիվ 71 որոշմամբ)

1.10. Բանկը պարտավոր է Ծառայության մատուցումը մերժելու պարագայում՝ նման որոշում կայացնելուց հետո առավելագույնը 2 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր (թղթային կամ էլեկտրոնային) եղանակով տեղեկացնել Հաճախորդին՝ մանրամասն նշելով նաև մերժման պատճառները, ինչպես նաև Հաճախորդի պահանջով վերադարձնել այն փաստաթղթերի բնօրինակները (վերջիններս թղթային տարբերակով Բանկ ներկայացնելու դեպքում), որոնք Հաճախորդը ձեռք էր բերել երրորդ անձանցից՝ Ծառայության ստացման նպատակով Բանկին ներկայացնելու համար:

1.11. Հաճախորդը պատասխանատվություն է կրում իր Հաշվով՝ այդ թվում վարկային, կատարվող գործարքների՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան լինելու, ինչպես նաև գործարք կատարելու հիմք հանդիսացած փաստաթղթերի և դրանցում կատարված փոփոխությունների ճշտության համար:

1.12. Հաճախորդը պարտավոր է իր բոլոր տիպի արժույթներով հաշիվներում/ավանդում առկա և մուտքագրվող դրամական միջոցները, այդ թվում վարկային միջոցները չօգտագործել հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման, փողերի լվացման, ահաբեկչական գործունեության, ահաբեկչության ֆինանսավորման մեջ:

Հաճախորդը հավաստում է, որ բոլոր ֆինանսական միջոցները, որոնք կփոխանցվեն Բանկում Հաճախորդի հաշիվներին, ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ:

(1.12 կետը լրացվել է նոր պարբերությամբ 16.02.2022թ. Տնօրինության թիվ 29 որոշմամբ)

1.13. Ի կատարումն «Օտարերկրյա հաշիվների հարկման մասին» ԱՄՆ օրենքի (այսուհետ՝ FATCA) պահանջների՝ Բանկն իրավունք ունի միակողմանիորեն փակել Հաճախորդի հաշիվը, եթե վերջինիս տվյալներում Բանկի կողմից հայտնաբերվել են ԱՄՆ հարկատուի հատկանիշներ (այն է՝ ԱՄՆ քաղաքացիություն, ԱՄՆ ռեզիդենտություն, ԱՄՆ-ում մշտական գտնվելու թույլտվություն, ԱՄՆ-ում ծննդավայրի, ԱՄՆ-ում բնակության և/կամ փոստային հասցեի, ԱՄՆ տարածքում կոնտակտային հեռախոսահամար և/կամ ֆաքսի համարի, ԱՄՆ-ում գրանցման հասցե ունեցող անձին տրամադրված լիազորագրի կամ ստորագրության իրավունքի և ԱՄՆ-ում գտնվող հաշվին մեկ անգամից ավել փոխանցման իրականացման համար տրված Պարբերական վճարումների հանձնարարականի առկայություն) և Հաճախորդը հրաժարվում է Բանկին տրամադրել իր վերաբերյալ տեղեկատվությունը ԱՄՆ Հարկային ծառայությանը/ ԱՄՆ հարկային գործակալի գործառույթ իրականացնող անձին FATCA-ի պահանջների համաձայն:

1.14. Բանկն իրավունք ունի Հաճախորդի սպասարկման ընթացքում փաստաթղթերում կամ Հաճախորդի կողմից գործառնությունների իրականացման ընթացքում հիմնավոր կասկածներ հայտնաբերելու դեպքում կասեցնել գործառնության կատարումը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

1.15. Բանկն իրավունք ունի, առանց Հաճախորդի համաձայնության, երրորդ անձանց զիջել Հաճախորդի հանդեպ ունեցած իր իրավունքները, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

1.16. Բանկի գործառնական օրերը և ժամերը որոշվում են և հրապարակվում են Բանկի կողմից:

1.17. Սույն Կանոններով և համապատասխան Ծառայության պայմանագրի ուժով Բանկը հանդես է գալիս որպես Հաճախորդի հարկային գործակալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և չափերով, պայմանագրի ուժով Հաճախորդի ստացած եկամուտներից վճարման ենթակա հարկային և այլ պարտադիր վճարումների գծով:

1.18. Ծառայությունների մատուցման իմաստով «Բանկային օր» են համարվում այն օրացուցային օրերը, երբ ՀՀ տարածքում գործող բանկերը բաց են բանկային գործառնությունների համար: Գործարքների իրականացման ժամանակը Երևանի ժամանակն է:

2. ԲԱՆԿԻ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄԸ

2.1. Հաճախորդի և Բանկի միջև Հաղորդակցումը /այդ թվում՝ պարտադիր ներկայացման տեղեկատվություն և քաղվածքների տրամադրումը/ իրականացվում է Բանկի և Հաճախորդի միջև կնքված համապատասխան Ծառայության պայմանագրով Հաճախորդի կողմից ընտրված եղանակով:

2.2. Վարկերի մասով Հաճախորդի հետ Հաղորդակցումը /պարտադիր ներկայացման տեղեկատվություն և քաղվածքների տրամադրումը/ իրականացվում է գրավոր եղանակով՝ էլեկտրոնային կապի միջոցով: Բանկը առնվազն օրենքով նախատեսված պարբերականությամբ, Հաճախորդին տրամադրում է ամսական քաղվածք, պայմանագրով վերջինիս կողմից նշված էլեկտրոնային հասցեին, որտեղ արտացոլում է հաշվետու ժամանակաշրջանում հաշվով կատարված գործառնությունները: Քարտին վարկային գծի հնարավորություն տրամադրված լինելու դեպքում, անկախ քարտային հաշվի դեբետագրման կամ կրեդիտագրման հանգամանքից Բանկը Հաճախորդին տրամադրում է միասնական քաղվածք:

Վարկերի դեպքում Հաճախորդը գրավոր, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով ներկայացված դիմումի հիման վրա կարող է հրաժարվել տեղեկատվությունն էլեկտրոնային կապի միջոցով ստանալու իրավունքից՝ պարտադիր ներկայացման տեղեկատվությունը և քաղվածքները համապատասխան պայմանագրով առաջարկվող եղանակներից մեկով ստանալու պայմանով: Հաճախորդն իրավունք ունի իր գրավոր դիմումով փոփոխելու հաղորդակցման միջոցը ոչ ավելի, քան տարին մեկ անգամ, և այդ փոփոխությունը կիրառվում է գրավոր դիմումը բանկի կողմից ստանալուց 30 օր հետո իրականացվող հաղորդակցման նկատմամբ: Հաճախորդն իրավունք ունի տեղեկատվությունն ստանալու Բանկի տարածքում՝ առձեռն, որը չի բացառում նույն տեղեկատվությունն Հաճախորդին իր կողմից ընտրված տարբերակով տրամադրելու՝ Բանկի պարտականությունը:

(2.2 ենթակետի երկրորդ պարբերությունը փոփոխվել է Տնօրինության 21.12.2020թ. թիվ 381 որոշմամբ)

2.3. Հաշիվներ/ավանդների մասով Հաճախորդի հետ Հաղորդակցումը /պարտադիր ներկայացման տեղեկատվություն և քաղվածքների տրամադրումը/ իրականացվում է գրավոր եղանակով՝ էլեկտրոնային կապի միջոցով: Բանկը առնվազն օրենքով նախատեսված պարբերականությամբ, Հաճախորդին տրամադրում է ամսական քաղվածք, պայմանագրով վերջինիս կողմից նշված էլեկտրոնային հասցեին, որտեղ արտացոլում է հաշվետու ժամանակաշրջանում հաշվով կատարված գործառնությունները: Բանկը պարտավոր չէ Հաճախորդին հաշվի քաղվածք տրամադրել, եթե հաշվետու ժամանակաշրջանում Բանկը տվյալ հաշիվը չի դեբետագրել կամ կրեդիտագրել:

Հաշիվներ/ավանդների մասով Հաճախորդը իր գրավոր, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով ներկայացված դիմումի հիման վրա կարող է հրաժարվել սահմանված տեղեկատվությունը էլեկտրոնային կապի միջոցով ստանալու իրավունքից՝ պարտադիր ներկայացման տեղեկատվությունը և քաղվածքները համապատասխան պայմանագրով առաջարկվող եղանակներից մեկի միջոցով ստանալու պայմանով: Հաճախորդն իրավունք ունի իր գրավոր դիմումով փոփոխելու հաղորդակցման միջոցը ոչ ավելի, քան տարին մեկ անգամ, և այդ փոփոխությունը կիրառվում է գրավոր դիմումը բանկի կողմից ստանալուց 30 օր հետո իրականացվող հաղորդակցման նկատմամբ: Հաճախորդն իրավունք ունի տեղեկատվությունն ստանալու Բանկի տարածքում՝ առձեռն, որը չի բացառում նույն

տեղեկատվությունն Հաճախորդին իր կողմից ընտրված տարբերակով տրամադրելու՝ Բանկի պարտականությունը:

(2.3 ենթակետը փոփոխվել է 21.12.2020թ. Տնօրինության թիվ 381 որոշմամբ)

2.4. Հաճախորդի և Բանկի միջև հաղորդակցումը Հաճախորդի ընտրությամբ կարող է իրականացվել նաև «Առցանց հարթակով»: Եթե համապատասխան պայմանագրով ընտրվել է «Առցանց հարթակով» եղանակը, ապա Հաճախորդը պետք է գրանցվի Բանկի կայքում Անձնական էջի համակարգում, ինչից հետո կտրամադրվի Անձնական էջ անսահմանափակ մուտքի հնարավորություն: Անձնական էջում գրանցվելուց հետո Հաճախորդը կստանա SMS հավաստում, որ նա գրանցված է և այսուհետ ամսական պարբերականությամբ իր քաղվածքները հասանելի կլինեն Բանկի կայքում Անձնական էջում: Անձնական էջում Հաճախորդին հասանելի կլինեն միայն այն պրոդուկտների մասով ամսական քաղվածքները, որոնց ստացման համար Հաճախորդը ընտրել է «Առցանց հարթակով» տարբերակը: Քաղվածքները հասանելի կլինեն Հաճախորդին PDF ձևաչափով ոչ միայն դիտելու համար, այլ նաև Հաճախորդը կկարողանա դրանք ներբերոնել/պահպանել և ուղարկել իր էլեկտրոնային փոստի հասցեին:

(2.4 ենթակետը փոփոխվել է 21.12.2020թ. Տնօրինության թիվ 381 որոշմամբ)

2.5. Քաղվածքում արտացոլված գործարքների մասով անհամաձայնությունների դեպքում Հաճախորդն իրավունք ունի դիմել Բանկ: Բանկը ՀՀ օրենսդրությամբ և ներքին իրավական ակտերով նախատեսված ժամկետներում և կարգով ուսումնասիրում է և ներկայացնում իր դիրքորոշումը:

2.6. Վճարահաշվարկային համակարգերով կատարված չվավերացված գործարքների մասով, քաղվածը ստանալու պահից առնվազն 15 օրացուցային օրվա ընթացքում (պահանջը ներկայացնելու անհնարինությունը հավաստող փաստաթղթեր ներկայացնելու դեպքում քաղվածքը ստանալու պահից 55 (հիսունհինգ) օրվա ընթացքում) Հաճախորդը հնարավորություն ունի անհամապատասխանությունների մասին դիմում-պահանջ ներկայացնել Բանկին սահմանած ձևին համապատասխան: Նշված ժամկետներում գրավոր դիմում-պահանջ չներկայացնելու դեպքում Բանկն իրավունք ունի մերժել ներկայացված խնդրանքը՝ հիմք ընդունելով վճարահաշվարկային համակարգերի կանոնները, ԿԲ համապատասխան նորմատիվ ակտերը: Սույն կետը որևէ կերպ չի սահմանափակում Հաճախորդի իրավունքը վերջինիս կողմից քաղվածքի ճշտությունը վիճարկելու համար:

3. ԲԱՆԿԱՅԻՆ/ ՔԱՐՏԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐ/ԱՎԱՆԴ

3.1. Սույն Կանոններով նախատեսված պայմանները կիրառվում են ֆիզիկական անձ Հաճախորդի բոլոր բանկային/քարտային/Ավանդային հաշիվների (այսուհետ՝ Հաշիվ) նկատմամբ, եթե այլ բան ուղղակիորեն նախատեսված չէ, կոնկրետ Ծառայության պայմաններով:

3.2. Բանկի կողմից Հաճախորդի սպասարկումն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով ստորագրված պայմանագրերի հիման վրա, Բանկի ներքին իրավական ակտերով, սույն Կանոններով, Սակագներով: Բանկային/քարտային հաշվի սպասարկման պայմանագրերը, բացառությամբ ավանդային պայմանագրերի, կնքվում են մեկ բնօրինակից, որը պահվում է Բանկում՝ Հաճախորդին տրամադրելով հակիրճ տեղեկատվություն հաշվեհամարի վերաբերյալ: Հաճախորդի առաջին իսկ պահանջի դեպքում Բանկը անվճար տրամադրում է պայմանագրի պատճենը՝ իսկականի հետ ճիշտ է նշումով: Ավանդային պայմանագրերը կնքվում են երկու օրինակից:

3.3. Հաշվի բացման/ավանդի ներդրման համար Հաճախորդից պահանջվող փաստաթղթերն են՝ անձը հաստատող փաստաթուղթ, Հանրային ծառայության համարանիշ/սոցիալական քարտ/ Հանրային ծառայության համարանիշ/ սոցիալական քարտի բացակայության մասին տեղեկանք, Հաճախորդի ներկայացուցչի դեպքում՝ նաև պատշաճ ձևով վավերացված լիազորագիր կամ այլ

համապատասխան փաստաթուղթ: ՀՀ օրենսդրությամբ, կամ Բանկի ներքին իրավական ակտերով կարող են նախատեսվել նաև այլ անհրաժեշտ փաստաթղթեր:

Լիազորագրով Հաշվի բացման/ավանդի ներդրման առաջնային գործարք կատարելիս, Հաճախորդի լիազորագրում զետեղված անձը հաստատող փաստաթղթի և Հանրային ծառայության համարանիշ/սոցիալական քարտ/ Հանրային ծառայության համարանիշ/ սոցիալական քարտի բացակայության մասին տեղեկանքի տվյալների առկայությունը բավարար է, բացառությամբ եթե անհրաժեշտ է Հաճախորդի տվյալներում փոփոխություն կատարել:

(3.3 կետը լրացվել է նոր պարբերությամբ 16.02.2022թ. Տնօրինության թիվ 29 որոշմամբ)

3.4. Բանկում ինքնուրույն Հաշիվ բացել/ավանդ ներդնել, սպասարկվել և տնօրինել իրենց եկամուտները կարող են տասնչորս տարին լրացած ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ գործունակ քաղաքացիները, եթե Բանկի ներքին իրավական ակտով այլ բան նախատեսված չէ կոնկրետ Ծառայության համար:

3.5. Բանկը Հաճախորդի՝ Բանկի կողմից սահմանված/հաստատված պայմաններին, սույն կանոններին համապատասխանելու դեպքում, վերջինիս ցանկությամբ և համար բացում և սպասարկում է՝

3.5.1. բանկային հաշիվ (բանկային հաշվի բացման և սպասարկման պայմանագիրը կնքվում է անորոշ ժամկետով);

3.5.2. ժամկետային ավանդ;

3.5.3. քարտային հաշիվ (քարտային հաշվի բացման և սպասարկման պայմանագրի գործողության ժամկետը նշվում է քարտի դիմերեսին);

3.6. Հաճախորդի հաշիվներին առկա դրամական միջոցների նկատմամբ Բանկն ունի գրավի իրավունք (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի), որպես Բանկի հանդեպ Հաճախորդի բոլոր պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում,:

Հաշվարկա-դրամարկղային սպասարկում

3.7. Հաշիվ բացվում է ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար վերջիններիս նախընտրությամբ՝ Բանկի կողմից հրապարակված արժույթներով Սակագներով/համապատասխան պայմանագրով սահմանված ժամկետով:

3.8. Հաճախորդը ստորագրելով համապատասխան պայմանագիրը հանձնարարում է Բանկին և իրավունք տալիս անակցեպտ կարգով դրամական միջոցները դուրս գրել Բանկում գործող իր հաշիվներից հետևյալ դեպքերում՝

3.8.1. Հաշվին սխալմամբ (այդ թվում ծրագրային սխալի պատճառով) միջոցների մուտքագրման, ինչպես նաև գերաձախսի, դեբիտորական պարտքի առաջացման դեպքում,

3.8.2. ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր տեսակի հարկերի և այլ պարտադիր վճարների կատարման նպատակով և դեպքում,

3.8.3. Դատարանի վճռով, այդ թվում՝ կատարողական փաստաթղթերի հիման վրա դրամական միջոցների դուրսգրման հայտ ստանալու դեպքում,

3.8.4. Հաճախորդի կողմից Բանկի հանդեպ ունեցած պարտավորությունների չկատարման դեպքում,

3.8.5. Բանկի Սակագներով նախատեսված վճարների գանձման դեպքում,

3.8.6. նորմատիվ իրավական ակտերով նախատեսված այլ դեպքերում:

3.9. Հաճախորդը պարտավոր է Բանկի կողմից ծրագրային սխալի կամ այլ պատճառով իր հաշվին սխալմամբ մուտքագրված և օգտագործված դրամական միջոցները վերադարձնել հետ, ինչպես նաև Հաճախորդը համարվում է տեղեկացված, որ սխալմամբ մուտքագրված և իրեն չպատկանող դրամական միջոցները օգտագործելու դեպքում օգտագործված դրամական միջոցների նկատմամբ կհաշվարկվի Սակագներով նախատեսված տոկոսադրույք (առկայության դեպքում):

3.10. Հաշիվը և դրանում եղած դրամական միջոցները տնօրինելու Հաճախորդի իրավունքները կարող են սահմանափակվել դատարանի վճռով, դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների և հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա: Առանց Հաճախորդի կարգադրության հաշվից դրամական միջոցների բռնագանձումը կարող է իրականացվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների և հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա, սույն պայմաններով, ինչպես նաև համապատասխան պայմանագրով նախատեսված դեպքերում և կարգով:

(3.10 կետը լրացվել է Տնօրինության թիվ 6 առ 16.01.2023թ. որոշմամբ):

3.11. Հաճախորդն իր հաշվից դրամական միջոցների բռնագանձման փաստի վերաբերյալ տեղեկացվում է տվյալ հաշվի քաղվածքի միջոցով՝ իր կողմից նախապես ընտրված հաղորդակցման /քաղվածքի ստացման/ եղանակով և կարգով:

3.12. Հաճախորդն ինքնուրույն տնօրինում է իր Հաշվում առկա դրամական միջոցները: Բանկն իրավունք չունի Հաշվում եղած դրամական միջոցները տնօրինելու Հաճախորդի իրավունքները սահմանափակել, բացի օրենքով, Կանոններով և համապատասխան պայմանագրերով նախատեսված դեպքերի:

3.13. Հաշվով գրավոր գործարքներն իրականացվում են Հաճախորդի կողմից կամ անունից պատշաճ կերպով լրացված Վճարման հանձնարարականների հիման վրա: Հաշվից կանխիկ դրամական միջոցների մուտքագրումները և/կամ ելքագրումներն իրականացվում են մուտքային/ելքային դրամարկղային ադորրագրերի հիման վրա: Հաճախորդի կողմից նշված անդորրագրերի վրա դրված ստորագրությունը հանդիսանում է հաշվով կատարված գործառնության հավաստիացում:

3.14. Բանկը կատարման է ընդունում Հաճախորդի Վճարման հանձնարարականը միայն Հաշվում բավարար միջոցների առկայության պարագայում: Միջոցները դուրս են գրվում հաճախորդի Վճարման հանձնարարականների և դուրսգրման այլ փաստաթղթերի՝ Բանկ մուտք լինելու օրացուցային հաջորդականությամբ, իսկ անբավարարության դեպքում՝ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

3.15. Այն դեպքում, երբ Հաճախորդի Հաշվին առկա գումարները բավարար չեն Վճարման հանձնարարականը կատարելու և դրա համար սահմանված վճարը գանձելու կամ արտարժույթի փոխանակման գործարքն իրականացնելու համար, Վճարման հանձնարարականը վերադարձվում է Հաճախորդին առանց կատարման, ընդ որում՝ Բանկը նման դեպքերում պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կարգադրությունը չկատարելու հետևանքով իր կրած վնասների համար:

3.16. Հաճախորդն իրավունք ունի չեղյալ համարել իր կողմից ներկայացված վճարման հանձնարարականը՝ ամբողջությամբ փոխհատուցելով այդ կապակցությամբ Բանկի կրած վնասները:

3.17. Վճարման հանձնարարականներին վերաբերող այն դրույթները, որոնք ներառված չեն Պայմաններում, կարգավորվում են ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով, «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքով և ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում դրամական փոխանցումների կատարման առավելագույն ժամկետների վերաբերյալ» կարգով, ինչպես նաև Բանկի կողմից սահմանված այլ ներքին իրավական ակտերով:

3.18. Հաշվի օրական մնացորդի նկատմամբ Բանկը կարող է հաշվեգրել տոկոս՝ տվյալ ժամանակահատվածի համար Բանկում գործող Սակագներով և պայմանագրով սահմանված չափով, ընդ որում՝ օրական մնացորդ է համարվում տվյալ գործառնական օրվա ավարտին Հաշվի փաստացի մնացորդը: Հաշվում առկա գումարի վրա տոկոսները հաշվարկվում են գումարը Բանկ մուտք լինելու օրվանից մինչև այն Հաճախորդին վերադարձնելու կամ Հաճախորդի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրն ընկած ժամանակահատվածի օրացուցային օրերի համար:

3.19. Բանկը կլորացնում է կանխիկ վճարվող դրամական միջոցները հետևյալ կարգով.

- եթե գումարի վերջին նիշը մեծ է կամ հավասար է 5 (հինգ) ՀՀ դրամից, գումարները կլորացվում է մինչև տասը.
- եթե գումարի վերջին նիշը 5 (հինգ) ՀՀ դրամից փոքր է, ապա գումարը կլորացվում է զրոյի:

3.20. Արտարժույթի մանրադրամների (մետաղադրամների) բացակայության դեպքում գումարները կլորացվում են մինչև ամենափոքր թղթադրամը, իսկ մնացած գումարը տրամադրվում է ՀՀ դրամով տվյալ պահին ՀՀ արժույթային շուկայում տվյալ արտարժույթի նկատմամբ ձևավորված միջին փոխարժեքով, որը հրապարակվում է ՀՀ ԿԲ կողմից պաշտոնական կայքում:

3.21. Բանկը հաշվարկա-դրամարկղային վճարը Հաշվից գանձում է ծառայության մատուցման պահին տվյալ գործառնության համար գործող Սակագներով ծառայության մատուցման հետ միաժամանակ:

3.22. Հաշվի տարեկան սպասարկման առաջին տարվա համար նախատեսված վճարը Բանկի Սակագներով սահմանված չափով, Բանկի կողմից գանձվում է առաջին տարվա համար Հաշվի բացման/պայմանագրի կնքման պահին: Յուրաքանչյուր հաջորդող պայմանագրային տարվա վճարը գանձվում է Հաշվից տվյալ տարվա առաջին ամսվա վերջին պայմանագրային օրը:

3.23. Քարտի տարեկան սպասարկման առաջին տարվա համար նախատեսված վճարը Բանկի Սակագներով սահմանված չափով, Բանկի կողմից գանձվում է ամբողջությամբ պայմանագրի կնքման պահին՝ վճարման տարեկան եղանակի ընտրության դեպքում: Յուրաքանչյուր հաջորդող պայմանագրային տարվա վճարը գանձվում է հաշվից, տվյալ տարվա առաջին ամսվա առաջին աշխատանքային օրը՝ առանց լրացուցիչ թույլատվության: Քարտի սպասարկման վճարի ամսական վճարման եղանակի ընտրության դեպքում՝ առաջին ամսվա վճարը գանձվում է պայմանագրի կնքման պահին, իսկ յուրաքանչյուր հաջորդող օրացույցային ամսվա համար առաջին աշխատանքային օրը:

3.24. Սակագներով սահմանված միջնորդավճարները կամ այլ ծառայության վճարները, բացառությամբ տվյալ Հաշվի պայմանագրով նախատեսված դեպքերի, առաջնահերթ անակցեպտ կարգով գանձվում են Հաշվապահի՝ ՀՀ դրամով գործարքի առարկա հանդիսացող հաշվից/ներից, վերջինիս/ներիս վրա միջոցների բացակայության կամ անբավարարության դեպքում՝ Հաշվապահի դոլարային հաշվից/ներից, այնուհետև եվրոյով հաշվից/ներից, այնուհետև ռուբլով հաշվից/ներից, իսկ վերջինիս/ներիս վրա միջոցների բացակայության կամ անբավարարության դեպքում՝ առկայության դեպքում Հաշվապահի այլ արտարժույթային հաշվից/ներից, որոնց արդյունքում արտարժույթի՝ ՀՀ դրամի փոխարկումն իրականացվում է փոխարկման պահին ՀՀ արժույթային շուկայում ձևավորված միջին փոխարժեքով, որը հրապարակվում է ՀՀ ԿԲ կողմից պաշտոնական կայքում: Ընդ որում միևնույն արժույթով հաշիվներից միջնորդավճարների գանձման նախապատվությունը տրվում է ավելի վաղ բացված հաշվին:

3.25. Բանկը իրականացնում է նաև Հաշվի արժույթից տարբերվող այլ արժույթներով կատարվող գործառնություններ: Հաշվի արժույթից տարբերվող արժույթով հաշվին դրամական միջոցների մուտքի և ելքի դեպքում փոխարկման փոխարժեքը Բանկի կողմից սահմանվում է փոխարկման գործառնության իրականացման ամսաթվի դրությամբ գործող Բանկի արժույթային փոխանակման գործառնությունների փոխարժեքով՝ փոխարկումը կատարվում է.

- արժույթային հաշվից տարանցիկ հաշվին փոխանցվող գումարների փոխարկման դեպքում՝ գործառնության իրականացման ամսաթվի դրությամբ գործող Բանկի անկանխիկ արժույթային փոխանակման գործառնությունների փոխարժեքով.
- տարանցիկ հաշվից գործարքը կատարելու համար փոխարկման դեպքում՝ գործառնության իրականացման ամսաթվի դրությամբ գործող՝ Բանկի անկանխիկ արժույթային փոխանակման գործառնությունների փոխարժեքով:

3.26. Բանկի կողմից ակցեպտավորված վճարման հանձնարարականի գումարը Հաշվապահի Հաշվին կրեդիտագրվելու մասին Բանկը Հաշվապահին տեղեկացնում է քաղվածքի տրամադրման

միջոցով՝ Բանկի և Հաճախորդի միջև կնքված պայմանագրով նախատեսված քաղվածքի տրամադրման պայմանների և ժամկետների համաձայն:

3.27. Ի օգուտ Հաճախորդի Բանկում ներբանկային, միջբանկային կամ միջազգային փոխանցումների առկայության պարագայում Բանկի պարտավորությունն է նշված դրամական միջոցների կրեդիտագրումը Հաճախորդի հաշվին: Վճարման հանձնարարականի նպատակ դաշտում նկարագրված այլ գործողությունների (այդ թվում՝ վարկի վաղաժամկետ մարում կամ տոկոսի մարում) իրականացման համար անհրաժեշտ է Հաճախորդի կամ վերջինիս ներկայացուցչի համապատասխան հանձնարարականը Բանկին:

3.28. Հաշվի պայմանագրի լուծումը հիմք է Հաճախորդի Հաշիվը փակելու համար: Հաշվում առկա դրամական միջոցների մնացորդը տրվում է Հաճախորդին կամ Հաճախորդի ցուցումով փոխանցվում է այլ Հաշվի՝ Հաճախորդի համապատասխան գրավոր դիմումը ստանալուց ոչ ուշ քան 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում:

3.29. Հաճախորդի կողմից ներկայացված պայմանագիրը/երը լուծելու և Հաշիվը փակելու վերաբերյալ դիմումը Բանկի կողմից ենթակա չէ կատարման, քանի դեռ չեն վերացել Հաշվով գործառնությունների չդադարեցման համար հիմք հանդիսացող հանգամանքները:

3.30. Բանկն իրավունք ունի միակողմանիորեն դադարեցնել բանկային հաշվի սպասարկումը և փակել հաշիվը առանց Հաճախորդի համաձայնության՝

- եթե Հաճախորդը թույլ է տվել Կանոնների և Սակագների, ինչպես նաև Բանկի նկատմամբ ստանձնած այլ պարտավորությունների խախտում,
- եթե հիմքեր կան ենթադրելու, որ հաշիվն օգտագործվում է որևէ անօրինական նպատակով,
- եթե Հաճախորդի հաշվին առկա դրամական միջոցները 12 (տասներկու) հաջորդական ամիսների ընթացքում չեն բավականացնում հաշիվը սպասարկելու համար Սակագներով սահմանված վճարները գանձելու համար կամ հաշվով չեն իրականացվել որևիցե գործարքներ:

3.31. Բանկը հնարավորություն է ընձեռում Հաճախորդներին ստանալ իրենց հաշիվներին կատարված մուտքերի և ելքերի վերաբերյալ SMS հաղորդագրություններ /Սակագներով նախատեսված դեպքում անվճար/՝ այդպիսով հնարավորինս կանխելով հաշիվներում առկա դրամական միջոցների ապօրինի օգտագործումը: Վերոնշյալ SMS հաղորդագրությունը ստանալուն պես պետք է հավաստիանալ, որ գործարքը կատարվել է հենց Հաճախորդի կամ լիազորված անձի գիտությամբ, կարգադրությամբ կամ մասնակցությամբ: Ապօրինի օգտագործման դեպքում անհրաժեշտ է տեղեկացնել Բանկին՝ զանգահարելով (+37410) 560 708 կամ 87-87 շուրջօրյա հեռախոսահամարով: Ապօրինի օգտագործման մասին տեղեկացնելու դեպքում հաշիվը կարգելափակվի և Բանկը Հաճախորդի դիմումի հիման վրա կուսումնասիրի գործարքի մանրամասները և, անհրաժեշտության դեպքում, կսկսի գործարքի բողոքարկման գործընթացը: Ընդ որում, հաշվով իրականացված գործարքների վերաբերյալ SMS հաղորդագրությունների ստացման ծառայությունն ակտիվացրած հաճախորդների կողմից SMS հաղորդագրություն չստանալու պարագայում Բանկը չի կրում պատասխանատվություն, եթե այն ուղարկվել է Բանկի կողմից, սակայն չի հասել հասցեատիրոջը՝

- օպերատորի կողմից տեխնիկական թերության կամ այլ պատճառով,
- հաճախորդի կողմից հեռախոսահամարը փոխելու և Բանկին այդ մասին չտեղեկացնելու պատճառով:

3.32. Բանկը, մինչև Հաճախորդի կողմից Հաշվի պայմանագրի ստորագրումը վերջինիս ծանոթացնում է «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի ավանդների հատուցման երաշխավորման պայմաններին և կարգին:

Բանկի Հաճախորդների բանկային և քարտային հաշիվների համայնում Բանկի պաշտոնական կայքի միջոցով

3.33. Բանկին պատկանող ինտերնետային կայքի միջոցով (այսուհետ՝ Կայք-էջ), որտեղ կարելի է մուտք գործել նաև Բանկի պաշտոնական՝ www.vtb.am կայքում տեղադրված համապատասխան կոճակը սեղմելով, հնարավոր է մուտք գործել դրամական փոխանցումների իրականացման VTB-in ծառայության էջ ծառայության շրջանակներում գործող վճարային քարտերից գումար փոխանցել Բանկի Հաճախորդի Բանկում առկա բանկային կամ քարտային հաշվին:

3.34. Փոխանցումը չի կարող կատարվել, եթե վճարային քարտերի դարձերեսին՝ ստորագրության համար նախատեսված դաշտում, նշված չէ CVC2 եռանիշ ծածկագիրը:

3.35. Փոխանցման կատարման արժույթ կարող է լինել միայն ՀՀ դրամը (AMD): Այն դեպքում, երբ Կայք-էջում նշվել է ԱՄՆ դոլլարի (USD), Եվրոի (EUR) կամ ՌԴ ռուբլու (RUR) հաշվի Կայք-էջում ՀՀ դրամով մուտքագրված փոխանցման գումարը կփոխակերպվի Բանկում սահմանված անկանխիկ գործարքների փոխարժեքով, վերջինս Հաճախորդի հաշվին մուտքագրվելու (քաղվածքում արտացոլելու) պահին: Բազմարժույթային քարտի դեպքում փոխանցման գումարը փոխանցվում է դրամային հաշվին:

3.36. Եթե վճարողի քարտային հաշվի արժույթը տարբերվում է Հաճախորդի բանկային/քարտային հաշվի արժույթից և/կամ փոխանցման արժույթից, ապա վճարողի քարտը թողարկված բանկի կողմից վճարային համակարգերի կանոններով կարող են գանձվել արժույթների փոխարժեքով պայմանավորված և փոխանակումից բխող այլ վճարներ, որոնք չեն գանձվում հոգուտ Բանկի:

3.37. Վճարողը կարող է կատարել փոխանցում, եթե Բանկն ունի դրա կատարման տեխնիկական հնարավորությունը: Տեխնիկական հնարավորության բացակայության դեպքում Բանկն իրավունք ունի մերժել փոխանցման իրականացումը՝ այդ մասին տեղեկացնելով Կայք-էջի միջոցով:

3.38. Վճարողը պարտավոր է ճշգրիտ լրացնել Հաճախորդի հաշվի/քարտի համարը: Եթե հաշվի/քարտի համարը ճիշտ է լրացված, Կայք-էջում արտացոլվելու է Հաճախորդի գաղտնագրված անունը և ազգանունը: Դրանք ուսումնասիրելուց հետո վճարողը ինքնուրույն և իր ռիսկով որոշում է շարունակել կամ դադարեցնել փոխանցման կատարումը՝ գիտակցելով, որ գոյություն ունի չնչին հավանականություն, որ Հաճախորդի հաշվի/քարտի տվյալների սխալ լրացման արդյունքում կարող է տեղի ունենալ համընկնում (զուգադիպություն) Բանկի՝ մեկ այլ Հաճախորդի գաղտնագրված անվան ու ազգանվան հետ, ինչի արդյունքում գումարը կարող է ստանալ այլ անձ: Նման կամ ցանկացած այլ դեպքում վճարողը գիտակցում է, որ առանց գումարը ստացած անձի համաձայնության Բանկն իրավունք չունի վերադարձնել սխալմամբ փոխանցված որևէ գումար:

3.39. Վճարողի կողմից VTB-in ծառայության օգտագործմամբ Փոխանցում իրականացնելու ընթացքում առաջացած խնդիրների (քարտային հաշվից կրկնակի գանձումներ, փոխանցման կատարման ուշացում և այլն) դեպքում վճարողը պարտավոր է դիմել քարտն իրեն տրամադրված թողարկող բանկին, բացառությամբ այն դեպքերի, երբ խնդիրը կապված է անմիջապես Բանկի կողմից մատուցվող VTB-in ծառայության հետ, օրինակ՝ VTB-in ծառայության անհասանելիության պարագայում:

3.40. VTB-in ծառայության միջոցով փոխանցումների անվտանգությունն ապահովվելու համար կիրառվում է 3D Secure տեխնոլոգիան Բանկի սահմանած կանոններին համապատասխան՝ վճարողի կողմից իր քարտը թողարկող բանկի կողմից վճարողին տրամադրված միանգամյա գաղտնաբառի կիրառումամբ: Քանի որ գործնականորեն անհնար է ապահովել բացարձակ անվտանգություն ինտերնետ միջավայրում գործարքներ իրականացնելիս և նման միջավայրում գործարքներ կատարելուց բխող բոլոր հնարավոր ռիսկերը կրում է վճարողը, բացառությամբ այն դեպքերի երբ ռիսկը առաջանում է Բանկի և/կամ վճարողի քարտը թողարկող բանկի մեղքով:

3.41. Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում ինտերնետային միջավայրում երրորդ անձանց կողմից վճարողի տվյալների հասանելիության կամ ապօրինի օգտագործման համար:

Փոխանցումների օրական առավելագույն քանակը, փոխանցման գումարի առավելագույն և նվազագույն չափը, փոխանցման դիմաց գանձվող միջնորդավճարի չափը, փոխանցման իրականացման ժամկետները և այլ պայմանները առավել մանրամասն սահմանվում են VTB-in ծառայության մատուցման պայմաններով, որոնք զետեղված են Կայք-էջում: Փոխանցման կատարման համար վճարողը պարտավոր է լրացնել Կայք-էջում տեղադրված փոխանցման համար անհրաժեշտ տեղեկատվությունը ճշգրիտ և ամբողջությամբ և ակցեպտավորել VTB-in ծառայության մատուցման պայմաններն ու սույն Կանոնները:

(3 գլուխը լրացվել է 16.02.2022թ. Տնօրինության թիվ 29 որոշմամբ)

«ՎՏԲ - Հայաստան Բանկ» ՓԲԸ-ում <<դրամական փոխանցումներ հեռախոսահամարի միջոցով»

3.42. «Դրամական փոխանցումներ հեռախոսահամարի միջոցով» ծառայությունը հնարավորություն է տալիս «ՎՏԲ - Հայաստան Բանկ» ՓԲԸ ֆիզիկական անձ հաճախորդներին միայն բջջային հեռախոսահամար տրամադրելով ստանալ էլեկտրոնային հարթակների միջոցով ՌԴ-ից ուղարկված փոխանցումներ՝ իրենց քարտին/բանկային հաշվին:

3.43. «Դրամական փոխանցումներ հեռախոսահամարի միջոցով» ծառայության կոնկրետ էլեկտրոնային հարթակներով իրականացվող գործարքների պայմաններն ու սակագները զետեղված են Բանկի պաշտոնական կայքում:

(3 գլուխը լրացվել է 16.06.2022թ. Տնօրինության թիվ 158 որոշմամբ)

4. ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՀԱՇԻՎ

4.1. Բանկը ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար բացում է Կուտակային հաշիվ/այսուհետ՝ ԿՀ/, որն ընձեռում է հնարավորություն կուտակել գումարներ և կուտակված գումարի դիմաց ստանալ տոկոսներ՝ ցանկացած պահի դրամական միջոցները օգտագործելու հնարավորությամբ:

4.2. ԿՀ բացվում է անժամկետ (Պայմանագիրը կնքվում է անորոշ ժամկետով) և Հաճախորդը ցանկացած պահի կարող է գրոյացնել և փակել ԿՀ:

4.3. Բանկը ԿՀ դրամական միջոցների մնացորդին հաշվարկում և վճարում է տոկոսներ: Հաշիվը փակելու դեպքում նախկինում վճարված տոկոսները վերադարձման ենթակա չեն: ԿՀ մնացորդի նկատմամբ հաշվարկված տոկոսների հաշվեգրման կարգն և ԿՀ ամբողջական պայմանները նկարագրված են «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ ֆիզիկական անձանց Կուտակային հաշվի Տեղեկատվական ամփոփագրում, ինչպես նաև Բանկի հետ կնքված պայմանագրում:

4.4. ԿՀ տարեկան տոկոսադրույքները սահմանվում են Բանկի Սակագներով:

4.5. ԿՀ նկատմամբ կիրառվում են նաև Հաշվի բացման և սպասարկման ընդհանուր պայմաններն այնքանով, որքանով, որ չեն հակասում համապատասխան Տեղեկատվական ամփոփագրում զետեղված պայմաններին:

5. ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇԻՎՆԵՐ

5.1. Բանկը «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության որոշման շրջանակում Լիազոր մարմնի կողմից տրամադրված Վճարման ցուցակում ներառված Հաճախորդի/Շահառուի տվյալների հիման վրա Հաճախորդի անվամբ, առանց Հաճախորդի ներկայության, ավտոմատ եղանակով բացում է Միանվագ դրամական վճարների հաշիվ/Բանկային Հաշիվ/ և այդ հաշվին է մուտքագրում ՀՀ պետական բյուջեից փոխանցված Միանվագ դրամական վճարի գումարը:

5.2. Միանվագ դրամական վճարների հաշվին են մուտքագրվում Երեխայի ծննդյան միանվագ նպաստի գումարները, Չաշխատող անձի մայրության նպաստի գումարները և այլ միանվագ դրամական վճարները, որոնք սահմանվում են ՀՀ կառավարության 12.03.2020թ. թիվ 287-Ն որոշմամբ:

5.3. Հաճախորդը հաշվի տիրոջ իրավունքներ է ձեռք բերում և կարող է տնօրինել Միանվագ դրամական վճարի գումարները միայն Բանկի հետ Բանկային հաշվի բացման և սպասարկման Պայմանագիր կնքելուց հետո /այսուհետ Հաշիվ/:

5.4. Բանկում Հաճախորդը կարող է ունենալ միայն մեկ Միանվագ դրամական վճարի հաշիվ, որին հաշվեգրվում են Միանվագ դրամական վճարների գումարները:

5.5. Միանվագ դրամական վճարների հաշվին մուտքագրվում է բացառապես Միանվագ դրամական վճարի գումարը:

5.6. Միանվագ դրամական վճարների հաշվի գումարները կարող են կանխիկացվել ամբողջությամբ կամ մասամբ:

5.7. Հաճախորդի անվամբ բացված Միանվագ դրամական վճարների հաշվի տնօրինելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հաճախորդի և Բանկի միջև կնքված պայմանագրով, Բանկային հաշիվների սպասարկման պայմաններով և Բանկային հաշիվների սպասարկման ամփոփագրով:

5.8. Միանվագ դրամական վճարների հաշվին մուտքագրված միանվագ դրամական վճարի գումարը վերադարձվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, եթե Հաճախորդը կամ այլ անձը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված 12-ամսյա ժամկետում (մինչև վճարման ցուցակը, այդ թվում՝ բանկային հաշիվ բացելու համար անհրաժեշտ տվյալները բանկին փոխանցելու ամսվանից հաշված՝ 12-րդ ամսվա վերջին աշխատանքային օրը) չի ներկայացրել պահանջ:

Սույն գլխի շրջանակում Այլ անձ է համարվում անձը, ով Բանկ է ներկայացրել Հաճախորդի/շահառուի տված՝ նոտարական կարգով վավերացված կամ դրան հավասարեցված՝ պահանջ (բանկային հաշվին առկա միջոցները դուրս գրելու կարգադրություն) ներկայացնելու վերաբերյալ լիազորագիր կամ անձ, ում տվյալները Բանկին տրամադրում է Լիազոր մարմինը՝ Հաճախորդի/շահառուի անվամբ բացված հաշիվ մուտքագրված միանվագ դրամական վճարի գումարը նրան վճարելու համար:

5.9. Միանվագ դրամական վճարների հաշվի նկատմամբ կիրառվում են նաև Հաշվի բացման և սպասարկման պայմաններն ու Կանոնները:

6. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓԱԹԵԹԻ ՀԱՇԻՎ (ՍՈՑՀԱՇԻՎ)

6.1. Բանկը ՀՀ Կառավարության որոշմամբ հաստատված Սոցիալական փաթեթի հատկացման կարգի դրույթների շրջանակում Հաճախորդի ցանկությամբ բացում է սոցիալական փաթեթի հատուկ հաշիվ:

6.2. Հաճախորդին չի թույլատրվում կատարել Սոցհաշվից գումարների կանխիկացում, բացառությամբ հետևյալ դեպքերի՝

6.2.1 Եթե ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Հաճախորդը ստանում է կենսաթոշակ ստանալու իրավունք և ներկայացնում է Բանկ համապատասխան կենսաթոշակային գրքույկ: Ընդ որում, միևնույն ժամանակ անհրաժեշտ է, որ Հաճախորդի սոցհաշվին բացակայեն սոցփաթեթի հատկացումներ վերջին սոցհատկացումն ստանալու պահից առնվազն 3 ամսվա ընթացքում:

6.2.2. Եթե «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի հիման վրա որպես կատարված սոցիալական վճարների փոխհատուցում սոցհաշվին ընթացիկ տարվա հունվարի 1-ի դրությամբ

առկա մնացորդը կանխիկացնելու նպատակով Հաճախորդը ներկայացնում է դիմում նախորդ տարվա ընթացքում Հաճախորդի կողմից ստացման ենթակա աշխատավարձից և ձեռնարկատիրական եկամուտներից հաշվարկված ու փաստացի մասնակիցների ռեեստր վարողին փոխանցված սոցիալական վճարների չափի վերաբերյալ հարկային մարմնից տեղեկատվություն ստանալու մասին (հարկային մարմնից ստացված տեղեկատվության հիման վրա որոշվում է կանխիկացման ենթակա գումարի չափը):

6.2.3 Հաճախորդի մահվան դեպքում՝ ժառանգի կողմից համապատասխան փաստաթղթի ներկայացման պարագայում:

6.2.4. ՀՀ Կառավարության որոշմամբ այլ դեպքերի սահմանման պարագայում:

6.3 Սոցիալական փաթեթից օգտվելու ընթացքում Հաճախորդը կարող է Սոցհաշվից կատարել անկանխիկ եղանակով փոխանցումներ միայն ՀՀ Կառավարության կողմից ներկայացված համապատասխան ցանկում ներառված շահառուներին՝ սոցիալական փաթեթի շրջանակներում հատկացվող ծառայությունների դիմաց վճարման նպատակով:

6.4 Հաճախորդը կարող է Սոցհաշվի վերաբերյալ ստանալ Սոցհաշվի բացման, Բանկի հանդեպ սոցիալական փաթեթի շրջանակներում պարտավորությունների, և այլ գործառնությունների վերաբերյալ տեղեկանք, ընդ որում, սոցիալական փաթեթի սպասարկման շրջանակներում տեղեկանքների տրամադրումը Բանկի կողմից իրականացվում է անվճար:

6.5 Հաճախորդը կարող է փոխել իր Սոցհաշիվը սպասարկող Բանկը միայն նոր բյուջետային տարում՝ նախքան սոցիալական փաթեթի ընթացիկ տարվա առաջին գումարի փոխանցումը:

6.6 Հաճախորդը, ստորագրելով Սոցհաշվի պայմանագիրը, տալիս է իր համաձայնությունը Սոցիալական փաթեթի հատկացման կարգով սահմանված սոցիալական փաթեթի շրջանակներում բացված Հատուկ հաշվի մասով՝

6.6.1. Բանկային գաղտնիքի մասին ՀՀ օրենքով սահմանված բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը տրամադրելու վերաբերյալ:

6.6.2. Աշխատանքից ազատվելու կամ այլ պատճառով սոցիալական փաթեթից օգտվելու իրավունքի դադարման դեպքում Հաճախորդի գործատուի պահանջով վերջինիս տրամադրել տվյալ պահին իր պարտավորությունների վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները:

6.7 Հաճախորդը պարտավորվում է Բանկին տրամադրել սոցիալական փաթեթի ծառայությունների ձեռքբերման համար հիմք հանդիսացող համապատասխան կազմակերպության հետ կնքված պայմանագրի կրկնօրինակը (բացառությամբ ՀՀ Կառավարության որոշմամբ հաստատված Սոցիալական փաթեթի հատկացման կարգով նախատեսված դեպքերի):

6.8 Սոցիալական փաթեթի հաշվի նկատմամբ կիրառվում են նաև Հաշվի բացման և սպասարկման պայմաններն այնքանով, որքանով, որ չեն հակասում ՀՀ Կառավարության որոշմամբ հաստատված Սոցիալական փաթեթի հատկացման հաշվի բացման և սպասարկման հատուկ պայմաններին:

7. ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐ

7.1. Բանկը ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանցից ընդունում է դրամական միջոցներ /այսուհետ՝ Ավանդ/ ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար/ԲԴ՝ ռուբլի արժույթներով, և պարտավորվում տվյալ ավանդատեսակի համար սահմանված պայմաններով և կարգով վերադարձնել Հաճախորդի կողմից ներդրված Ավանդի գումարը և հասանելիք տոկոսագումարները: Բանկն իր ներքին իրավական ակտերով կարող է սահմանել այլ արժույթով ավանդ:

7.2. Հաճախորդը Բանկում կարող է ներդնել ժամկետային ավանդ տվյալ պահին Բանկում գործող ժամկետային ավանդների կոնկրետ տեսակների համար սահմանված պայմաններով և

տոկոսադրույքներով: Բանկը պարտավորվում է Ավանդի գումարը վերադարձնել Հաճախորդի առաջին իսկ պահանջով:

7.3. Ավանդատեսակի պայմանները (ներառյալ Ավանդի ժամկետը, տարեկան տոկոսադրույքը, գումարը, արժույթը և այլ հիմնական պայմանները) արտացոլվում են տվյալ ավանդատեսակի տեղեկատվական ամփոփագրում (այսուհետ՝ Ամփոփագիր), ինչպես նաև Պայմանագրում: Ընդ որում, Պայմանագրում նշված տոկոսադրույքը Ավանդային պայմանագրի գործողության ժամկետում ենթակա չէ փոփոխման, բացառությամբ կոնկրետ ավանդատեսակների, որոնց տոկոսադրույքների փոփոխման կարգը սահմանվում է Տեղեկատվական ամփոփագրով:

7.4. Ավանդի դիմաց տոկոսների վճարման կարգը և եղանակը նախատեսվում է համապատասխան պայմանագրում, ինչպես նաև համապատասխան Տեղեկատվական ամփոփագրում:

7.5. Ավանդին/ից կարող են թույլատրվել լրացուցիչ մուտքագրումներ և ելքագրումներ համաձայն տվյալ ավանդատեսակի Տեղեկատվական ամփոփագրի:

7.6. Բանկը կարող է սահմանել Ավանդի գումարի ներդրման, մուտքագրումների, ելքագրումների նվազագույն և առավելագույն չափ յուրաքանչյուր ավանդատեսակի համար:

7.7. Հաշվի բացակայության դեպքում Ավանդի պայմանագրի կնքման հետ զուգահեռ կնքվում է նաև Բանկային հաշվի բացման և սպասարկման պայմանագիր և բացվում Հաշիվ, որի միջոցով էլ կատարվելու են Ավանդային հաշվին կատարվող մուտքագրումները, համալրումները և ելքագրումները:

7.8. Ավանդը Հաճախորդի կողմից տնօրինվում է ինքնուրույն: Բանկը կարող է օգտագործել Ավանդի գումարը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.9. Հաճախորդի կողմից ներդրված ավանդի հետ կապված գործարքների (ձևակերպում, ժամկետից շուտ լուծում, մարում, գումարի նվազեցում, ավանդի գրավով վարկի ձևակերպում) մասին տեղեկացված լինելու նպատակով Բանկը կարող է համապատասխան գործարքի վերաբերյալ անվճար sms հաղորդագրություն ուղարկել՝ Հաճախորդի կողմից Բանկին նախապես տրամադրած բջջային հեռախոսահամարին:

Ավանդի դիմաց տոկոսներ հաշվարկելու և վճարելու կարգը

7.10. Ավանդի դիմաց հաշվեգրված տոկոսագումարը՝ պայմանադրված ժամկետին համապատասխան փոխանցվում է Բանկում բացված Հաճախորդի Բանկային հաշվին (եթե առկա չէ Հաճախորդի այլ հանձնարարական):

7.11. Ավանդի գումարի վրա տոկոսները հաշվարկվում են ավանդը Բանկ մուտք լինելու օրվանից մինչև այն ավանդատուին վերադարձնելու կամ ավանդատուի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրն ընկած ժամանակահատվածի օրացուցային օրերի համար: Տոկոսագումարի հաշվարկների ժամանակ հիմք է ընդունվում տարվա փաստացի օրերի քանակը:

7.12. Ժամկետից շուտ Ավանդը վերադարձնելու դեպքում տոկոսները հաշվարկվում և վճարվում են համաձայն ավանդային պայմանագրի և ավանդատեսակի Ամփոփագրի:

Ավանդային պայմանագրի կնքումը և երկարաձգումը

7.13. Ավանդի Պայմանագիրը ձեռք է բերում իրավական ուժ՝ Ավանդի գումարը ավանդային հաշվին մուտքագրելու պահից:

7.14. Ավանդի Պայմանագիրը կնքվում և կազմվում է 2 բնօրինակից: Հաճախորդին տրամադրվում է Բանկային ավանդի Պայմանագրի 1 բնօրինակ:

7.15. Ավանդը Ավանդի Պայմանագրով պայմանադրված ժամկետում չպահանջվելու դեպքում Ավանդային պայմանագիրը երկարաձգվում է նույն ժամկետով և արժույթով երկարաձգման պահին տվյալ ավանդատեսակի համար գործող պայմաններով, իսկ տարեկան տոկոսադրույքը սահմանվում է երկարաձգման պահին տվյալ ավանդատեսակի համար Բանկում գործող տոկոսադրույքը:

7.16. Հաճախորդի ցանկությամբ Ավանդի ժամկետի ավարտից հետո Ավանդը կարող է չերկարաձգվել, այդ դեպքում Ավանդի գումարը հաշվեգրված տոկոսների հետ միասին փոխանցվում է Ավանդատուի բանկային հաշվին (եթե առկա չէ Հաճախորդի այլ հանձնարարականը):

7.17. Տվյալ ժամկետային ավանդի ներգրավումը Բանկում դադարեցված լինելու դեպքում, Ավանդի Պայմանագիրը վերաձևակերպվում է պայմանագրով նապատեսված կարգով:

7.18. Ավանդի Պայմանագրի գործողության ընթացքում Բանկն իրավասու է միակողմանի փոփոխել ավտոմատ երկարաձգման պայմանը, նախօրոք, այդ մասին, երկարաձգման ենթակա ժամկետի ավարտից առնվազն մեկ ամիս առաջ, տեղյակ պահելով Հաճախորդին իր կողմից ընտրած հաղորդակցման եղանակով:

7.19. Ավանդը կարող է ժամկետից շուտ դադարեցվել/ Ավանդի պայմանագրով նախատեսված գումարը նվազեցվել Բանկի հանդեպ առկա վարկային պարտավորությունների մարման դեպքում առանց դատարան դիմելու, եթե ավանդը հանդիսանում է գրավի առարկա, ինչպես նաև դատարանի վճռով, դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների և/կամ հարկային մարմինների կողմից ներկայացված բռնագանձման որոշման/հայտի հիման վրա: Ընդ որում՝

7.19.1. Եթե բռնագանձման գումարը փոքր է Ավանդի գումարից, ապա Ավանդը (նվազեցված բռնագանձման գումարի չափով) շարունակում է գործել Ավանդային պայմանագրով նախատեսված պայմաններով և ժամկետով: Տվյալ դեպքում Ավանդի տոկոսագումարները հաշվեգրվում են Ավանդի փաստացի մնացորդի նկատմամբ:

7.19.2. Եթե բռնագանձման գումարը հավասար է Ավանդի գումարին, ապա Ավանդային պայմանագիրը լուծվում է և հաշվեգրված տոկոսագումարները փոխանցվում են Հաճախորդի՝ նախապես ընտրված տոկոսագումարների ստացման հաշվին:

7.19.3. Եթե բռնագանձման գումարը գերազանցում է Ավանդի գումարը, ապա Ավանդային պայմանագիրը լուծվում է, իսկ հաշվեգրված տոկոսագումարները բռնագանձվում են մնացած պարտքի չափով:

7.19.4. Այն դեպքում, եթե բռնագանձման արդյունքում Ավանդի փաստացի գումարը փոքր է տվյալ ավանդատեսակի համար Բանկում սահմանված նվազագույն գումարից, ապա Ավանդային պայմանագիրը լուծվում է, իսկ հաշվեգրված տոկոսագումարները և Ավանդի գումարի մնացորդը (բռնագանձումից հետո) փոխանցվում են Հաճախորդի՝ նախապես ընտրված համապատասխանաբար տոկոսագումարների ստացման և Ավանդի գումարի վերադարձման հաշվեհամարին/ներին:

7.20. Կոնկրետ Ավանդատեսակի հիմնական պայմանները սահմանվում են «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ ֆիզիկական անձանց համապատասխան ժամկետային ավանդի Տեղեկատվական ամփոփագրում:

7.21. Ավանդի նկատմամբ կիրառվում են նաև սույն Կանոններով սահմանված Հաշվի բացման և սպասարկման պայմաններն այնքանով, որքանով, որ չեն հակասում Ավանդի տեղեկատվական ամփոփագրով սահմանված պայմաններին:

8. ՔԱՐՏԱՅԻՆ ՀԱՇԻՎ/ՔԱՐՏ

Քարտի տրամադրում/հաշվի բացում

8.1. Բանկը ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ հաճախորդի համար, վերջինիս ցանկությամբ կարող է բացել քարտային հաշիվներ, կցելով MIR վճարահաշվարկային համակարգի քարտ : Քարտերը կարող են ունենալ, ինչպես միաժամանակ ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար/ԵՎՐՈ/ՌԴ ռուբլի արժույթներով հաշիվներ, այնպես էլ միայն ՀՀ դրամով հաշիվ (քարտի տեսակից ելնելով):

(8.1 կետը լրացվել է Տնօրինության թիվ 6 առ 16.01.2023թ. որոշմամբ):

8.2. Քարտի սպասարկումը ենթադրում է տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի միջոցների կիրառում և երրորդ անձանց ծառայությունների օգտագործում:

8.3. Ստորագրելով քարտի տրամադրման պայմանագիրը՝ Հաճախորդն ընդունում է, որ Բանկը չի կարող պատասխանատվություն կրել Հաճախորդի քարտով իրականացվող գործառնությունների հետևանքով Հաճախորդի կրած վնասների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ վնասներն առաջացել են Բանկի աշխատակիցների դիտավորության կամ կոպիտ անզգուշության հետևանքով:

Քարտի օգտագործում

8.4. Քարտերը, բացառությամբ սույն Կանոններով նախատեսված դեպքերի, կարող են օգտագործվել այն առևտրի/ սպասարկման և կանխիկացման կետերում, ինտերնետ միջավայրում, որոնք սպասարկում են MIR վճարային համակարգը: Բանկը ստորև նշված ծառայությունները մատուցում է այն դեպքում, երբ վճարային համակարգերի կողմից վերջիններս հասանելի են Բանկի համար: Տեխնիկական հնարավորության բացակայության դեպքում Բանկը տեղեկացնում է հաճախորդներին այդ մասին տեղեկատվությունը տեղադրելով պաշտոնական Կայք-էջում: Քարտերը հնարավորություն են ընձեռում.

- կատարել անկանխիկ վճարումներ, գործարքներ ինտերնետ միջավայրում և/կամ կանխիկ գումարներ ստանալ բանկոմատներով (ATM) ՀՀ-ում միայն Բանկի բանկոմատներով և (POS) Terminal-ներով, իսկ արտերկրում MIR վճարային համակարգը սպասարկող բանկոմատներով և (POS) Terminal-ներով,
- ներբանկային քարտից Քարտ փոխանցումներ իրականացնել Բանկի բանկոմատների միջոցով,
- կանխիկ գումարներ ստանալ Բանկում տեղադրված կանխիկի տրամադրման նպատակով POS տերմինալների միջոցով (point of sale (POS) terminal),
- քարտային հաշվով կանխիկ և անկանխիկ գործարքներ իրականացնել Բանկի տարածքում՝ առանց Քարտի կիրառման,
- համալրել քարտային հաշիվը վճարային տերմինալների, էլեկտրոնային դրամապանակների և Բանկի CASH-IN բանկոմատների միջոցով,
- կատարել գործարքներ մոբայլ հավելվածներով: Մասնավորապես Mir վճարային քարտերի դեպքում Mir Pay մոբայլ հավելվածով: Ընդ որում Mir Pay մոբայլ հավելվածով գործառնությունները կարգավորվում են Mir վճարային համակարգի «Մոբայլ հավելվածներով վճարային համակարգերում Բանկային քարտերի օգտագործման պայմանները և կանոններ» -ով, որոնք հասանելի են Բանկի պաշտոնական կայքում:

(8.4 կետը լրացվել է Տնօրինության թիվ 288 առ 15.12.2022թ. որոշմամբ),

(8.4 կետը լրացվել է Տնօրինության թիվ 6 առ 16.01.2023թ. որոշմամբ):

8.5. Քարտը համարվում է Բանկի սեփականությունը և տրամադրվում է Հաճախորդին օգտագործման իրավունքով՝ Հաճախորդի կողմից ստորագրված ստացականի համաձայն: PIN-ծածկագիրը ծրարով ստանալու դեպքում (օրինակ՝ ակնթարթային քարտերի դեպքում) քարտը ստանալիս, PIN-ծածկագրի ծրարի ստացականում Հաճախորդի ստորագրությունը միաժամանակ հաստատում է Քարտը ստանալու փաստը: Քարտի/քարտային հաշվի գործողության ժամկետը սահմանվում է համաձայն սակագների և նշված է քարտի վրա՝ ամիս (մինչև տվյալ ամսվա վերջին օրացուցային օրը), տարեթիվ սկզբունքով: Քարտերը տրամադրվում են հաճախորդին Բանկային պայմանագիրը ստորագրելու պահից առավելագույնը 5 բանկային օրվա ընթացքում:

8.6. Քարտը տրամադրելու պահին Քարտի կարգավիճակը ոչ ակտիվ է Քարտի կարգավիճակն ակտիվացվում է Հաճախորդի կողմից Բանկի ցանկացած բանկոմատով Քարտի ծածկագրի (PIN) կիրառմամբ առաջին իսկ հաջող գործարքի իրականացման միջոցով /այդ թվում նաև «Մնացորդի հարցում» գործարքի միջոցով/:

8.7. Քարտի գործողության ժամկետի ավարտից հետո Հաճախորդը պարտավոր է Քարտը վերադարձնել Բանկ,

8.8. Քարտը ստանալուն պես Հաճախորդի կողմից քարտի տրամադրման պայմանագրում նշված բջջային հեռախոսահամարին կուղարկվի ժամանակավոր PIN-ծածկագիր (բացառությամբ այն

դեպքերի, երբ PIN-ծածկագիրը տրամադրվում է փակ ծրարով), որը Հաճախորդը կարող է փոխել ինքնուրույնաբար՝ Բանկի ցանկացած բանկոմատում քարտի առաջին իսկ մուտքագրման պահին հետևյալ սկզբունքով.

- քարտը մուտքագրել Բանկի ցանկացած բանկոմատ,
- էկրանին մուտքագրել բջջային հեռախոսահամարին ստացված ժամանակավոր PIN-ծածկագիրը,
- ընտրել այլ գործարքներ/ծառայություններ,
- ընտրել PIN կոդի փոփոխություն,
- այնուհետև մուտքագրել իր կողմից ինքնուրույնաբար որոշված քառանիշ PIN-ծածկագիր,
- հաստատել PIN-ծածկագիրը և ավարտել գործարքը կամ իրականացնել բանկոմատով հասանելի այլ գործարք:

8.9. PIN-ծածկագիրը կիրառվում է Հաճախորդի անձը նույնականացնելու համար բանկոմատներում և առևտրի սպասարկման կետերում գործարքներ կատարելիս: Ծածկագիրը ենթակա չէ հրապարակման կամ տրամադրման երրորդ անձանց: Հարկավոր է ուշադիր լինել ծածկագիրը մուտքագրելիս, քանի որ այն երեք անգամ շարունակաբար սխալ մուտքագրելու դեպքում Քարտն արգելափակվում է և արգելահանվում է միայն Հաճախորդի գրավոր դիմումի (մասնաճյուղերում) կամ բանավոր դիմելու (ԿԿ հետ կապնվելու և նույնականացվելուց հետո) հիման վրա, որի դիմաց գանձվում են Բանկի Սակագներով նախատեսված վճարներ: Ցանկացած պահի ծածկագիրը Բանկի ցանկացած բանկոմատի միջոցով կարող է փոփոխվել Հաճախորդի կողմից՝ կատարելով 8.8. կետում նշված քայլերը:

8.10. Հաճախորդն իրավունք ունի դիմել Բանկին իր քարտային հաշվին մեկ և ավելի /առավելագույն 3 քարտ/ լրացուցիչ Քարտեր կցելու նպատակով: Լրացուցիչ Քարտեր ստանալու համար պետք է ստորագրել դիմում՝ Բանկի կողմից սահմանված տիպային ձևին համապատասխան: Լրացուցիչ Քարտերի գործարքներից առաջացած պարտավորությունների կատարումը Բանկի առջև Հաճախորդի պատասխանատվությունն է:

8.11. Եթե հիմնական քարտային հաշվի մնացորդը պակաս է, քան քարտի սպասարկման սակագինը, ապա չբավարարող գումարը գանձվում է Բանկում առկա Հաճախորդի այլ հաշիվներից, իսկ արտարժույթային հաշիվների դեպքում՝ փոխանակելով տարադրամը ՀՀ դրամի՝ համաձայն գործարքի իրականացման օրվա դրությամբ ՀՀ ԿԲ կողմից սահմանված փոխարժեքի:

8.12. Քարտը աշխատավարձային նախագծի շրջանակում բացված լինելու դեպքում, եթե վերջին 6 ամիսների ընթացքում տվյալ քարտային հաշվին չի եղել աշխատավարձի մուտք, ապա Բանկն իրավունք ունի փոփոխել Հաճախորդի քարտի պայմանները՝ սահմանելով Բանկում տվյալ պահին գործող պայմանները ու սակագները այդ մասին Հաճախորդի ընտրած հաղորդակցման եղանակով ծանուցելով վերջինիս:

8.13. Սակագներով Բանկը կարող է սահմանել Հաճախորդին հասանելի քարտերի առավելագույն քանակ.

- 1) Ժամկետային ավանդատեսակ ձևակերպելու դեպքում՝ 1 նվեր քարտ,
- 2) Տրանսֆեր դասի քարտ՝ 1 քարտ,
- 3) Աշխատավարձային նախագծի շրջանակներում սպասարկվող կազմակերպությունների միևնույն աշխատակցին՝ 1 աշխատավարձային քարտ,

8.14. Ստանդարտ դասի դեբետային քարտ՝ առավելագույնը 2 քարտ: Ինտերնետ միջավայրում քարտի օգտագործման անվտանգությունը բարձրացնելու նպատակով Բանկն օգտագործում է «3D-Secure»/«Secure Code» ծառայությունը, որի համաձայն ինտերնետ միջավայրում՝ «3D-Secure»/«Secure Code» ապահովող կայքերում, քարտով վճարում կատարելիս պետք է մուտքագրել քարտի տրամադրման պայմանագրում նշված բջջային հեռախոսահամարին ստացած մեկանգամյա գաղտնաբառը:

8.15. Բանկը իրավունք ունի մերժել ինտերնետ միջավայրում քարտով իրականացվող վճարումը եթե Հաճախորդի կողմից ստորագրված քարտի տրամադրման պայմանագրում նշված չէ կամ առանց Բանկին ծանուցման փոխվել է պայմանագրում նշված բջջային հեռախոսահամարը, որի արդյունքում.

- բջջային հեռախոսահամարին չի ուղարկվում «3D-Secure»/«Secure Code» ապահովող կայքերում վճարման իրականացման համար անհրաժեշտ մեկանգամյա գաղտնաբառը
- «3D-Secure»/«Secure Code» չապահովող կայքերում չի բացառվում երրորդ անձանց կողմից Հաճախորդի քարտի չլիազորված օգտագործման ռիսկը:

8.16. Սույն Կանոնները ներառում են Բանկի կողմից սահմանված դրույթները, որոնք կարգավորում են քարտերի տրամադրման և սպասարկման հետ կապված հարաբերությունները: Այդուհանդերձ MIR և այլ վճարային կազմակերպություններն ու համակարգերը կարող են ունենալ քարտի կոնկրետ տեսակներով գործարքների իրականացման հատուկ սահմանաչափեր և այլ կանոններ, որոնք նույնպես ենթակա են պահպանման Հաճախորդի և Բանկի կողմից:

(8.16 կետը լրացվել է Տնօրինության թիվ 6 առ 16.01.2023թ. որոշմամբ):

8.17. Բանկի Հաճախորդները կարող են ձեռք բերել՝ MIR վճարահաշվարկային համակարգի ակնթարթային տրամադրման քարտեր: Քարտն անանուն է, այսինքն վերջինիս վրա բացակայում են քարտապանի տվյալները (անուն ազգանուն): Ակնթարթային տրամադրման քարտն ընձեռում է բացառիկ հնարավորություն ձեռք բերել վճարային քարտ անմիջապես Բանկ դիմելու պահին՝ 15 րոպեի ընթացքում:

(8.17 կետը լրացվել է Տնօրինության թիվ 6 առ 16.01.2023թ. որոշմամբ):

8.18. Անանուն քարտը բացվում է միայն ՀՀ ազգային արժույթով, որի վրա բացակայում է CVV կոդը: -

Քարտի օգտագործման անվտանգությունն ապահովելու նպատակով Հաճախորդին խորհուրդ է տրվում՝

8.19. միջոցներ ձեռնարկել Քարտի անվտանգությունն ապահովելու և դրա անթույլատրելի օգտագործումը բացառելու նպատակով: Քարտի և PIN ծածկագրի օգտագործման հետ կապված բոլոր տեսակի ռիսկերը կրում է Հաճախորդը և Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Քարտի կամ PIN ծածկագրի օգտագործման հետևանքով իր կրած վնասների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ վնասը պատճառվել է Բանկի մեղքով:

8.20. Քարտը պահպանել ապահով վայրում, այնպես, որ այն հասանելի չդառնա այլ անձանց: Քարտը չպահել էլեկտրամագնիսական ճառագայթման աղբյուրների (բջջային հեռախոսների, հեռուստացույցների և այլ էլեկտրական տեխնիկայի) մոտ, ինչպես նաև այլ քարտերի հետ մեկտեղ:

8.21. PIN ծածկագիրը չտրամադրել երրորդ անձանց՝ ներառյալ Բանկի աշխատակիցներին:

8.22. հիշել PIN ծածկագիրը և չգրառել այն որևէ տեղ, առավել ևս՝ Քարտի դարձերեսին: Քարտի և PIN ծածկագրի համատեղ պահպանումը խորհուրդ չի տրվում:

8.23. չպատասխանել էլեկտրոնային կամ փոստային նամակների, ինչպես նաև այլ հաղորդագրությունների, որոնք պահանջում են հայտնել PIN ծածկագիրը, Քարտի համարը կամ Քարտի դարձերեսին առկա եռանիշ թվերը (CVVկոդը):

8.24. եթե ինտերնետի միջոցով գործարք կատարելիս պահանջվում է PIN ծածկագրի մուտքագրում, անհապաղ հրաժարվեք գործարքից: PIN ծածկագիրն անհրաժեշտ է միայն բանկոմատներում և կանխիկացման համար նախատեսված POS-տերմինալներում գործարքներ կատարելիս Բանկի կողմից սահմանված սահմանաչափը գերազանցելիս, ինչպես նաև, առևտրային կետերում ապրանքի/ծառայության դիմաց վճարելիս: Ինտերնետով գործարքներ կատարելիս օգտվել միայն վստահելի կայքերից:

8.25. բանկոմատով գործարքներ իրականացնելիս հետևել, որ ծածկագիրը մուտքագրելիս այն տեսանելի չլինի այլ անձանց: Անհապաղ դիմել Բանկ, եթե հիմքեր կան ենթադրելու, որ ծածկագիրը հայտնի է դարձել այլ անձանց:

8.26. POS-տերմինալներով գործարքները կատարվում են անհապառ շահանակով, իսկ եթե քարտը անհրաժեշտություն կա մուտքագրել POS տերմինալ, ապա այն չպետք է դուրս գա հաճախորդի տեսադաշտից;

8.27. օգտվել Քարտով կատարվող գործարքների վերաբերյալ SMS ծանուցումներ ստանալու Բանկի SMS banking ծառայությունից: Այն հնարավորություն է տալիս անմիջապես տեղեկանալ Քարտով կատարված գործարքների վերաբերյալ և ժամանակին միջոցներ ձեռնարկել անճշտություններն ուղղելու և Քարտի ապօրինի օգտագործումը կանխելու ուղղությամբ:

- Քարտի առգրավումը բանկոմատի կողմից

8.28. Քարտը բանկոմատի կողմից առգրավվելու դեպքում,

- Եթե Բանկի կողմից թողարկված քարտը առգրավվել է Բանկի բանկոմատների կողմից, Բանկի Կոնտակտային կենտրոնը կապ է հաստատում հաճախորդի հետ ճշտելու համար, թե որ մասնաճյուղից է ցանկանում ստանալ քարտը: Եթե հաճախորդը հրաժարվում է քարտից, այն ոչնչացվում է, սակայն անհրաժեշտ է, որ հաճախորդը մոտենա Բանկի ցանկացած մասնաճյուղ քարտը փակելու, որպեսզի սպասարկման վճար չհաշվեգրվի:
- Եթե Բանկի կողմից թողարկված քարտն առգրավվել է ՀՀ տարածքում գտնվող այլ բանկի բանկոմատի կողմից, ապա 10 աշխատանքային օրվա ընթացքում այդ քարտը վերադարձվում է Բանկ, որից հետո Բանկի Կոնտակտային կենտրոնը կապ է հաստատում հաճախորդի հետ ճշտելու համար, թե որ մասնաճյուղից է ցանկանում ստանալ քարտը:
- Եթե Բանկի կողմից թողարկված քարտն առգրավվել է արտասահմանյան բանկի կողմից, քարտի վերադարձն իրականացվում է տվյալ բանկում սահմանված եղանակով:
- ՀՀ տարածքում գտնվող այլ բանկերին պատկանող առգրավված քարտերը Բանկի բանկոմատների կողմից առգրավվելու դեպքում տեղափոխվում են «Արմենիան Քարտ» ՓԲԸ՝ այդ բանկերին փոխանցելու նպատակով:
- Արտասահմանյան բանկերի կողմից թողարկված պլաստիկ քարտերը տրամադրվում են հաճախորդներին բացառապես Գլխամասային գրասենյակից:

8.29. Բանկի կողմից թողարկված Քարտը բանկոմատի միջոցով առգրավվելու օրվանից 180 օրվա ընթացքում Հաճախորդի կողմից քարտը չստանալու դեպքում, Բանկն իրավունք ունի ոչնչացնել քարտը, փակել հաշիվները, դրական մնացորդը փոխանցելով Բանկում առկա այլ հաշիվներին կամ Բանկի տարանցիկ հաշվին, որը ստանալու համար անհրաժեշտ է անձը հաստատող փաստաթղթով մոտենալ Բանկի ցանկացած մասնաճյուղ բացառությամբ քարտին տրամադրված վարկային գծի առկայության դեպքերի, որի պարագայում վարկային քարտն ու քարտային հաշիվները փակվում են միայն այն պարագայում, երբ տվյալ վարկային քարտին տրամադրված վարկային գծի մասով չկան պարտավորություններ /տվյալ դեպքում վարկային քարտին վարկային գծի տրամադրման պայմանգիրը համարում է լուծված/դադարած, իսկ վարկը ուղղվում է մարման/:

Քարտային հաշիվ

8.30. Քարտով կատարված գործարքներն, ինչպես նաև դրանցից բխող բոլոր տեսակի գանձումներն ու միջնորդավճարները քարտային հաշվին կարող են հաշվեգրվել գործարքի կատարման օրը կամ ավելի ուշ՝ համապատասխան վճարահաշվարկային համակարգի կողմից սահմանված ժամկետներում:

8.31. Բանկի բանկոմատներում, ինչպես նաև Բանկի Ինտերնետ/Մոբայլ բանկինգ համակարգում Քարտի մնացորդի հարցում և/կամ գործարք կատարելիս մնացորդն արտացոլվում է և/կամ գործարքի գումարը սառեցվում է Հաճախորդի կողմից նախապես ընտրված հիմնական քարտային հաշվառությամբ՝ և վերահաշվարկվում է սույն օրվա Բանկի փոխարժեքով: Ընդ որում,

մնացորդի հարցման դեպքում ընթացիկ մնացորդը ներառում է նաև մնացած արժույթներով հաշիվների մնացորդների հանրագումարը: Իսկ քարտային հաշվից գումարի փաստացի ելքագրումը (քարտային հաշվի քաղվածքում գործարքի արտացոլումը) կատարվում է գործարքի հաշվեգրման (հաշվեգրում է համարվում Բանկի կողմից գործարքի կատարման ամսաթիվը, ժամը) պահին Բանկում անկանխիկ գործարքների համար գործարքը կատարելու պահի գործող փոխարժեքով:

8.32. քարտային գործարքների հաշվեգրման ընթացքում առաջնահերթության սկզբունքով դեբետագրումը կատարվում է այն հաշիվից, որի արժույթով կատարվել է գործարքը: Տվյալ հաշվին գումարի բացակայության կամ ոչ բավարար լինելու դեպքում դեբետագրումը կատարվում է մնացած արժույթների հաշիվներից և համակարգը ըստ հետթականության փորձում է գումարի դեբետագրում կատարել այն հաշվից, որի վրա բավարար չափով գումար կա: Եթե հաշիվներին չկա բավարար գումարի չափը, ապա համակարգը հերթականությամբ փորձում է դեբետագրումը կատարել բոլոր հաշիվների առկա մնացորդներից: Նման պարագայում գործարքներ հաշվառելիս Բանկը կիրառում է գործարքի հաշվեգրման օրվա ընթացքում գործող Բանկի կողմից սահմանած անկանխիկ փոխարժեքները: Քարտային հաշվով գործառնությունների, այդ թվում՝ նաև՝ արտարժույթի փոխանակում պահանջող գործարքների, հաշվառման համար անհրաժեշտ գումարի բացակայության կամ ոչ բավարար լինելու դեպքում Բանկը կարող է, առանց Հաճախորդի նախնական հավանության կամ հետագա համաձայնության, սահմանել քարտային հաշվի գծով գերաճախս, արգելափակել քարտը՝ գանձելով գերաճախսի գումարը, սակագներով սահմանված տոկոսը (առկայության դեպքում նաև տույժեր): Քարտը արգելափակումից կհանվի տոկոսի/տույժերի և/կամ գերաճախսի վճարումից հետո:

8.33. Քարտով /անկախ Քարտի ակտիվության կարգավիճակից/ կատարվող այն գործարքների դեպքում, որոնց մասով հավաստագրում չի պահանջում, այն է՝ երբ գործարքը կատարվում է offline ռեժիմում և սպասարկող կազմակերպությունը /խանութում, ռեստորանում, ինքնաթիռում և այլն/ online կապ չի հաստատում Քարտը թողարկող Բանկի հետ՝ համապատասխան թույլտվություն ստանալու համար, ապա վերը նշվածի արդյունքում Բանկի հանդեպ առաջացած Հաճախորդի պարտավորության /դեբիտորական պարտքի/ համար պատասխանատու է Հաճախորդը և պարտավորվում է այն վերադարձնել Բանկին:

8.34. Ի օգուտ քարտային հաշվին Բանկում միջբանկային կամ միջազգային փոխանցումների առկայության պարագայում Բանկի պարտավորությունն է հանդիսանում նշված դրամական միջոցների կրեդիտագրումը Հաճախորդի հաշվին, իսկ նպատակ դաշտում նկարագրված այլ գործողությունների (այդ թվում՝ վարկի վաղաժամկետ մարում կամ տոկոսի մարում) իրականացման համար անհրաժեշտ է Հաճախորդի կամ օրինական ներկայացուցչի կողմից նախընտրած եղանակով ներկայացնել Բանկին ուղղված համապատասխան հանձնարարական:

Քարտի կորուստը

8.35. Քարտի կորստի կամ հափշտակության մասին պետք է անհապաղ տեղեկացնել հետևյալ եղանակներով.

- գանգահարելով Բանկի 87-87 շտրիքային հեռախոսահամարին և հայտնելով Ա.Ա.Հ., ծննդյան ամսաթիվ, պայմանագրի մեջ նշված թվային գաղտնագրի և/կամ այլ անձնական տվյալների /հասցե կամ Հաճախորդի անձը հաստատող փաստաթղթի համարը: Ոչ լիարժեք տեղեկատվության դեպքում, Բանկը կարող է պահանջել Հաճախորդին մոտենալ նախընտրած մասնաճյուղ բանավոր կարգադրության գրավոր հաստատման համար, նախքան Քարտն արգելափակելը: Բանավոր դիմումի ստացումից և Հաճախորդի ինքնությունը ճշտելուց հետո Քարտն արգելափակվում է Հաճախորդի կողմից նշված և սակագներով սահմանված տարբերակով:
- Բանկի ցանկացած մասնաճյուղ ներկայանալուց և անձը հաստատելուց հետո Քարտն արգելափակվում է առավելագույնը 15 րոպեի ընթացքում:

- Մինչև բանկին տեղեկացնելու պահը քարտով կատարված գործարքների համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

8.36. Արգելափակումից հետո Քարտը հաճախորդի կողմից հայտնաբերվելու դեպքում (երթ այն չի եղել 3-րդ անձի տեսադաշտում)՝ Հաճախորդը պետք է տեղեկացնի այդ մասին Բանկին: Այդ դեպքում Քարտի գործողությունը կարող է վերականգնվել/արգելափակումից հանվել Հաճախորդի պատասխանատվությամբ սակագներով սահմանված վճարները գանձելուց հետո (առկայության դեպքում): Հակառակ դեպքում քարտը նորից է վերաթողարկվում:

Քարտերով կատարվող գործարքների օրինականությունը և գաղտնիությունը

8.37. Քարտերը չեն կարող օգտագործվել որևէ անօրինական գործունեության կամ դրանից բխող գործարքների համար: Քարտային գործարքների օրինականության շուրջ որևէ կասկածի առկայության դեպքում Բանկը իրավունք ունի առանց Հաճախորդին ծանուցելու չհաստատել գործարքը և/կամ արգելափակել Քարտը: Բանկը կարող է նաև լրացուցիչ տեղեկություններ և փաստաթղթեր պահանջել՝ նախքան գործարքի կատարումը: Քարտային գործարքների մասին Բանկի գրանցումները համարվում են տվյալ գործարքների կատարումը հավաստող փաստաթղթեր:

8.38. Բանկը կարող է չհաստատել գործարքները և/կամ արգելափակել Քարտը, եթե քարտային գործարքները կապված են հանրության կարգերին ու բարոյականությանը հակասող գործարքների հետ (օրինակ՝ ինտերնետային մոլախաղեր, բացահայտ անպատշաճ բովանդակություն ունեցող առարկաների և նյութերի ձեռքբերում և վաճառք և այլն): Քարտի լրգոտիպի արտացոլումը գործարքների կատարման վայրերում, ներառյալ՝ ինտերնետային կայքերում, չի նշանակում, որ գործարքն օրինական է:

Քարտային հաշվին դրամական փոխանցման մուտքագրում հեռախոսազանգի միջոցով/Ծառայություն

8.39. Ծառայությունը մատուցվում է միայն այն ֆիզիկական անձանց, որոնք դրամական փոխանցում են ստանում Բանկում գործող և Ծառայությանն անդամակցող միջազգային դրամական փոխանցումների համակարգերի միջոցով:

8.40. Ծառայությունը հասանելի է Բանկի կողմից սահմանված օրերին և ժամերին:

8.41. Օգտվելով Ծառայությունից՝ հնարավոր է հեռախոսազանգի միջոցով՝

- ստուգել դրամական փոխանցման առկայությունը համակարգում:
- հանձնարարել Բանկին ուղարկված դրամական փոխանցման գումարը մուտքագրել քարտային հաշվին:

8.42. Ծառայությունը մատուցվում է միայն հեռախոսազանգի միջոցով և տրամադրվում է սույն կանոններով և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված հաճախորդի նույնականացման գործընթացն անցնելուց հետո:

8.43. Նույնականացնելու նպատակով Բանկն իրավասու է ճշտել հետևյալ տվյալները՝

- պայմանագրի մեջ Հաճախորդի կողմից նշված թվային ծածկագիրը (պարտադիր),
- պայմանագրի մեջ Հաճախորդի կողմից նշված անուն, ազգանուն, հայրանունը (պարտադիր),
- պայմանագրի մեջ Հաճախորդի կողմից նշված անձնագրային տվյալները (պարտադիր),
- դրամական փոխանցման ծածկագիրը, գումարի չափը, արժույթը, ուղարկողի անուն, ազգանուն, հայրանունը (պարտադիր),
- այլ լրացուցիչ տվյալներ, որոնք նշվել են պայմանագիրը լրացնելիս (լրացուցիչ):

8.44. Անվտանգության նկատառումներից ելնելով Հաճախորդի նույնականացման ընթացքում՝

- սույն Կանոններում նշված ցանկացած տվյալի չհամընկնման դեպքում Բանկն իրավասու է հրաժարվել Ծառայության մատուցումից:
- հեռախոսազանգը ենթակա է ծայնագրման: Հետագա հնարավոր վեճերի և տարաձայնությունների ի հայտ գալու դեպքում ծայնագրված հեռախոսազանգը կարող է հանդես գալ որպես կատարված հեռախոսազանգի և Բանկի կողմից գործարքը կատարելու հիմք և ապացույց:

8.45. Բանկը պարտավորվում է մուտքագրել դրամական փոխանցման գումարը այն արժույթով քարտային հաշվին, որով ստացել է դրամական փոխանցումը: Բանկն իրավունք չունի մուտքագրել փոխանցման գումարը մասնակի:

8.46. Քարտային հաշվի քաղվածքում դրամական փոխանցման արտացոլումը համարվում է Հաճախորդի կողմից դրամական փոխանցման գումարի ստացման հավաստում:

8.47. Բանկն իրավունք ունի փոփոխել Ծառայությանն անդամակցող միջազգային դրամական փոխանցման համակարգերի ցանկը, որի հետ հնարավոր է ծանոթանալ՝ այցելելով Բանկի պաշտոնական կայք:

Քարտի վերաթողարկում և փակում

8.48. Քարտի գործողության ժամկետի ավարտից հետո Բանկը վերաթողարկում է քարտը Հաճախորդի պահանջով՝ մասնաճյուղ կամ կոնտակտային կենտրոն դիմելու պարագայում: Բանկը ավտոմատ վերաթողարկում է միայն այն աշխատավարձային և թոշակի քարտերը, որոնք բավարարում են Բանկի կողմից սահմանված պահանջներին: Նշված քարտերը նույն ամսվա մեջ վերաթողարկվում և ուղարկվում են այն մասնաճյուղեր, որտեղ ի սկզբանե բացվել են այդ քարտերը: Ժամկետի լրանալու դեպքում քարտերը վերաթողարկվում են անվճար:

8.49. Բանկը չի կրում պատասխանատվություն, եթե Հաճախորդի կողմից տրամադրված հեռախոսահամարը սխալ է կամ բացակայում է:

8.50. Քարտի ժամկետի ավարտից հետո ավտոմատ վերաթողարկում չի իրականացվում և հաշիվը փակվում է, եթե

- վերջին 6 ամսում հաճախորդի նախաձեռնությամբ գործարք չի իրականացվել (բացառությամբ Բանկի կողմից իրականացված ավտոմատ գործարքների) և քարտային հաշիվների գումարային մնացորդը չի գերազանցում 10,000 (տասը հազար) ՀՀ դրամը,
- քարտի գծով առկա է սպասարկման վճարի պարտք (3 ամիս և ավել)
- քարտը կարող է չվերաթողարկվել Բանկի ներքին իրավական ակտի հիման վրա, հաճախորդին նախապես տեղեկացնելով,

8.51. Հաճախորդի կողմից վերջին 6 ամսում Հաճախորդի նախաձեռնությամբ Քարտով գործարք չկատարվելու (բացառությամբ Բանկի կողմից իրականացված ավտոմատ գործարքների) և հաշիվների մնացորդային գումարը 10,000 (տասը հազար) ՀՀ դրամը գերազանցելու դեպքում, Քարտի ֆիզիկապես վերաթողարկում իրականացվում է Հաճախորդի կողմից Բանկ համապատասխան դիմում ներկայացնելու դեպքում:

8.52. Բանկն իրավունք ունի միակողմանի, առանց Հաճախորդին ծանուցելու լուծել պայմանագիրը և ոչնչացնել քարտը, եթե Հաճախորդը չի ներկայացել այն ստանալու համար Քարտը վերցնելու մասին Հաճախորդին տեղեկացնելու օրվան հաջորդող 730 օրացուցային օրերի ընթացքում, իսկ այն քարտերի մասով, որոնց վրա առկա է չօգտագործված վարկային գիծ 180 օրացուցային օրը լրանալուց հետո (վարկը ավտոմատ մարվում է, վարկային գծի տրամադրման պայմանագիրը համարվում է լուծված/դադարած):

8.53. Բանկն իրավունք ունի միակողմանի, առանց Հաճախորդին նախապես տեղեկացնելու փակել քարտն ու քարտային հաշիվները, եթե վերջին 12 ամսում Հաճախորդի կողմից Քարտով որևէ գործարք չի կատարվել և քարտային հաշվին առկա միջոցները 10,000 ՀՀ դրամից քիչ են: Ընդ որում հաշվին առկա դրական մնացորդը տեղափոխվում է Բանկում առկա Հաճախորդի այլ հաշիվներին/քարտերին կամ Բանկի տարանցիկ հաշվին: Հաճախորդի հաշիվներին առկա մնացորդի գումարը ստանալու համար անհրաժեշտ է անձը հաստատող փաստաթղթով մոտենալ Բանկի ցանկացած մասնաճյուղ:

8.54. Բանկն իրավունք ունի չլուծել Պայմանագիրը, եթե Հաճախորդի հաշիվներին առկա գումարները բավարար չեն Բանկի հանդեպ Հաճախորդի ստանձնած պարտավորությունների մարման համար, ընդ որում այդ պարագայում Հաճախորդի քարտի նկատմամբ կարող են կիրառվել Սակագներով սահմանված վճարները /առկայության դեպքում/:

8.55. Հաճախորդն իրավունք ունի գրավոր դիմել Բանկին՝ պահանջելով լուծել Պայմանագիրը և դադարեցնել Քարտի հետագա սպասարկումը միաժամանակ մարելով Բանկի նկատմամբ պարտավորությունները կամ ապահովելով նվազագույնը Բանկի նկատմամբ նշված քարտի գծով առկա պարտավորությունների չափով դրական մնացորդ: Հաճախորդի կողմից լրացրած դիմումը (Բանկի կողմից սահմանված տիպային ձևին համապատասխան) ստանալու պահից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Բանկը կդադարեցնի Քարտի գործողությունը՝ մարելով Բանկի հանդեպ Հաճախորդի պարտավորությունները Բանկում Հաճախորդի հաշիվներին առկա գումարներից:

8.56. Քարտի պայմանագրի գործողությունը դադարեցնելուց Հաճախորդի քարտային հաշիվը կփակվի, իսկ քարտային հաշվին առկա միջոցները կփոխանցվեն Հաճախորդի՝ Բանկում առկա այլ հաշիվներին կամ կտրամադրվեն Հաճախորդին՝ իր նախընտրած եղանակով:

8.57. Սույն գլխով նախատեսված պայմանները ենթակա են կիրառման նաև վարկային քարտերի նկատմամբ այնքանով, որքանով չեն հակասում վարկային քարտերի համար սահմանված Կանոններին:

(8.53 կետը փոփոխվել է 01.06.2023թ. Տնօրինության թիվ 105/1 որոշմամբ, 8-րդ գլուխը փոփոխվել է 15.04.2025թ. Տնօրինության թիվ 71 որոշմամբ)

9. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՀԱՇԻՎ

9.1. Բանկը «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության որոշման շրջանակում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության (այսուհետ՝ Լիազոր մարմնի) կողմից տրամադրված տվյալների հիման վրա (առանց Հաճախորդի ներկայության) Հաճախորդի /ներառյալ Կենսաթոշակառուների/ անվամբ բացում է Բանկային հաշիվ /Սոցիալական ապահովության հաշիվ/ ՀՀ դրամով և այդ հաշվին մուտքագրում է ՀՀ պետական բյուջեից փոխանցվող՝ սոցիալական ապահովության ծրագրերով նախատեսված կենսաթոշակների, պարբերական բնույթ կրող (որոշակի կամ անորոշ ժամկետով տրվող) նպաստների և դրամական այլ վճարների գումարները:

9.2. Հաճախորդը բանկային հաշվի տիրոջ իրավունքներ է ձեռքբերում պարբերական դրամական վճարի (ներառյալ նաև կենսաթոշակ) գումարն իր անվամբ բացված բանկային հաշվին մուտքագրելու պահից՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 928.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն: Ընդ որում, Հաճախորդը բանկային հաշիվը կարող է տնօրինել Հաճախորդի և Բանկի միջև Սոցիալական ապահովության հաշվի պայմանագիր կնքելու օրվանից:

9.3. Սոցիալական ապահովության հաշվին կից Հաճախորդին տրամադրվում է նաև վճարային քարտ: Հաշվին կից Քարտը տրամադրվում է պայմանագիրը ստորագրելու պահից առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում՝ Հաճախորդին կամ լիազոր ներկայացուցչին:

9.4. Սոցիալական ապահովության հաշվին մուտքագրվում է բացառապես պարբերական դրամական վճարի գումարը: Հաճախորդն իր Սոցիալական ապահովության հաշվին առկա միջոցները կարող է տնօրինել կանխիկ կամ անկանխիկ եղանակով:

9.5. Հաճախորդին վճարման ենթակա՝ ՀՀ բոլոր սոցիալական ապահովության ծրագրերով նախատեսված պարբերական դրամական վճարների գումարները բանկը մուտքագրում է Հաճախորդի անվամբ Բանկում բացված միևնույն Սոցիալական ապահովության հաշվին:

9.6. Սոցիալական ապահովության հաշվով հաշվառվում են Հաճախորդի հաշվով կատարված բոլոր տեսակի գործարքները, Բանկում գործող սակագներով սահմանված գործարքներից բխող բոլոր տեսակի գանձումները, միջնորդավճարները, ինչպես նաև գանձվող տույժերն ու տուգանքները (եթե այդպիսիք նախատեսված են):

9.7. Բանկը պատասխանատվություն չի կրում Սոցիալական ապահովության հաշվին մուտքագրված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտմամբ վճարված այն գումարների համար, որոնք հաճախորդի կարգադրության հիման վրա հաշվից դուրս են գրվել մինչև Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վերադարձնելու վերաբերյալ պահանջը ներկայացնելը:

9.8. Տասնչորս տարեկան չդարձած անչափահասի կամ խնամակալության տակ գտնվող անձի՝ Լիազոր մարմնի կողմից նշանակված կենսաթոշակը ստանալու համար Բանկում բանկային հաշվի բացման և քարտի ստացման պայմանագիրը ստորագրվում է տվյալ անձի օրինական ներկայացուցչի՝ ծնողի կամ խնամակալի կողմից, որոնց անվամբ էլ բացվում է բանկային հաշիվը՝ կից քարտով:

9.9. Տասնչորս տարեկան դարձած անչափահասն իրավունք ունի կենսաթոշակ ստանալու համար Բանկում անձամբ կնքել պայմանագիր և ստանալ կից քարտ:

9.10. Կենսաթոշակային Քարտերը կարող են օգտագործվել ՀՀ-ում, իսկ Հաճախորդի դիմումի հիման վրա՝ նաև արտասահմանում:

9.11. Քարտերը հնարավորություն են ընձեռում՝

- անկանխիկ վճարումներ կատարել և կանխիկ գումարներ ստանալ ՀՀ բանկոմատներում (ATM),
- անկանխիկ վճարումներ իրականացնել ՀՀ-ում առևտրի և սպասարկման կետերում տեղադրված էլեկտրոնային տերմինալների միջոցով,
- հաշվով կանխիկ և անկանխիկ գործարքներ իրականացնել Բանկի տարածքում՝ առանց քարտի անմիջական օգտագործման,

Արտերկրում և/կամ վիրտուալ միջավայրում քարտով գործարքներ կատարելու տարբերակ ընտրելու դեպքում Հաճախորդը կարող է քարտը օգտագործել արտերկրում և/կամ վիրտուալ միջավայրում:

9.12. Հաճախորդը (անչափահասի կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակառուի դեպքում՝ նրա օրինական ներկայացուցիչը՝ ծնողը, որդեգրողը կամ խնամակալը) կենսաթոշակի վճարումը շարունակելու համար պարտավոր է տարեկան մեկ անգամ՝ ոչ ուշ, քան վերջին անգամ Բանկ ներկայանալու ամսվան հաջորդող 12-րդ ամսվա վերջին աշխատանքային օրը ներկայանալ բանկ և հայտարարություն ստորագրել Հայաստանի Հանրապետությունում լինելու մասին: Նշված պահանջը Հաճախորդի կողմից համարվում է կատարված, եթե վերջինս անձամբ բանկ ներկայանալու միջոցով ստորագրել է հայտարարություն Հայաստանի Հանրապետությունում լինելու մասին, կամ նույնականացվել է և Բանկում ստորագրել է որևէ այլ փաստաթուղթ կամ Հաճախորդի Հայաստանի Հանրապետությունում լինելը հավաստել է Բանկը:

(9.12 կետը փոփոխվել է 16.02.22թ. Տնօրինության թիվ 29 որոշմամբ)

9.12.1 Կենսաթոշակը անկանխիկ եղանակով ստացող կենսաթոշակառուի (անչափահասի կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակառուի դեպքում՝ նրա օրինական ներկայացուցիչը՝ ծնողը կամ խնամակալը), Հայաստանի Հանրապետությունում լինելը Բանկի

կողմից կարող է հաստատվել նաև առանց կենսաթոշակառուի Բանկ ներկայանալու՝ Կառավարության սահմանած կարգով կամ կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման կողմից՝ անձամբ կենսաթոշակառուի ներկայացրած՝ կենսաթոշակին առնչվող ցանկացած գրավոր դիմումի հիման վրա:
(9.12.1 կետը փոփոխվել է 19.05.23թ. Տնօրինության թիվ 96 որոշմամբ)

9.13. Բանկն իր ներքին ընթացակարգերին համապատասխան կարող է նաև Հաճախորդի Հայաստանի Հանրապետությունում լինելը հավաստել հեռահար եղանակով՝ «Վիդեոբանկինգ» ծառայության միջոցով, միայն այն դեպքում, եթե առկա են կենսաթոշակառուի առողջության հետ կապված այնպիսի խնդիրներ, որոնք անհնարին են դարձնում կենսաթոշակառուի՝ անձամբ Բանկ ներկայանալու պահանջի կատարումը և վերջինս դիմել է Բանկ՝ նույնականացումը հեռահար եղանակով իրականացնելու նպատակով: Ընդ որում՝

- կենսաթոշակառուի կողմից Բանկի ներքին ընթացակարգերի համաձայն հեռահար նույնականացման պայմանները չկատարելու դեպքում, որի պատճառով Բանկը չի կարողացել հավաստել կենսաթոշակառուի՝ ՀՀ-ում լինելը, կենսաթոշակառուն պարտավորվում է անձամբ Բանկ ներկայանալու միջոցով հավաստել ՀՀ-ում լինելը,
- հեռահար եղանակով նույնականացման անհնարինության դեպքում Բանկի մասնաճյուղի աշխատակիցը կարող է նաև այց կատարել ՀՀ-ում կենսաթոշակառուի գտնվելու վայր՝ կենսաթոշակառուի՝ ՀՀ-ում լինելը հավաստելու նպատակով (բացառություն են կազմում COVID-19-ի դեպքերը, որի դեպքում Բանկի մասնաճյուղի աշխատակիցն այց չի կատարում),
- Բանկը պատասխանատվություն չի կրում կենսաթոշակառուի կողմից անձամբ Բանկ չներկայանալու հետևանքով կամ հեռահար եղանակով/ մասնաճյուղի աշխատակցի կողմից այցի միջոցով կենսաթոշակառուի ՀՀ-ում լինելը հավաստելու անհնարինության հետևանքով Կենսաթոշակառուի՝ կենսաթոշակի գումարը չստանալու համար:

(9.13 կետը լրացվել է 18.12.2020թ. Տնօրինության թիվ 380 որոշմամբ)

9.14. Սոցիալական ապահովության հաշվի բացման և սպասարկման հիմնական, ամբողջական պայմանները նկարագրված են «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ Սոցիալական ապահովության հաշվի համապատասխան Տեղեկատվական ամփոփագրում, ինչպես նաև Բանկի հետ կնքված պայմանագրում:

9.15. Սոցիալական ապահովության հաշվի նկատմամբ կիրառվում են նաև Բանկային /քարտային հաշվի բացման և սպասարկման պայմաններն այնքանով, որքանով, որ չեն հակասում Սոցիալական ապահովության հաշվի համապատասխան Տեղեկատվական ամփոփագրին:

10. ՀԵՌԱՀԱՐ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

10.1. Հեռահար սպասարկման ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն) Հաճախորդին հնարավորություն է ընձեռնում իրականացնել Մորայլ և Ինտերնետ Բանկ համակարգերի միջոցով հետևյալ անկանխիկ բանկային գործարքները (այսուհետ՝ Գործարքներ).

- փոխանցումներ Հաճախորդի հաշիվների և քարտերի միջև,
- փոխանցումներ Բանկի այլ հաճախորդների քարտերին և հաշիվներին,
- փոխանցումներ տեղական այլ բանկերում գործող հաշիվներին,
- արտարժույթի փոխարկում անկանխիկ եղանակով,
- վարկերի մարում,
- վարկերի մարման ժամանակացույցի դիտում,
- կոմունալ և այլ վճարների իրականացում,
- համալրման հնարավորությամբ ավանդների համալրում,
- հաշիվների մնացորդի և կատարված գործարքների վերաբերյալ քաղվածքների և տեղեկատվության ստացում,
- քարտի բացման հայտերի ներկայացում,
- վարկային հայտերի ներկայացում,

- արագ դրամական փոխանցումների համակարգերով ստացված փոխանցման գումարը Բանկում գործող հաշիվներին հաշվեգրման հանձնարարականի ուղարկում,
- Բանկին հաղորդագրությունների ուղարկում և այլն:

10.2. Ծառայությունից օգտվելու համար անհրաժեշտ է ունենալ Բանկում գործող բանկային կամ քարտային հաշիվ կամ ավանդ կամ վարկ, հուսալի ինտերնետային կապով հագեցած համակարգիչ (Internet Explorer 10.0 և բարձր, Google Chrome 50.0 և բարձր, Mozilla Firefox 46.0 և բարձր զննարկչի (Internet browser) առկայությամբ) և/կամ բջջային սարքեր (Android 4.1 և բարձր կամ iOS 8.0 և բարձր օպերացիոն համակարգերով աշխատող սմարթֆոն կամ պլանշետ): Ընդ որում, բջջային սարքերի միջոցով Ծառայությունից օգտվելու համար անհրաժեշտ է Հաճախորդի կողմից օգտագործվող բջջային սարքի վրա հավելվածների հարթակից (Play market/AppStore) ներբեռնել Բանկի Մոբայլ բանկինգի հավելվածը՝ համաձայն սույն Կանոնների և հավելվածների հարթակի կողմից սպասարկման պայմաններում սահմանված օգտագործման կանոնների: Ծառայությունը տրամադրվում է Բանկի կողմից սահմանված ձևով ներկայացված դիմումի (այսուհետ՝ Դիմում) հիման վրա: Դիմումի ստորագրումը վկայում է, որ Հաճախորդը համաձայն է և ընդունել է Կանոններն ու Սակագները և պարտավորվում է ղեկավարվել դրանցով:

10.3. Բանկի Ծառայության մատուցման բարձր հուսալիության ապահովման նպատակով Հաճախորդին առաջարկվում է Ծառայության համակարգի մուտքի և Ծառայության շրջանակներում իրականացվող գործարքների հաստատման մեկանգամյա օգտագործման գաղտնաբառերի կիրառման տարբերակ: Հաճախորդը մեկանգամյա օգտագործման գաղտնաբառեր /այսուհետ՝ Գաղտնաբառեր/ կարող է ստանալ Դիմումում նշված բջջային հեռախոսահամարին: Ընդ որում, եթե Հաճախորդը ունի Բանկում գրանցված մի քանի բջջային հեռախոսահամար, ապա հետագայում ինքնուրույն կարող է Ծառայության համակարգում օգտագործողի կարգաբերումներում ընտրել այն բջջային հեռախոսահամարը, որին կցանկանաք ստանալ Գաղտնաբառերը:

10.4. Հաճախորդի Դիմումի հաստատումից հետո Հաճախորդը կարող է գրանցվել Ծառայության համակարգում և օգտվել Ծառայությունից: Ընդ որում և Ինտերնետ բանկ համակարգում, և Մոբայլ բանկ համակարգում օգտագործվում են միևնույն մուտքային տվյալները (այսինքն նույն մուտքանունն ու գաղտնաբառը), որը Հաճախորդը ինքնուրույն է որոշում:

10.5. Ծառայության գրանցման, ինչպես նաև հետագայում Ծառայությունից օգտվելու համար անհրաժեշտ է.

- Բանկի պաշտոնական ինտերնետային կայքի Ինտերնետ բանկ ծառայությանը հատկացված հատվածում՝ VTB-Online տեղադրված հղումով անցնել Ինտերնետ բանկ համակարգի էջը:
- Հավելվածների հարթակից (Play market/AppStore) Հաճախորդի բջջային սարք ներբեռնել Մոբայլ բանկ հավելվածը, այնուհետև ըստ իր հայեցողության, Ինտերնետ բանկ կամ Մոբայլ բանկինգ համակարգում սկսել գրանցման գործընթացը:
- Ծառայության գլխավոր էկրանին սեղմել «Գրանցում» կոճակը, որից հետո բացվող պատուհանում մուտքագրել.
 - ✓ Հաճախորդի բջջային հեռախոսահամարը,
 - ✓ մուտքագրված բջջային հեռախոսահամարին SMS-հաղորդագրության միջոցով ստացված Գաղտնաբառը,
 - ✓ Բանկում գործող Հաճախորդի վճարային քարտի (մեկից ավել քարտերի դեպքում ցանկացածի) դիմերեսին նշված քարտի համարի վերջին 4 նիշերը,
 - ✓ Քարտի գործողության ժամկետը,
 - ✓ Հաճախորդի ծննդյան ամսաթիվը,
 - ✓ որից, հետո ճիշտ մուտքագրված տվյալների դեպքում ինքնուրույն ստեղծել մուտքանուն (Login) և գաղտնաբառ

- ✓ վերջում համակարգը կպահանջի ընտրել Ծառայության միջոցով իրականացվող Գործարքների կարգավիճակի վերաբերյալ ծանուցումների եղանակ (SMS, Push (Մոբայլ բանկի դեպքում), Email) և այդպիսով ավարտել գրանցման գործընթացը:

Ընդ որում, Բանկում գործող վճարային քարտի բացակայության դեպքում անհրաժեշտ է սեղմել «Քարտ չկա» նշումը, որից հետո համակարգը կպահանջի մուտքագրել Դիմումում նշված պայմանագրի համարը և մնացած տվյալները սույն Կանոններին համապատասխան:

10.6. Մոբայլ բանկ համակարգով գրանցվելու դեպքում գործընթացի ավարտին Համակարգը Հաճախորդին կառաջարկի մուտքագրել թվային կոդ (քառանիշ), ինչպես նաև Հաճախորդի մատնահետքը կամ Face ID (եթե Հաճախորդի բջջային սարքը ունի նման հնարավորություն)՝ Մոբայլ բանկ համակարգ հետագայում առավել հեշտ և պաշտպանված եղանակով մուտք գործելու նպատակով (որպեսզի խուսափեք յուրաքանչյուր անգամ մուտքանվան և գաղտնաբառի մուտքագրման անհրաժեշտությունից): Եթե Հաճախորդը չի ցանկանում օգտվել տվյալ գործառնությունից, ապա կարող է անջատել հնարավորությունը Հավելվածի գլխավոր էկրանին:

Ծառայության մատուցման անվտանգությունը

10.7. Համակարգի անվտանգ հասանելիության և վերջինիս միջոցով տրամադրվող Գործարքների հուսալիության բարձր մակարդակի ապահովման համար Բանկն օգտագործում է Հաճախորդի կողմից ինքնուրույնաբար ընտրված օգտագործողի անվանման և գաղտնաբառի, ինչպես նաև SMS-հաղորդագրության միջոցով ուղարկված մեկանգամյա գաղտնաբառի մուտքագրման մեթոդ: Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Ծառայությանն առնչվող ցանկացած համակարգչային սարքավորման, ծրագրային ապահովման կիրառման համար, որոնք տրամադրվել են Բանկի կողմից չվերահսկվող այլ անձանց կողմից:

10.8. Չի թույլատրվում Ինտերնետ բանկ և Մոբայլ բանկ համակարգերն օգտագործել այնպիսի սարքերի կամ օպերացիոն համակարգերի վրա, որոնք ենթարկվել են այնպիսի փոփոխության, որը չի սպասարկվում կամ չի երաշխավորվում սարքի կամ օպերացիոն համակարգի ստեղծողի/արտադրողի կողմից:

10.9. Ինտերնետով տվյալների փոխանցումը պարունակում է երրորդ անձանց կողմից Հաճախորդի ծածկագրերի կամ տվյալների կանխամտածված աղավաղման, երրորդ անձանց կողմից Հաճախորդի համակարգչային ծրագրերի չթույլատրված մուտքի հետևանքով հանձնարարականների/հարցումների ներկայացման, Հաճախորդի կողմից ներկայացված հանձնարարականների բովանդակության աղավաղման, ինչպես նաև Ծառայության միջոցով ստացված տեղեկատվության աղավաղման ռիսկեր: Բանկը պատասխանատվություն չի կրում համակարգչային վիրուսների հետևանքով Հաճախորդի հնարավոր կորուստների համար, եթե այդ վիրուսները Հաճախորդի գույքի, ծրագրերի, ֆայլերի կորստի/վնասի, կամ դրանց հետ կապված այլ վնասների պատճառ են հանդիսացել:

10.10. Բանկը չի կարող տեղեկանալ Հաճախորդի կողմից ընտրված Գաղտնաբառին: Ընդ որում, Գաղտնաբառի պարբերաբար փոփոխումը Ծառայությունից օգտվելու ընթացքում Հաճախորդի տվյալների անվտանգության ապահովմանն ուղղված անհրաժեշտ միջոցառում է: Հաճախորդը պարտավոր է ապահովել իր օգտագործողի անվանման ու Գաղտնաբառի պատշաճ պահպանությունը՝ երրորդ անձանց կողմից այդ տվյալների չթույլատրված օգտագործումը կամ դրանց արտահոսքը կանխելու նպատակով: Հաճախորդի տվյալները երրորդ անձանց հասանելի դառնալու կամ դրանց ապօրինի օգտագործման փաստի հայտնաբերման դեպքում /կամ նույնիսկ նման իրավիճակների ի հայտ գալու վերաբերյալ կասկածի դեպքում/, Հաճախորդը պարտավոր է անհապաղ փոխել Գաղտնաբառը՝ ինքնուրույն անմիջապես համակարգում՝ օգտագործողի կարգաբերումներում: Հաճախորդն իրավունք չունի այլ անձանց տրամադրել կամ մատչելի դարձնել օգտագործողի անվանումն ու Գաղտնաբառը: Գաղտնաբառի երրորդ անձանց կողմից հայտնի դառնալու դեպքում անհրաժեշտ է անհապաղ փոխել Գաղտնաբառը:

10.11.Անվտանգության նկատառումներից ելնելով՝ Բանկը խորհուրդ է տալիս որպես Գաղտնաբառ ընտրել մեծատառերի և ստեղծաշարի տարբեր տողերում ընդգրկված տառերի, թվերի և այլ նշանների բարդ համադրություններ: Խորհուրդ չի տրվում որպես Գաղտնաբառ օգտագործել.

- տառերի և թվերի պարզ համադրություններ (օրինակ, Abc123, Qwert789)
- հեռախոսահամարներ և անձնագրային տվյալներ
- Հաճախորդի և իր հարազատների ծննդյան տարեթվեր և անուններ
- Հաճախորդի շրջապատող համակարգիչների, մոնիտորների և այլ տեխնիկայի մակնիշների անվանումներ (օրինակ, Samsung123, iPhone789).

10.12. Ուշադիր է պետք լինել օգտագործողի անվանումն ու Գաղտնաբառը (դրա համադրությունները) մուտքագրելիս: Երեք անգամ դրանց անընդմեջ սխալ մուտքագրման դեպքում մուտքը դեպի համակարգ ժամանակավորապես (10 րոպե) կարգելափակվի, որից հետո հնարավոր կլինի կրկին փորձել մուտք գործել համակարգ: Այն դեպքում եթե Հաճախորդը չի հիշում Գաղտնաբառը, ապա համակարգ մուտք գործելու համար կպահանջվի անցնել Ծառայության գրանցման փուլը:

Ծառայության մատուցման պայմանները

10.13. Ծառայության համակարգում Հաճախորդի կողմից իր մուտքանունն ու Գաղտնաբառը մուտքագրելուց հետո, էլեկտրոնային եղանակով իր և Բանկի միջև փոխանակվող բոլոր փաստաթղթերն ու տեղեկությունները համարվում են լիարժեք իրավաբանական ուժ ունեցող և հավասարեցվում Հաճախորդի և Բանկի ստորագրություններով և կնիքով/դրոշմակնիքով պատշաճ ձևով վավերացված թղթային օրինակներին: Համակարգի միջոցով Բանկը երրորդ անձանցից էլեկտրոնային եղանակով ստացված գործարքների հանձնարարականներում նշված տեղեկատվությունը փոխանցում է Հաճախորդին ճիշտ այնպես, ինչպես որ դա ուղարկվել է Բանկին և Բանկը դրա բովանդակության վերաբերյալ պատասխանատվություն չի կրում:

10.14. Համակարգի միջոցով ցանկացած գործարք իրականացնելու համար Հաճախորդից կպահանջվի հաստատում՝ Գաղտնաբառի մուտքագրման միջոցով:

10.15. Ծառայության շրջանակներում Գործարքներն իրականացվում են հետևյալ կերպ.

Երկուշաբթիից ուրբաթ տվյալ բանկային օրվա ամսաթվով Բանկի կողմից փաստացի իրականացվում են

- մինչև 20:00-ն կատարված փոխանցումները (բացառությամբ միջբանկային տեղական փոխանցումների, որոնց դեպքում մինչև տվյալ օրվա ավարտն իրականացվում են այն գործարքները, որոնք կատարվել են մինչև 16:00-ն), վարկի մարումները, ավանդի համալրումները
- մինչև 17:30 կատարված կոմունալ վճարումները

շաբաթ օրը տվյալ բանկային օրվա ամսաթվով Բանկի կողմից փաստացի իրականացվում են

- մինչև 20:00-ն կատարված փոխանցումները (բացառությամբ միջբանկային տեղական փոխանցումների, որոնք կատարվելու են հաջորդ բանկային օրը), վարկի մարումները, ավանդի համալրումները
- մինչև 17:30 կատարված կոմունալ վճարումները:

Նշված ժամերից հետո իրականացված Գործարքները կատարվում են Բանկի կողմից հաջորդ բանկային օրվա ընթացքում: Մոբայլ բանկ հավելվածի միջոցով կատարված գործարքները, որոնք ներառում են փոխարկում և իրականացվում են ընթացիկ օրվա ժամը 18:00-ից մինչև հաջորդ օրվա ժամը 09:30-ը, կատարվում են հաջորդ բանկային օրվա ընթացքում Բանկի փոխարկման արժույթով: Գործարքի փոխարժեքի և Բանկի կողմից սահմանված փոխարժեքի անհամապատասխանության դեպքում Բանկը մերժում է գործարքը համաձայն 10.17 կետի:

Վերոնշյալ պայմանը չի գործում քարտերի բացման և վարկային հայտերի դեպքում: Այս դեպքում հայտերը դիտարկվում և հաստատվում կամ մերժվում են Բանկի կողմից մինչև 5 /հինգ/ բանկային օրվա ընթացքում:

(10.15 կետը փոփոխվել և լրացվել է 15.04.2025թ. Տնօրինության թիվ 71 որոշմամբ)

10.16. Կանոններով նախատեսված կետերում նշված ժամերին իրականացված գործարքները հաստատվում են ավտոմատ, բացառությամբ Բանկի տարբեր Հաճախորդների հաշիվների միջև ներբանկային փոխանցումների, միջբանկային տեղական փոխանցումների, որոնք հաստատվում են հետևյալ սկզբունքով.

- 5 մլն ՀՀ դրամը (10.000 ԱՄՆ դոլար, 9.000 Եվրո, 600.000 ՌԴ ռուբլի) չգերազանցող գործարքները՝ ավտոմատ,
- 5 մլն ՀՀ դրամը (10.000 ԱՄՆ դոլար, 9.000 Եվրո, 600.000 ՌԴ ռուբլի) գերազանցող գործարքները՝ Բանկի պատասխանատու աշխատակցի կողմից՝ մինչև տվյալ բանկային օրվա ավարտը (18:00-ն)՝ Հաճախորդի կողմից բանավոր եղանակով գործարքի հավաստագրումը ստանալուց հետո:

10.17. Հաճախորդի գործարքների կատարման ընթացքը կարող է վերահսկվել անմիջապես համակարգում՝ գործարքների ցանկում, որտեղ արտացոլվում է գործարքի կարգավիճակը: Ընդ որում արտարժույթի փոխանակմամբ իրականացվող գործարքները կարող են մերժվել Բանկի կողմից, եթե գործարքի փաստացի կատարման պահին Բանկում փոխվել է գործարքում նշված փոխարժեքը:

10.18. Համակարգի միջոցով լրացված քարտի բացման հայտի հիման վրա Հաճախորդի հետ կապ կհաստատի Բանկի Կոնտակտային կենտրոնի աշխատակիցը՝ անհրաժեշտության դեպքում որոշակի լրացուցիչ տվյալներ ճշտելու նպատակով, որից հետո Բանկը կբացի Հաճախորդի համար քարտ, որը Հաճախորդը կարող է ստանալ Հաճախորդի կողմից նախընտրելի մասնաճյուղում՝ մեկ այլ միջոցով:

10.19. Համակարգի միջոցով լրացված վարկային հայտի հիման վրա Հաճախորդի հետ կապ կհաստատի Բանկի Կոնտակտային կենտրոնի աշխատակիցը վարկի գծով խորհրդատվություն մատուցելու և վարկային հայտի փաստացի ձևակերպման նպատակով մասնաճյուղ ուղղորդելու համար:

10.20. Հաճախորդը պարտավոր է Ծառայությունից օգտվել բարեխղճորեն, Ծառայության մատուցման համար նախատեսված ինտերնետային կայքերը չկապակցել այլ կայքերի, ինչպես նաև ձեռնպահ մնալ ինտերնետային կայքում Ծառայության մատուցումն ապահովող համակարգչային ծրագրերը բազմացնելուց կամ դրանց գաղտնի մասերը չարտոնված կարգով բացահայտելուց: Խորհուրդ է տրվում հանգամանորեն ծանոթանալ սույն Կանոններով նախատեսված անվտանգության կանոններին:

Ծառայության մատուցման դադարեցումը

10.21. Ծառայությունը գործում է անորոշ ժամկետով: Հաճախորդը իրավունք ունի ցանկացած ժամանակ հրաժարվել Ծառայությունից՝ այդ մասին Բանկին գրավոր ծանուցելով՝ Բանկի ցանկացած մասնաճյուղում անձամբ լրացնելով Ծառայության դադարեցման դիմումը: Հաճախորդի գրավոր դիմումը ստանալուց 1 /մեկ/ աշխատանքային օրվա ընթացքում Բանկը կդադարեցնի Հաճախորդին Ծառայության մատուցումը՝ Հաճախորդի բանկային հաշիվներից մարելով Բանկի առջև Հաճախորդի պարտավորությունները:

10.22. Բանկն իրավունք ունի միակողմանիորեն դադարեցնել Ծառայության մատուցումը առանց Հաճախորդի նախապես ծանուցելու հետևյալ դեպքերից՝ առնվազն որևէ մեկի ի հայտ գալու պարագայում.

- եթե Հաճախորդը թույլ է տվել Ծառայության մատուցման սույն Կանոնների և Սակագների, ինչպես նաև Բանկի նկատմամբ ստանձնած այլ պարտավորությունների խախտում,
- եթե հիմքեր կան ենթադրելու, որ Ծառայությունն օգտագործվում է որևէ անօրինական նպատակով,
- տեղի է ունեցել Հաճախորդի օգտագործողի անվանման և Գաղտնաբառի չարտոնված բացահայտում,
- եթե 12 (տասներկու) ամիս անընդմեջ Հաճախորդի հաշիվներով Ծառայության միջոցով որևէ գործարք չի իրականացվում,
- եթե լուծվել է Հաճախորդի և Բանկի միջև կնքված բանկային հաշվի/վճարային քարտի սպասարկման/ավանդային/վարկային պայմանագիրը կամ որևէ հիմքով դադարեցվել է Հաճախորդի բանկային/քարտային/ավանդային/վարկային հաշիվների սպասարկումը:

11. ՎԱՐԿԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

11.1. Սույն Կանոնների շրջանակներում առաջարկվող բոլոր վարկերը (այսուհետ՝ բոլոր վարկատեսակները միասին՝ Վարկ), տրամադրվում են կոնկրետ վարկային պայմանագրերում նշված նպատակներով և պետք է օգտագործվեն միայն այդ նպատակների համար:

11.2. Տոկոսագումարի հաշվարկը կատարվում է վարկի գումարի օգտագործված մասի/մնացորդի նկատմամբ օգտագործման օրվանից, օրական կտրվածքով, տարին ընդունելով 365 օր: Տոկոսագումարը ենթակա է վճարման վարկային պայմանագրով և ժամանակցույցով նախատեսված պարբերականությամբ: Վարկի տարեկան տոկոսադրույքը կարող է սահմանվել զրոյական այն դեպքում, երբ Հաճախորդի ընտրությամբ համապատասխան վարկատեսակի շրջանակներում վարկի գործողության ողջ ժամկետի համար սահմանվել է արտոնյալ ժամանակահատված վարկի տոկոսադրույքի նկատմամբ:

11.3. Վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքը ներառում է ստորև նշված վճարները դրանց առկայության դեպքում՝

- վարկի տրամադրման վճարը, վարկի վերաֆինանսավորման դեպքում՝ նոր վարկի տրամադրման վճարը,
- վարկավորման համար անհրաժեշտ փաստաթղթերի պատրաստման վճարը,
- վարկի/վարկային հաշվի սպասարկման վճարը,
- գրավի ձևակերպման վճարները, ապահովագրության, գնահատման և այն օժանդակ ծառայությունների համար կատարվող վճարները՝ եթե այդ ծառայություններից օգտվելը հանդիսանում է վարկային պայմանագիրը կնքելու կամ գովազդվող փաստացի տոկոսադրույքը ստանալու նախապայման և այդ ծառայությունների շահառուն հանդիսանում է Բանկը կամ Բանկը սահմանում է այն անձանց շրջանակը, որոնց հետ Հաճախորդն իրավունք ունի կնքելու օժանդակ ծառայությունների մատուցման պայմանագրեր,
- քարտերի հետ կապված բոլոր տեսակի վճարները, եթե քարտի տրամադրումը հանդիսանում է պարտադիր պայման վարկի տրամադրման համար և Հաճախորդը վարկի ստացման համար չունի ողջամիտ այլընտրանք,
- Վարկի կանխիկացման համար գանձվող միջնորդավճարն, քարտին տրամադրվող վարկերի դեպքում այն ենթադրությամբ, որ Վարկն ամբողջությամբ կանխիկացվելու է Բանկի բանկոմատներից եթե առկա չէ Վարկի օգտագործման ողջամիտ այլընտրանք,
- վարկի հետ կապված այլ վճարները, որոնք Հաճախորդը պարտավոր է վճարել վարկավորման համար:

11.4. Վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքը չի ներառում՝

- օրենքով և վարկային պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար վճարված կամ վճարվելիք տուժանքները և այլ վճարները,
- այն վճարների, որոնք Հաճախորդի կողմից ենթակա են վճարման՝ անկախ ապրանքների, ծառայությունների կամ աշխատանքների դիմաց վճարումը վարկով կամ առանց վարկի (cash price) կատարելու հանգամանքից,
- այն վճարները, որոնք Հաճախորդը կատարում է Վարկի մարման և տոկոսների վճարման նպատակով կատարվող փոխանցումների համար, ինչպես նաև այդ նպատակով բացված հաշիվների սպասարկման համար, բացառությամբ այն դեպքերի, երբ Հաճախորդն այդ հարցերում չունի ողջամիտ այլընտրանք, և նման վճարները գերազանցում են համապատասխան վճարների համար ՀՀ-ում կիրառվող միջին վճարի չափի 1.5-ապատիկը,
- կազմակերպություններին, միություններին կամ այլ խմբերին (բացառությամբ նրանց, որոնց հիմնադիրը կամ մասնակիցը կրեդիտավորողն է) անդամակցելու կամ բաժանորդագրվելու համար նախատեսված վճարները, որոնք բխում են վարկային պայմանագրի մաս չհամարվող պայմանագրերից նույնիսկ այն դեպքում, երբ Վարկի պայմանները կախված են նման անդամակցումից կամ բաժանորդագրումից,
- ապահովագրության, գնահատման և այլ օժանդակ ծառայությունների դիմաց կատարվող վճարները, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ ծառայություններից օգտվելը վարկային պայմանագիրը կնքելու կամ գովազդվող տարեկան փաստացի տոկոսադրույքը ստանալու նախապայմանն է, և այդ ծառայությունների շահառուն Բանկն է, կամ Բանկը սահմանում է այն անձանց շրջանակը, որոնց հետ Հաճախորդն իրավունք ունի կնքելու օժանդակ ծառայությունների մատուցման պայմանագրեր:

11.5. Յուրաքանչյուր կոնկրետ Վարկի համար տարեկան փաստացի տոկոսադրույքը սահմանվում է՝ ելնելով տվյալ վարկատեսակի համար Սակագներով սահմանված պայմաններից: Վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքը ենթակա է փոփոխման, յուրաքանչյուր վարկատեսակի վարկային պայմանագրով նախատեսված և փաստացի տոկոսադրույքի հաշվարկման տարր հանդիսացող վարկի տարեկան տոկոսադրույքի փոփոխման դեպքում՝ համապատասխան փոփոխությանը համամասնորեն՝ փոփոխությունը կատարելու պահից: Հաճախորդի վարկի/վարկային սահմանաչափի տարեկան փաստացի տոկոսադրույքի չափը և փոփոխության կարգը սահմանվում է վարկային պայմանագրում:

11.6. Վարկային գծերի դեպքում տարեկան փաստացի տոկոսադրույքի չափը հաշվարկվում է ելնելով հետևյալ սկզբունքներից.

ա) վարկային սահմանաչափի գործողության ժամկետը՝ համաձայն վարկային պայմանագրում նշված ժամկետի,

բ) սահմանաչափն ամբողջությամբ օգտագործվում է տրամադրման հաջորդ օրը,

գ) ամսվա վերջին աշխատանքային օրը վարկային սահմանաչափից մարվում են հաշվարկված տոկոսները, իսկ վարկն ամբողջությամբ մարվում է ժամկետի վերջում:

11.7. Վարկի (մայր գումար, տոկոս, սպասարկման վճար, առկայության դեպքում այլ վճարներ) մարման եղանակները սահմանվում են յուրաքանչյուր վարկարտեսակի պայմաններով և Սակագներով և համաձայն Հաճախորդի ընտրության կոնկրետ վարկի մասով սահմանվում են Բանկի ու Հաճախորդի միջև կնքված Վարկային պայմանագրով: Այն վարկատեսակները, որոնց համար սահմանվում է մարման ժամանակացույց (գրաֆիկ), Վարկի, տոկոսագումարների մարումների և վարկային հաշվի սպասարկման ամսական միջնորդավճարների, ինչպես նաև տվյալ վարկատեսակի Սակագներով սահմանված այլ վճարների ժամանակացույցը տրվում է վարկային պայմանագրին կից ներկայացվող հավելվածում:

11.8. Վարկի մարման/վճարման ամսաթիվը ոչ աշխատանքային օր լինելու դեպքում, Վարկի մայր գումարի, տոկոսագումարների մարումները և վարկային հաշվի սպասարկման ամսական/տարեկան միջնորդավճարների վճարումները կատարվում են դրան հաջորդող աշխատանքային օրը:

11.9. Արտարժույթով տրամադրված Վարկերի դեպքում փոխարժեքի փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ Վարկի ամսական մարումների գումարների վրա:

11.10. Արտարժույթով տրամադրվող Վարկի նկատմամբ հաշվարկված տոկոսագումարների, Վարկային հաշվի սպասարկման ամսական/տարեկան վճարի (առկայության դեպքում), ապահովագրավճարի (առկայության դեպքում), ինչպես նաև տույժերի հաշվեգրումը կատարվում է տրամադրված Վարկի արտարժույթով, իսկ հաշվարկված տոկոսագումարների վճարումը կատարվում է Հաճախորդի ընտրությամբ կամ ՀՀ դրամով, կամ տրամադրված Վարկի արտարժույթով՝ գործառնության հաշվեգրման պահին ՀՀ ԿԲ կողմից սահմանված փոխարժեքով:

11.11. Վարկի տրամադրման պահից Բանկում սահմանված կարգով բացվում է Վարկային հաշիվ:

11.12. Բանկի նկատմամբ ունեցած պարտավորությունները կատարելիս, մարումները կատարվում են հետևյալ հերթականությամբ.

- 1) քարտի սպասարկման միջնորդավճարը (առկայության դեպքում),
- 2) քարտով անկանխիկ գործարքների կատարման դիմաց գանձվող միջնորդավճարը (առկայության դեպքում),
- 3) Cash Back ծառայության վճար (առկայության դեպքում),
- 4) դեբիտորական պարտքի տոկոս (առկայության դեպքում),
- 5) դեբիտորական պարտք (առկայության դեպքում),
- 6) ժամկետանց տոկոսի տույժ (առկայության դեպքում),
- 7) ժամկետանց վարկի տույժ (առկայության դեպքում),
- 8) ժամկետանց տոկոս (առկայության դեպքում),
- 9) ապահովագրության վճար (առկայության դեպքում),
- 10) օվերդրաֆտի/վարկային գծի օգտագործված մասի 10%-ի չափով մարում չկատարելու համար նախատեսված տուգանք (առկայության դեպքում),
- 11) վարկի սպասարկման միջնորդավճարը (առկայության դեպքում),
- 12) ժամկետանց վարկի գումար (առկայության դեպքում),
- 13) վարկի տոկոսագումարներ,
- 14) վարկի մնացորդ,
- 15) դատական ծախսերն ու պետական տուրքը (եթե այդպիսիք կան և առկա է օրինական ուժի մեջ մտած վճիռ):

Այն դեպքում, երբ մարումները կատարվում են վճարային տերմինալների միջոցով կամ հեռահար վճարման այլ միջոցներով, ապա բոլոր մարումները կատարվում են վերոնշյալ հերթականությամբ, իսկ ավել վճարված գումարի առկայության դեպքում այն ուղղվում է վարկի մնացորդի մարմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ հնարավորության առկայության դեպքում Հաճախորդի կողմից նշվում է մարման այլ տարբերակ:

11.13. Հաճախորդը վարկի մարումները կարող է իրականացնել՝

- 1) Բանկի մասնաճյուղերում,
- 2) հեռահար եղանակով՝ վճարային տերմինալների, Բանկի Մոբայլ/Ինտերնետ/Հեռախոս Բանկ համակարգերի միջոցով, ինչպես նաև առկայության դեպքում այլ համապատասխան համակարգերի/հավելվածների միջոցով,
- 3) այլ բանկերից՝ պարտադիր կիրառելով վարկային կոդը և նշելով այն ՀՀ Կենտրոնական բանկի ուղեցույցի համաձայն կիրառվող համապատասխան դաշտում՝ ճշտելով այն այն բանկից, որից

կատարում եք փոխանցում վարկի մարման նպատակով (օրինակ՝ վարկային կողը պետք չէ նշել «Վճարման նպատակ» դաշտում), հակառակ դեպքում ցանկացած այլ փոխանցում չի կարող ուղղվել Վարկի մարմանը:

4) վարկի ամբողջական մարման դեպքում՝ Բանկի մասնաճյուղում:

Հաճախորդի՝ Բանկում սպասարկվող հաշիվներին գումարների առկայության դեպքում՝ Բանկն իրավունք ունի վարկային պայմանագրի կամ վարկային պայմանագրի ժամանակացույցի համաձայն վարկի հերթական մարման օրը այդ գումարներն ուղղել Վարկի մարմանը:

11.14. Վարկային պայմանագրի կետերից որևէ մեկի գործողության դադարեցումը չի հանգեցնում վարկային պայմանագրի մյուս կետերի գործողության դադարեցմանը:

12. ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿ ԱՌԱՆՅ ԳՈՒՅՔԻ ԳՐԱՎԱԴՐՄԱՆ ԿԱՄ ԳՈՒՅՔԻ ԳՐԱՎԱԴՐՄԱՄԲ (ՎԱՐԿ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ)

12.1. Վարկը տրամադրվում է միանվագ, անկանխիկ եղանակով՝ մուտքագրելով Հաճախորդի Բանկում առկա հաշվին (այսուհետ՝ Բանկային հաշիվ), որը նշվում է Բանկի և Հաճախորդի միջև կնքված վարկային պայմանագրում որպես վարկի տրամադրման հաշիվ:

12.2. Վարկի տրամադրման (օգտագործման) ամսաթիվ է համարվում Վարկի գումարը Բանկի կողմից Հաճախորդի Բանկային հաշվին մուտքագրելու օրը:

(12 գլխի անվանումը փոփոխվել է Տնօրինության 21.01.2021թ. թիվ 10 որոշմամբ)

13. ՎԱՐԿԱՅԻՆ ԳԻԾ

13.1. Վարկային գիծը կարող է տրամադրվել կամ Հաճախորդի գործող դեբետային քարտին և այս դեպքում քարտի սպասարկման պայմանները և սակագները շարունակում են մնալ անփոփոխ, կամ նոր վարկային քարտով, որի համար սահմանվում են սպասարկման համապատասխան պայմաններ և Սակագներ:

13.2. Վարկային գծի տրամադրման պահ է համարվում Բանկի կողմից վարկային գծի տրամադրման դրական որոշում կայացնելուց հետո Հաճախորդի և Բանկի միջև վարկային քարտին կամ Հաճախորդի գործող դեբետային քարտին վարկային գծի տրամադրման պայմանագրի կնքման պահը:

13.3. Վարկային գիծը Բանկի կողմից տրամադրվում է վերականգնվող վարկային սահմանաչափի տեսքով:

13.4. Վարկային գիծը Բանկի կողմից տրամադրվում է ըստ Հաճախորդի ընտրության՝ կամ առանց արտոնյալ ժամանակահատվածի (վարկային քարտով կամ գործող դեբետային քարտով), կամ արտոնյալ ժամանակահատվածով (վարկային քարտով): Արտոնյալ ժամանակահատվածով վարկային քարտը ենթադրում է, որ արտոնյալ ժամանակահատվածի ընթացքում, Վարկի օգտագործված ամբողջ գումարը մարելու դեպքում, Հաճախորդից Վարկի օգտագործման դիմաց տոկոսներ չեն գանձվում: Ընդ որում՝ արտոնյալ ժամանակահատված ունեցող վարկային քարտի վարկային սահմանաչափի օգտագործված մասը ենթակա է վճարման քաղվածքի ձևավորման օրվան հաջորդող օրվանից՝ համապատասխան վարկային քարտի տեսակի համար սահմանված արտոնյալ ժամանակահատվածի ընթացքում: Յուրաքանչյուր վարկային քարտի համար արտոնյալ ժամանակահատվածի տևողությունը նշված է համապատասխան վարկային պայմանագրում և սահմանվում է տվյալ վարկատեսակի Սակագներով :

13.5. Վարկային գծի տրամադրման համար գանձվում է միջնորդավճար՝ քարտով առաջին գործարքի կատարումից հետո:

13.6. Վարկային սահմանաչափի տրամադրման միջնորդավճարը գանձվում է ինչպես նոր վարկային գծի տրամադրման, այնպես էլ վարկային գծի երկարաձգման և/կամ սահմանաչափի ավելացման դեպքերում: Այն դեպքերում, երբ իրականացվում է գործող վարկային գծի սահմանաչափի ավելացում, վարկային սահմանաչափի տրամադրման միանվագ միջնորդավճարը կիրառվում է ավելացված վարկային սահմանաչափի նկատմամբ, սակայն վարկային սահմանաչափի ավելացման հետ միասին վարկային գծի ժամկետի երկարաձգում կատարելու դեպքում վարկի տրամադրման միանվագ միջնորդավճարը կիրառվում է վարկային սահմանաչափի ամբողջ գումարի նկատմամբ (գործող գումարած ավելացող):

13.7. Վարկի վերջնաժամկետի լրացման դեպքում, վարկային գիծը կարող է ավտոմատ երկարաձգվել երկարաձգման պահին երկարաձգման համար Բանկում գործող պայմաններով և կարգով, եթե Հաճախորդի վարկային պատմությունը համապատասխանում է Բանկի պահանջներին, և եթե այլ բան նախատեսված չէ վարկային պայմանագրով:

13.8. Բանկն իրավունք ունի միակողմանիորեն՝ առանց Հաճախորդի հետագա համաձայնությունը ստանալու, ավելացնել Հաճախորդի գործող վարկային գծի սահմանաչափը՝ կիրառելով գործող վարկային սահմանաչափի նկատմամբ կիրառվող սակագները (տարեկան տոկոսադրույք, սպասարկման միջնորդավճարներ և այլն)՝ միաժամանակ երկարաձգելով վարկային պայմանագրի գործողության ժամկետը 1 (մեկ) տարով՝ սկսած գործող վարկային պայմանագրի ժամկետի ավարտի պահից, եթե՝

- վերջին 6 (վեց) ամիսների ընթացքում միջինում Հաճախորդն օգտագործել է վարկային սահմանաչափի 50%-ը և ավելին
- վարկային սահմանաչափի տրամադրման պահից անցել է 1 (մեկ) տարուց ավելի
- վերջին 3 (երեք) ամիսների ընթացքում Հաճախորդն չի ունեցել վճարման ենթակա նվազագույն գումարի չվճարման դեպքեր
- Հաճախորդը բավարարում է կոնկրետ վարկատեսակի համար Հաճախորդի նկատմամբ Բանկի նվազագույն պահանջներին, այն է՝ հաշվի միջին ամսական շրջանառության, վարկային պատմություն, տարիք և այլն:

Բանկը Հաճախորդի կողմից նախապես ընտրված Բանկի հետ հաղորդակցման նախընտրելի եղանակով տեղեկացնում է Հաճախորդին վարկային սահմանաչափի ավելացման մասին՝ փոփոխությունն ուժի մեջ մտնելուց 7 (յոթ) աշխատանքային օր առաջ՝ Բանկի և Հաճախորդի միջև կնքված համապատասխան պայմանագրով ընտրված հաղորդակցման եղանակով: Վարկային սահմանաչափի ավելացվող գումարի չափը կախված է վերջին 6 (վեց) ամիսների ընթացքում Հաճախորդի կողմից վարկային սահմանաչափի օգտագործման չափից:

13.9. Վարկային քարտերի թողարկման/վերաթողարկման և սպասարկման առանձնահատկություններ

13.9.1 Վարկային քարտերի նկատմամբ կիրառվում են սույն Կանոններով սահմանված Դեբետային քարտերին վերաբերող դրույթներն այնքանով, որքանով այլ բան նախատեսված չէ սույն գլխով:

13.9.2 Բանկն իրավունք ունի վարկային քարտի ժամկետի ավարտին իրականացնել քարտի ավտոմատ վերաթողարկում՝ թողարկելով նոր քարտ PIN-ծածկագրի պահպանմամբ, եթե Հաճախորդի կողմից քարտի ժամկետի ավարտից 40 օրացուցային օր առաջ քարտի փակման (այդ թվում՝ առկայության դեպքում վարկային գծի փակման) դիմում չի ներկայացվել: Վարկային քարտի վերաթողարկումը իրենից չի ենթադրում վարկային գծի երկարաձգում:

13.9.3 Վարկային քարտի ժամկետի ավարտից հետո Բանկն իրավունք ունի ավտոմատ չվերաթողարկել այն, եթե միաժամանակ առկա են հետևյալ բոլոր պայմանները՝

- վարկային գիծը փակ է,

- վերջին 6 ամսում Հաճախորդի կողմից և նախաձեռնությամբ գործարք չի իրականացվել (Հաճախորդի կողմից և նախաձեռնությամբ կատարված գործարք չեն համարվում Բանկի կողմից իրականացված ավտոմատ գործարքները),
 - քարտային հաշիվների գումարային դրական մնացորդը չի գերազանցում 10,000 ՀՀ դրամը:
- 13.9.4 Վարկային քարտի ժամկետի ավարտից հետո Բանկն իրավունք ունի իրականացնել քարտային հաշիվների գործողության ժամկետի երկարաձգում, բանկում գործող պայմաններով, առանց նախապես ֆիզիկապես պլաստիկ քարտի տրամադրման¹, եթե առկա են միաժամանակ հետևյալ պայմանները՝
- վարկային գիծը փակ է,
 - վերջին 6 ամսում Հաճախորդի կողմից և նախաձեռնությամբ վարկային քարտով կատարվել է առնվազն 1 գործարք (Հաճախորդի կողմից և նախաձեռնությամբ կատարված գործարք չեն համարվում Բանկի կողմից իրականացված ավտոմատ գործարքները),
 - քարտային հաշիվների գումարային դրական մնացորդը չի գերազանցում 10,000 (տասը հազար) ՀՀ դրամը:

13.9.5 Բանկն իրավունք ունի միակողմանի, առանց Հաճախորդին ծանուցելու լուծել պայմանագիրը և ոչնչացնել վարկային քարտը, եթե Հաճախորդը չի ներկայացել այն ստանալու համար քարտը վերցնելու մասին Հաճախորդին տեղեկացնելու օրվան հաջորդող 180 օրացուցային օրերի ընթացքում: Սույն կետի ուժով վարկային քարտին վարկային գծի տրամադրման պայմանագիրը համարվում է լուծված/դադարած, իսկ վարկը մարված:

13.9.6 Բանկն իրավունք ունի առանց Հաճախորդին նախապես տեղեկացնելու և առանց Հաճախորդի լրացուցիչ համաձայնության փակել վարկային քարտն ու քարտային հաշիվները, եթե վերջին 12 ամսում քարտով Հաճախորդի կողմից և նախաձեռնությամբ (Հաճախորդի կողմից և նախաձեռնությամբ կատարված գործարք չեն համարվում Բանկի կողմից իրականացված ավտոմատ գործարքները) որևէ գործարք չի կատարվել և երբևէ չի օգտագործվել քարտին տրամադրված վարկային գիծը /տվյալ դեպքում վարկային քարտին վարկային գծի տրամադրման պայմանագիրը համարում է լուծված/դադարած, իսկ վարկը՝ մարված/:

13.9.7 Բանկումատի կողմից քարտը առգրավվելու օրվանից 180 օրվա ընթացքում, եթե Հաճախորդը չի մոտենում քարտը ստանալու համար, ապա Բանկն իրավունքն ունի ոչնչացնել քարտը՝ դրական մնացորդը փոխանցելով Հաճախորդի՝ Բանկում առկա այլ հաշիվներին կամ Բանկի տարանցիկ հաշվին, որը ստանալու համար Հաճախորդը կարող է անձնագրով մոտենալ Բանկի ցանկացած մասնաճյուղ, բացառությամբ քարտին տրամադրված վարկային գծի առկայության դեպքերի, որի պարագայում վարկային քարտն ու քարտային հաշիվները փակվում են միայն այն պարագայում, երբ տվյալ վարկային քարտին տրամադրված վարկային գծի մասով չկան պարտավորություններ /տվյալ դեպքում վարկային քարտին վարկային գծի տրամադրման պայմանագիրը համարում է լուծված/դադարած, իսկ վարկը ուղղվում է մարման/ :

13.10. Վարկային գծի մարման առանձնահատկություններ

13.10.1 Մարման արտոնյալ ժամանակահատվածով վարկային սահմանաչափի օգտագործված մասը (ամբողջը կամ մի մասը) ենթակա է մարման (վճարման) ոչ շուտ, քան արտոնյալ ժամանակահատվածի ընթացքում (սկսած քաղվածքի ձևավորման օրվան հաջորդող օրվանից մինչև քաղվածքում նշված արտոնյալ ժամանակահատվածի վերջին օրը ներառյալ): Յուրաքանչյուր քարտի համար արտոնյալ ժամանակահատվածի տևողությունը նշված է համապատասխան վարկային պայմանագրում և սահմանվում է տվյալ վարկատեսակի Սակագներով: Յուրաքանչյուր վարկատեսակի պայմանները նախատեսում են նախորդ ամսվա ընթացքում (նախորդ քաղվածքում նշված

¹ քարտը հաճախորդի ցանկությամբ Բանկի կողմից կթողարկվի, վերջինիս կողմից Բանկ այցելելու և համապատասխան դիմում ներկայացնելու դեպքում:

Ժամանակահատվածում) օգտագործված սահմանաչափի՝ պարտադիր մարման ենթակա նվազագույն գումար, որը Հաճախորդը պետք է վճարի մինչև քաղվածքում նշված արտոնյալ ժամանակահատվածի վերջին օրվա գործառնական օրվա ավարտը ներառյալ, այլապես Հաճախորդից կգանձվի վարկատեսակի պայմաններով նախատեսված վճարման ենթակա նվազագույն գումարի չվճարման տուգանքը, ինչպես նաև Բանկին իրավունք կվերապահվի դիմել դատարան և պահանջել պարտքի մարում: Արտոնյալ ժամանակահատվածի ընթացքում քաղվածքում նշված օգտագործված գումարն ամբողջությամբ մարելու դեպքում Հաճախորդից վարկի օգտագործման դիմաց տոկոսներ չեն գանձվի, եթե այլ բան սահմանված չէ սույն Կանոններով, Սակագներով և/կամ վարկային պայմանագրով: Հաճախորդը պետք է ուշադիր լինի արտոնյալ ժամանակահատվածում մարումներ կատարելիս, մինչև մարում կատարելը հավաստիանա, որ քաղվածքը ձևավորված է:

13.10.2 Առանց մարման արտոնյալ ժամանակահատվածի վարկային սահմանաչափի տրամադրման դեպքում՝ եթե տվյալ վարկատեսակի պայմանները/սակագները նախատեսում են օգտագործված սահմանաչափի նվազագույն գումար՝ ներառյալ հաշվեգրված տոկոսագումարը, որը Հաճախորդը պետք է վճարի յուրաքանչյուր ամսվա վերջում՝ քաղվածքում նշված օրը, այլապես Հաճախորդից կգանձվի տվյալ վարկատեսակի պայմաններով/Սակագներով նախատեսված վճարման ենթակա նվազագույն գումարի չվճարման տուգանք:

13.10.3 Վարկային գծի մասով Ձևավորված պարտքի ոչ ամբողջական մարման դեպքում չմարված մասի նկատմամբ հաշվարկվում են տոկոսներ (սկսած նախորդ ամսվա ընթացքում չմարված առաջին իսկ գործարքի օրվանից՝ տարին հաշվարկելով 365 օր), որոնք հաշվեգրվում են որպես առանձին գործարք՝ ավելանալով գործող սահմանաչափին (կապիտալացվում են): Ընդ որում, տոկոսներն ամբողջ հաշվետու ժամանակահատվածի համար հաշվարկվում են հաշվեգրման օրվա դրությամբ գործող տոկոսադրույքով:

13.10.4 Բանկի քարտերի միջև քարտից քարտ փոխանցման միջոցով վարկային գծի պարտավորության մարում կատարելիս անհրաժեշտ է՝

- մինչև ժամը 15:00 կատարված քարտից քարտ փոխանցման միջոցով փոխանցված գումարը չօգտագործել քարտային հաշվից մինչև տվյալ օրվա ժամը 21:00: Եթե տվյալ օրը ոչ աշխատանքային է, ապա մինչև հաջորդ աշխատանքային օրվա ժամը 21:00,
- ժամը 15:00-ից հետո կատարված քարտից քարտ փոխանցման միջոցով փոխանցված գումարը չօգտագործել քարտային հաշվից մինչև հաջորդ աշխատանքային օրվա ժամը 21:00:

Սույն կետով սահմանված կանոնների չպահպանման դեպքում, փոխանցված գումարը չի դիտարկվի որպես վարկային պարտավորության մարում:

13.10.5 Վարկային գծի պարտավորության մարում կատարելու համար քարտին մուտքագրված գումարը անհրաժեշտ է չօգտագործել/չելքագրել քարտային հաշվից 24 ժամվա ընթացքում: Սույն կետով սահմանված կանոնի չպահպանման դեպքում, փոխանցված գումարը կարող է չդիտարկվել որպես վարկային պարտավորության մարում:

13.10.6 Քարտային հաշվից նույն օրվա ընթացքում միևնույն գումարի չափով ելքային, այնուհետև մուտքային գործարք իրականացնելու դեպքում վարկային գծի մարում (բացասական մնացորդի համալրում) կատարվում է միայն ելքային գործարքից հետո մուտքագրված գումարը մեկ աշխատանքային օր քարտային հաշվին մնալու պարագայում: Եթե մուտքային գործարքի գումարը գերազանցում է ելքային գործարքի գումարը, գործարքների օրվա դրությամբ կատարվում է վարկային սահմանաչափի մարում գումարի տարբերության չափով, իսկ մնացած մուտքագրված գումարի մարումը տեղի է ունենում գումարը քարտային հաշվին մեկ աշխատանքային օր մնալու դեպքում:

13.11. Քարտով կատարված գործարքները հաշվառելիս՝ ելքագրումները կատարվում են վարկային սահմանաչափից՝ եթե քարտային հաշվին առկա չէ վարկային սահմանաչափը գերազանցող գումար:

13.12. Հաճախորդն ընդունում է, որ վարկային սահմանաչափի բացակայության կամ ոչ բավարար լինելու դեպքում քարտով կատարված գործառնությունների հաշվառման համար Բանկը կարող է առանց Հաճախորդի նախնական հավանության կամ հետագա համաձայնության սահմանել քարտային հաշվի գծով գերաժախս՝ գանձելով վարկային գծի պայմանագրով և Սակագներով սահմանված տույժեր/տոկոսներ/տուգանքներ, ինչպես նաև արգելափակել քարտը: Եթե վարկային քարտն արգելափակված է, ապա այն արգելափակումից կհանվի տուժանքների/տոկոսների և/կամ սահմանաչափի գերազանցած մասի վճարումից հետո:

13.13. Վարկային գծերի դեպքում տրամադրված վարկային սահմանաչափի արժույթից տարբերվող արժույթով միջոցների մուտքագրման պարագայում, երբ առկա է վարկի օգտագործված մաս, վերջինիս մարման նպատակով տվյալ միջոցները փոխարկվում են համապատասխան (տրամադրված վարկային գծի) արժույթի գործառնության հաշվեգրման պահին տվյալ արժույթի համար Բանկում գործող Բանկի կողմից սահմանված փոխարժեքով:

13.14. Վարկային գծերի դեպքում Վարկի մարման վերջնաժամկետը կարող է տարբերվել քարտի գործողության ժամկետից, որն ամրագրված է քարտի դիմերեսին, և որ իր կողմից վարկային գծի ամբողջական մարումը չի հանգեցնում քարտի փակման, ուստի մինչև քարտի փակման դիմում ներկայացնելը Բանկը քարտը կսպասարկի համաձայն Բանկում գործող Սակագների:

13.15. Վճարման արտոնյալ ժամանակահատվածով վարկային քարտի օգտագործման սկզբունքներին առավել մանրամասն ծանոթանալու համար կարելի է ուսումնասիրել Բանկի պաշտոնական կայքում տեղադրված վարկային քարտի օգտագործման ուղեցույցը և օրինակները:

14. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՎԱՐԿ

14.1. Վարկը տրամադրվում է ուսանողի/աշակերտի ուսման վարձը վճարելու համար:

14.2. Վարկը տրամադրվում է միանվագ, անկանխիկ եղանակով և համաձայն Բանկի և հաճախորդի միջև կնքված վարկային պայմանագրի դրույթների փոխանցվում է ուսումնական հաստատության (ՈՒՀ) համապատասխան բանկային հաշվին:

14.3. Բանկն իրավունք ունի ցանկացած ժամանակ Հաճախորդից պահանջել տեղեկանք և այլ անհրաժեշտ փաստաթղթեր ուսանողի/աշակերտի ուսման վերաբերյալ: Ուսման դադարի (ՈՒՀ-ից հեռացման) մասին տեղեկանքի առկայությունը կամ սույն Կանոններով նախատեսված ժամկետում տեղեկանք չներկայացվելը համարվում են ուսման դադարի (ՈՒՀ-ից հեռացման) փաստի հաստատում: Նման դեպքերում Բանկն իրավունք ունի միակողմանիորեն վերանայել և փոփոխել վարկային պայմանագրով սահմանված անվանական տոկոսադրույքը՝ ուսման դադարի (ՈՒՀ-ից հեռացման) փաստի մասին տեղեկանալու հաջորդ օրվանից կամ կատարել Վարկի ետ կանչում:

14.4. Հաճախորդը պարտավոր է Բանկի պահանջի դեպքում 5 աշխատանքային օրյա ժամկետում Բանկ ներկայացնել ուսանողի/աշակերտի ուսման վերաբերյալ տեղեկանք և այլ անհրաժեշտ փաստաթղթեր:

15. ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԳՐԱՎՈՎ ԱՊԱՀՈՎՎԱԾ ՎԱՐԿ/ՎԱՐԿԱՅԻՆ ԳԻԾ

15.1. Վարկը/վարկային գիծը տրամադրվում է միանվագ, անկանխիկ եղանակով:

15.2. Հաճախորդն իրավունք ունի՝ Բանկի նկատմամբ վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունները լրիվ կատարելուց հետո միայն ազատ տնօրինել գրավ հանդիսացող ավանդային հաշվում առկա միջոցները:

15.3. Հաճախորդը պարտավոր է միայն Բանկի համաձայնությամբ տնօրինել գրավ հանդիսացող ավանդային հաշվում առկա դրամական միջոցները (Բանկի համաձայնությունը համարվում է տրված Բանկի կողմից Հաճախորդի վճարման հանձնարարականը կատարման

ընդունելու պահից): Ընդ որում, Բանկի համաձայնությունը համարվում է տրված դրամական միջոցների այն գումարի համար, որը նշվում է ի կատարման ընդունված վճարման հանձնարարականում:

16. ՈՍԿՅԱ ԻՐԵՐԻ ԳՐԱՎԱԴՐՄԱՆ ԴԻՄԱՑ ՎԱՐԿ

16.1. Վարկը տրամադրվում է միանվագ, անկանխիկ եղանակով, մուտքագրելով Հաճախորդի նոր կամ գործող բանկային/քարտային հաշվին:

(16.1. կետը փոփոխվել 16.06.2022թ. Տնօրինության թիվ 158 որոշմամբ)

17. ԱՊԱՌԻԿ ՎԱՐԿԱՎՈՐՈՒՄ

17.1. Ապառիկ վարկավորման շրջանակում Բանկը Վարկային, կոշտ գրավի և Բանկային հաշվի բացման պայմանագրի (այսուհետ՝ Ապառիկի պայմանագիր) հիման վրա, Բանկում գործող ապառիկ վարկավորման պայմաններով, Բանկի գործընկեր հանդիսացող կազմակերպությունների միջոցով (վաճառակետերից) իրականացնում է տարաժամկետ վճարման պայմանով ապրանք(ներ)ի/ծառայությունների ձեռք բերում:

17.2. Վարկը տրամադրվում է Հաճախորդի կողմից ապրանքներ/ծառայություններ ձեռք բերելու նպատակով:

17.3. Ապառիկ Վարկը տրամադրվում է անկանխիկ և միանվագ, հաճախորդի հանձնարարականի հիման վրա Վարկի գումարը Բանկի գործընկեր կազմակերպության (որի միջոցով ձեռք է բերվում ապրանք/ծառայությունը) հաշվին փոխանցելու միջոցով:

17.4. Վարկը տրամադրված է համարվում Բանկի գործընկեր հանդիսացող կազմակերպության (վաճառակետի) հաշվին փոխանցելու օրը:

17.5. Այն դեպքում, երբ Հաճախորդը Բանկում հաշիվ չի ունենում, Վարկի տրամադրման օրը Բանկի կողմից, Բանկում գործող պայմաններով, բացվում է Բանկային հաշիվ (դրամային հաշիվ) (այսուհետ՝ Բանկային Հաշիվ), ինչի վերաբերյալ Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը՝ ստորագրելով Ապառիկի պայմանագիրը, ինչպես նաև Հաճախորդը, ստորագրելով Ապառիկի պայմանագիրը, Բանկին տալիս է հանձնարարագիր՝ տրամադրված Վարկի գումարը ամբողջությամբ փոխանցելու Վաճառողի Բանկում բացված հաշվին: Ապառիկ վարկավորման պայմանագրի շրջանակում բացված բանկային հաշվի համար սահմանված չէ սպասարկման վճար և այն կգործի անժամկետ մինչ վերջինիս փակման մասին Հաճախորդի կողմից Բանկին գրավոր դիմում ներկայացնելը:

17.6. Ապառիկի պայմանագրով ձեռք բերվող ապրանքները կարող են ձեռք բերվել նաև այդ ապրանքների ապահովագրության հնարավորությամբ, եթե դա նախատեսված է տվյալ վարկատեսակով:

18. ԱՎՏՈՎԱՐԿ

18.1. Վարկը տրամադրվում է Հաճախորդի կողմից ինչպես առաջնային, այնպես էլ երկրորդային շուկայից ավտոմեքենա ձեռք բերելու նպատակով:

18.2. Վարկը տրամադրվում է միանվագ, անկանխիկ եղանակով:

18.3. Վարկը տրամադրվում է ավտոմեքենայի գրավի պայմանագրի պատշաճ կնքելուց հետո:

18.4. Բանկն իրավունք ունի ավտոմեքենայի գրավի պայմանագրից ծագած իրավունքը սահմանված ժամկետում Պետական լիազոր մարմնի կողմից չգրանցվելու դեպքում, Վարկի տրամադրման օրվան հաջորդող 16-րդ (տասնվեցերորդ) աշխատանքային օրը Բանկային հաշվին առկա/սառեցված Վարկի գումարը ուղղել վարկային պարտավորությունների մարմանը:

18.5. Հաճախորդը պարտավոր է գրավի առարկա հանդիսացող ավտոմեքենան օգտագործել բացառապես անձնական օգտագործման համար նախատեսված, ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված նպատակներով այդ թվում՝ չօգտագործել որպես տաքսի: Նշված պայմանի խախտման դեպքում Բանկն իրավունք ունի Վարկի տարեկան տոկոսադրույքը միակողմանի փոփոխել և սահմանել առավելագույնը բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկի չափով, որի հետևանքով կփոփոխվի նաև փաստացի տոկոսադրույքը: Նշված պահանջի խախտումը կարող է հանգեցնել նաև ապահովագրական պատահարի դեպքում՝ ապահովագրական ընկերության կողմից վնասի հատուցման մերժման:

18.6. Հաճախորդը պարտավոր է գրավի առարկա հանդիսացող ավտոմեքենան շահագործել բացառապես Հայաստանի Հանրապետության տարածքում: Սույն պահանջի խախտման և/կամ Բանկի պահանջով ավտոմեքենան 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում Բանկ չներկայացնելու դեպքում՝ Բանկն իրավունք ունի Վարկը որակել որպես անապահով, և Հաճախորդից պահանջել կամ Բանկի համար ընդունելի նոր ապահովման միջոցի ներկայացում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ պահանջել Վարկի ամբողջ գումարի հետ վերադարձ, կամ Վարկի տարեկան տոկոսադրույքը միակողմանի փոփոխել և սահմանել առավելագույնը բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկի չափով:

19. ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՃԱԽՈՐԴԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

19.1. Հաճախորդն իրավունք ունի՝

19.1.1 Բանկի հետ վարկային պայմանագրի կնքմանը հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում (մտածելու ժամանակ) միակողմանիորեն առանց որևէ պատճառաբանության լուծել վարկային պայմանագիրը: Այդ դեպքում Հաճախորդը պարտավորվում է Բանկին վճարել Վարկի գումարը (այդ թվում՝ վարկային պայմանագրի համաձայն այլ ֆինանսական կազմակերպությունում առկա վարկային պարտավորությունների մարմանն ուղղված Վարկի գումարը) և Վարկի գումարը օգտագործելու համար տոկոսներ (օգտագործած օրերի համար), որոնք հաշվարկվում են վարկային պայմանագրով նախատեսված տարեկան փաստացի տոկոսադրույքով:

19.1.2 ***Վարկային պայմանագրում նշված ժամկետներից շուրջ կատարել վարկի մարում: Ժամկետից շուրջ պարտավորության մարման համար տրուժանք չի գանձվում: Պայմանագրում նշված ժամկետից շուրջ վարկի մարման դեպքում՝***

- ենթակա են նվազեցման վարկի մնացորդի նկատմամբ հաշվարկվող տոկոսների, միջնորդավճարների և սպասարկման վճարների ծախսը:***
- ենթակա չեն նվազեցման սույն պայմանագրի պայմանների չկատարման կամ ոչ պարզաճ կատարման համար վճարված տրուժանքները, վարկի մարման և/կամ տոկոսների վճարման նպատակով կատարված փոխանցումների համար, ինչպես նաև այդ նպատակով բացված հաշիվների սպասարկման համար վճարված գումարները, նոտարական վավերացման, պետական գրանցման (նշված ծառայությունների առկայության դեպքում) դիմաց կատարված վճարները, հավելյալ՝ սույն վարկի հետ կապ չունեցող, վարկառուի ցանկությամբ ընտրված ապահովագրական ծառայությունների դիմաց կատարված ապահովագրավճարները:***
- Վարկի ամբողջական վաղաժամկետ մարման դեպքում ենթակա են վերադարձման նախապես վճարված, սակայն փաստացի չօգտագործված ամիսների/օրերի համար կատարված վճարները:***

19.1.3 Գրավոր դիմել Բանկին՝ պահանջելով վաղաժամկետ լուծել վարկային պայմանագիրը և/կամ փակել վարկային սահմանաչափը՝ միաժամանակ մարելով Բանկի նկատմամբ ունեցած պարտավորությունները:

19.1.4 Վարկային գծերի դեպքում գրավոր դիմել Բանկին՝ պահանջելով վաղաժամկետ լուծել վարկային պայմանագիրը և/կամ փակել վարկային սահմանաչափը՝ միաժամանակ ասպահովելով նվազագույնը Բանկի նկատմամբ քարտի գծով ունեցած պարտավորությունների չափով դրական մնացորդ: Հաճախորդի դիմումը (Բանկի կողմից սահմանված տիպային ձևին համապատասխան) ստանալու պահից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում Բանկը կդադարեցնի տվյալ քարտի սպասարկումը պարտավորության չափով գումարի ամբողջական առկայության դեպքում, իսկ անբավարարության դեպքում՝ Բանկում Հաճախորդի հաշիվներին առկա գումարից մարելով Բանկի հանդեպ ունեցած պարտավորությունները: Պարտավորությունների մարման համար Հաճախորդի հաշիվներին բավարար միջոցների բացակայության դեպքում, տվյալ քարտի սպասարկումը չի դադարեցվի, մինչ Հաճախորդի կողմից ամբողջությամբ չկատարվեն պայմանագրով նախատեսված պարտավորությունները: Նման դեպքերում Հաճախորդի քարտի նկատմամբ կարող են կիրառվել Սակագներով սահմանված վճարները:

19.2. Հաճախորդը պարտավոր է՝

19.2.1. Վարկային պայմանագիր կնքելիս կատարել տվյալ վարկատեսակի համար Բանկի Սակագներով սահմանված վճարները:

19.2.2. Ապահովել Վարկի լրիվ օգտագործումը ըստ տվյալ վարկատեսակի նպատակների:

19.2.3. Վարկային պայմանագրի ասպահովման միջոցի պակասի չափով պատասխանատվություն կրել սեփականության իրավունքով իրեն պատկանող ամբողջ գույքով (ունեցվածքով)՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

19.2.4. Վարկը և/կամ հաշվարկված տոկոսագումարները ժամկետանցի դասվելու դեպքում վճարել համապատասխան վարկատեսակի պայմաններով և Սակագներով, ինչպես նաև և Հաճախորդի և Բանկի միջև կնքված վարկային պայմանագրով սահմանված չափով տույժեր ու միաժամանակ փոխհատուցել Բանկին հասցված վնասները:

19.2.5. Վարկային պայմանագրի գործողության ողջ ընթացքում թույլատրել Բանկին կամ Բանկի կողմից լիազորված անձանց, առանց ժամանակային սահմանափակումների իր մոտ կատարել Վարկի նպատակային օգտագործման և/կամ ֆինանսատնտեսական գործունեության ստուգումներ՝ ասպահովելով ստուգողի կողմից պահանջվող իր ֆինանսատնտեսական վիճակին վերաբերող և բնութագրող, ստացված միջոցների նպատակային օգտագործումը հիմնավորող և այլ փաստաթղթերի տրամադրումը կամ դրանց ներկայացումը Բանկին:

19.2.6. Բանկում չմարված պարտավորություններ/վարկեր ունենալու դեպքում՝ նախապես՝ ոչ ուշ քան երկու բանկային օրվա ընթացքում տեղեկացնել Բանկին երրորդ անձանցից վարկեր (փոխառություններ) կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով այլ միջոցներ ներգրավելու, սնանկացման կամ անվճարունակության հիմքերով Հաճախորդի նկատմամբ որևէ անձի կողմից դատարան հայց ներկայացնելու կամ այդպիսի հայցի առկայության դեպքում:

19.2.7. Բանկում չմարված պարտավորություններ/վարկեր ունենալու պարագայում՝ իր նկատմամբ սնանկացման գործընթաց սկսվելու դեպքում անհապաղ մարել Վարկը՝ անկախ դրա մարման պայմանագրային ժամկետից՝ վճարելով Վարկի օգտագործման փաստացի ժամկետի համար հասանելիք տոկոսագումարներն ու տույժերը և Վարկի տրամադրման ու սպասարկման համար նախատեսված այլ վճարները:

19.2.8. Վճարել Բանկի Սակագներով և պայմաններով նախատեսված վճարները, համաձայն Բանկում տվյալ պահին գործող Սակագների և պայմանների:

20. ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԱՆԿԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

20.1. Բանկն իրավունք ունի՝

20.1.1. Հրաժարվել Հաճախորդին Վարկ տրամադրելուց, եթե ծագել են այնպիսի հիմնավոր հանգամանքներ, որոնք ակնհայտորեն վկայում են, որ Հաճախորդին տրամադրվելիք գումարը չի վերադարձվի ամբողջությամբ կամ մասնակիորեն:

20.1.2. Հաճախորդի և Բանկի միջև կնքված վարկային և/կամ գրավի պայմանագրով նախատեսված ցանկացած պայմանի չկատարման /ժամանակին չկատարման/, ինչպես նաև Հաճախորդի ֆինանսատնտեսական վիճակի վատթարացման, վարկ ստանալու նպատակով ներկայացված փաստաթղթերում կեղծ տվյալների հայտնաբերման դեպքում, առանց Բանկի գրավոր նախապես ձեռք բերված համաձայնության վարկային պայմանագրի պայմաններով ուղղակիորեն արգելված գործողություններ իրականացնելու դեպքում՝

- պահանջ ներկայացնել Վարկի պարտքի նրա նկատմամբ հաշվարկված տոկոսների, վարկային հաշվի սպասարկման ամսական միջնորդավճարի և տույժերի վաղաժամկետ գանձման,
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով բռնագանձման հայց ներկայացնել դատարան (գրավի առարկայի վրա կարող է բռնագանձում տարածվել):

20.1.3. Հաճախորդի պարտավորությունների նկատմամբ պահանջի իրավունքը զիջել (փոխանցել) երրորդ անձի առանց Հաճախորդի լրացուցիչ համաձայնության,

20.1.4. Բանկում չմարված պարտավորություններ/վարկեր ունենալու պարագայում՝ երրորդ անձանց կողմից Հաճախորդին տրամադրված վարկերի (փոխառությունների) գծով ժամկետանց պարտավորություններ առաջացնելու դեպքում և /կամ Հաճախորդի ֆինանսատնտեսական վիճակի վատթարացման դեպքում պահանջել Հաճախորդից Վարկի վաղաժամկետ մարում:

20.1.5. Հաճախորդի և Բանկի միջև կնքված վարկային պայմանագրի շրջանակում կասեցնել տույժերի և տուգանքների հաշվեգրումը առանց Հաճախորդի լրացուցիչ համաձայնության: Ստորագրելով վարկային պայմանագիրը՝ Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը տույժերի և տուգանքների հաշվեգրման կասեցման համար:

20.1.6. Անհարժեշտության դեպքում Հաճախորդից պահանջել լրացուցիչ փաստաթղթեր:

20.1.7. Վարկային պայմանագրի գործողության ամբողջ ժամանակահատվածում առանց ժամանակային սահմանափակումների իրականացնել Վարկի նպատակային օգտագործման, գրավի առարկայի ստուգում (լուսանկարահանում):

20.1.8. Հաճախորդի վարկունակությունը ստուգելու և վերահսկելու նպատակով իր իրավասու աշխատակիցների միջոցով շարունակական հսկողություն իրականացնել Հաճախորդի ֆինանսական վիճակի նկատմամբ և պահանջել ցանկացած տեղեկատվություն, որը Հաճախորդը պարտավոր է տրամադրել:

20.1.9. Փոփոխել վարկային գծի/քարտի/Վարկի պայմանները՝ նախապես այդ մասին ծանուցելով Հաճախորդին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում և կարգով՝ Բանկի և Հաճախորդի միջև կնքված համապատասխան պայմանագրով Հաճախորդի կողմից նշված եղանակով: Եթե փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո Հաճախորդը շարունակում է օգտվել Վարկից, քարտից, վարկային սահմանաչափից կամ չի հանձնում քարտը՝ ամբողջական մարելով վարկային պարտավորությունները, ապա փոփոխությունները համարվում են Հաճախորդի կողմից ընդունված:

20.2. Բանկը պարտավոր է՝

20.2.1. Սույն Կանոնների շրջանակներում և Հաճախորդի՝ Բանկի պահանջներին համապատասխանելու դեպքում՝ Հաճախորդին տրամադրել Վարկի տրամադրման դիմումում նշված վարկատեսակի և Բանկի կողմից հաստատված պայմաններով և գումարի չափով Վարկ:

20.2.2. Պահպանել պայմանագրերի գաղտնիությունը ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով:

20.2.3. Վարկի պայմանների միակողմանի փոփոխման դեպքում այդ մասին առնվազն 7 /յոթ/ աշխատանքային օր առաջ ծանուցել Հաճախորդին՝ Բանկի և Հաճախորդի միջև կնքված համապատասխան պայմանագրով ընտրված հաղորդակցման եղանակով, որը հիմք է հանդիսանում ծանուցման մեջ նշված ժամկետից փոփոխված պայմանները կիրառելու համար: Եթե Հաճախորդը համաձայն չէ փոփոխված պայմանների հետ, ապա նա իրավունք ունի վաղաժամկետ լուծել վարկային պայմանագիրը՝ կատարելով լուծման օրվա դրությամբ Բանկի հանդեպ վարկային պայմանագրով ստանձնած իր պարտավորություններն ամբողջ ծավալով:

21. ՎԱՐԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

21.1.Սպառողական Վարկ առանց գույքի գրավադրման վարկի/վարկային գծի ապահովություն է հանդիսանում Հաճախորդի աշխատավարձի/եկամտի և իր հաշվին դրամական մուտքերի ստացման իրավունքը (Գրավի առարկա): Գրավի առարկան չի անցնում Բանկի տիրապետմանը: Նշվածից բացառություն է կազմում առաջնակարգ գրավով ապահովված վարկային գիծը:

21.2. Ուսանողական վարկի ապահովություն կարող է հանդիսանալ Հաճախորդի աշխատավարձի/եկամտի և իր հաշվին դրամական մուտքերի ստացման իրավունքը (Գրավի առարկա) և/կամ երաշխավորությունը: Գրավի առարկան չի անցնում Բանկի տիրապետմանը:

21.3. Առաջնակարգ գրավով ապահովված վարկի/վարկային գծի պայմանագրով ապահովություն են հանդիսանում Հաճախորդի՝ Բանկում սպասարկվող ժամկետային ավանդային հաշվում առկա դրամական միջոցները (այսուհետ՝ Ավանդային հաշիվ), ինչպես նաև Հաճախորդի՝ ավանդի պահանջի իրավունքը (այսուհետ՝ Գրավի առարկա): Վարկային պայմանագիրը կնքելու պահից Ավանդային հաշվին շնորհվում է Դեպոզիտ գրավային հաշվի (այսուհետ՝ Դեպոզիտ հաշիվ) կարգավիճակ: Վարկային պայմանագրի ստորագրման պահից Դեպոզիտ հաշվին վերաբերող ցանկացած կնքված այլ պայմանագիր կամ համաձայնագիր գործում է այնքանով, որքանով չի հակասում վարկային պայմանագրին: Գրավի առարկան գտնվում է Բանկի տիրապետման ներքո: Հաճախորդը երաշխավորում և հաստատում է, որ Գրավի առարկան վարկային պայմանագրի կնքման պահին, սեփականության իրավունքով պատկանում է իրեն, համատեղ սեփականության իրավունքով չի պատկանում որևէ այլ անձի, որևէ կերպ սահմանափակված չէ երրորդ անձանց իրավունքներով՝ Գրավի առարկան չի հանդիսանում այլ Գրավի առարկա, արգելանքի կամ կալանքի տակ չի գտնվում:

Այն դեպքում, երբ Գրավի առարկան հանդիսանում է մեկից ավելի վարկային պայմանագրերով նախատեսված պարտավորությունների կատարման ապահովում, պարտավորություններից յուրաքանչյուրի ժամկետանցման դեպքում ժամկետանց են համարվում Գրավի առարկայով ապահովված բոլոր պարտավորությունները՝ անկախ այդ պարտավորությունների կատարման վերջնաժամկետներից և ժամկետանց լինելու հանգամանքից: Տվյալ պարագայում Հաճախորդը Բանկին տալիս է իրավասություն որոշելու Գրավի առարկայի հաշվին պարտավորությունների մարման հերթականությունը:

21.4. Ոսկյա իրերի գրավադրման դիմաց վարկի տրամադրման պայմանագրով ապահովություն են հանդիսանում վարկային պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող գույքագրման ակտում նկարագրված ոսկյա իրերը (այսուհետ՝ Գրավի առարկա): Գրավի առարկան անցնում է Բանկի տիրապետմանը: Գրավի առարկայի հետ հանձնումը Հաճախորդին կատարվում է վարկային պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող Վերադարձման ակտի հիման վրա: Ստորագրելով վարկային պայմանագիրը՝ Հաճախորդը երաշխավորում և հաստատում է, որ Գրավի առարկան վարկային պայմանագրի կնքման պահին սեփականության իրավունքով պատկանում է

բացառապես իրեն, այլ անձի չի վաճառվել, որևէ կերպ սահմանափակված/ծանրաբեռնված չէ երրորդ անձանց իրավունքներով, չի հանդիսանում այլ գրավի առարկա, վեճի առարկա չէ, արգելանքի կամ կալանքի տակ չի գտնվում:

21.4.1. Բանկ իրավունք ունի ցանկացած ժամանակ վերագնահատել Գրավի առարկան:

21.4.2. Գրավ առարկայի վերագնահատման արդյունքում վերջինիս արժեքի նվազման դեպքում (այդ թվում՝ Գրավի առարկայի՝ գույքագրման ակտում նշված կշռի/հարգի հետ փաստացի անհամապատասխանության բացահայտման դեպքում) Բանկն իրավունք ունի Գրավի առարկայի նվազած արժեքի չափով Հաճախորդից պահանջելու Բանկի համար ընդունելի լրացուցիչ գրավ և/կամ այդ չափով Վարկի վաղաժամկետ մարում: Սույն կետով նախատեսված կանոնը գործում է նաև այն դեպքերում, երբ Գրավի առարկայի շուկայական արժեքն ավելի ցածր է, քան Վարկի մնացորդի գումարը՝ բազմապատկած 1.02 գործակցով կամ եթե 999 հարգի ոսկու 1 գրամի արժեքը (համաձայն ՀՀ ԿԲ պաշտոնական կայքի տվյալների) նվազել է ավելի քան 10 /տասը/ տոկոսային կետով՝ համեմատած Պայմանագրի կնքման օրվա դրությամբ եղած արժեքից:

21.4.3. Գրավի առարկան չի ապահովագրվում:

21.4.4. Պայմանագրով ստանձնած վարկային պարտավորությունների ամբողջական կատարումից հետո Գրավի առարկան հետ է վերադարձվում Հաճախորդին (նրա ժառանգին) կամ նրա լիազորված անձին (պատշաճ կարգով կազմված ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վավերացված լիազորագրի հիման վրա):

21.4.5. Այն դեպքում, երբ Վարկը ամբողջությամբ մարվելուց հետո Հաճախորդը Գրավի առարկան չի վերցնում Բանկից Գրավի առարկան ձևակերպվում է որպես Բանկում ի պահ ընդունված արժեք, և Վարկը մարվելուց հետո 16-րդ աշխատանքային օրվանից սկսած Հաճախորդից գանձվում է Գրավի առարկայի պահպանության միջնորդավճար՝ յուրաքանչյուր օրացուցային օրվա համար Գրավի առարկայի գնահատված արժեքի 0,01%-ի չափով: Այն դեպքում, երբ Գրավի առարկան հանդիսանում է մեկից ավելի վարկերի ապահովման միջոց, ապա Վարկերի միաժամանակյա մարման դեպքում որպես Գրավի առարկայի պահպանության միջնորդավճարի հաշվարկման համար հիմք է ընդունվում ավելի ուշ կնքված վարկային պայմանագրով սահմանված միջնորդավճարի չափը, իսկ Վարկերի՝ տարբեր ժամանակահատվածներում մարվելու դեպքում, 16 աշխատանքային օրվա հաշվարկը կատարվում է ավելի ուշ մարված վարկի մարման օրվանից, և Գրավի առարկայի պահպանության միջնորդավճարի հաշվարկման համար հիմք է ընդունվում ավելի ուշ մարված Վարկի վարկային պայմանագրով սահմանված միջնորդավճարի չափը: Հաճախորդի մահվան դեպքում Գրավի առարկայի ստացման համար Հաճախորդի ժառանգի(ների) կողմից ժառանգության վկայականը ներկայացնելու դեպքում վերջին/ներ/իցս Գրավի առարկայի պահպանության միջնորդավճար չի գանձվում:

21.4.6. Պայմանագրի գործողության ընթացքում Բանկն իրավունք ունի ցանկացած ժամանակ, ցանկացած պատճառով, անհրաժեշտություն առաջանալու հիմքով առանց Հաճախորդի նախնական համաձայնության կամ վերջինիս նախապես տեղեկացնելու բացել Գրավի առարկան պարունակող կնքված պարկերը, ինչի համար Հաճախորդը տալիս է իր անվերապահ և անհետկանչելի համաձայնությունը՝ ստորագրելով վարկային պայմանագիրը:

21.5. Ապառիկի պայմանագրով ապահովություն են հանդիսանում այդ պայմանագրի համաձայն ձեռք բերվող ապրանքները/իսկ ծառայությունների դեպքում՝ Հաճախորդի եկամտի ստացման իրավունքը: Գրավի առարկան չի անցնում Բանկի տիրապետմանը:

21.6. Ավտոմարկի կամ ավտոմեքենային գրավադրմամբ ցանկացած սպառողական վարկի (այդ թվում՝ վարկի գնման/վերաֆինանսավորման) տրամադրման պայմանագրով ապահովություն է հանդիսանում համապատասխանաբար ձեռք բերվող կամ արդեն իսկ առկա ավտոմեքենան: Գրավի առարկան չի անցնում Բանկի տիրապետմանը:

21.7. Անշարժ գույքի գրավադրմամբ ցանկացած սպառողական վարկի (այդ թվում՝ վարկի գնման/վերաֆինանսավորման) տրամադրման պայմանագրով ապահովություն է հանդիսանում ձեռք բերվող կամ արդեն իսկ գոյություն ունեցող անշարժ գույքը: Գրավի առարկան չի անցնում Բանկի տիրապետմանը:

22. ԳՐԱՎԻ ԱՌԱՐԿԱՅԻ ՎՐԱ ԲՈՆԱԳԱՆՁՈՒՄ ՏԱՐԱԾԵԼՈՒ ԿԱՐԳԸ

22.1. Հաճախորդի կողմից վարկային պայմանագրով ստանձնած իր պարտավորությունների չկատարման դեպքում Գրավի առարկայի վրա կարող է բռնագանձում տարածվել: Գրավի առարկայի արտադատական կարգով բռնագանձման Բանկի իրավունքը որևէ կերպ չի կարող մեկնաբանվել որպես վերջինիս պարտավորություն և որևէ կերպ չի սահմանափակում Բանկի իրավունքը Գրավի առարկայի վրա բռնագանձում տարածել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դատական կարգով /այդ թվում՝ արբիտրաժի միջոցով՝ արբիտրաժային համաձայնության առկայության դեպքում/:

22.2. Սույն գլխով նախատեսված բռնագանձման ընթացակարգերը գործում են այն դեպքում, երբ Բանկի և Հաճախորդի միջև կնքված վարկային պայմանագրերով այլ բան սահմանված չի լինում:

22.3. Առաջնակարգ գրավի առարկա հանդիսացող դրամական միջոցների հաշվին պարտավորության կատարման կարգը

22.3.1. Ստորագրելով վարկային պայմանագիրը՝ Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը Բանկին վարկային պայմանագրով սահմանված ժամկետներում իր ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Գրավի առարկան՝ դրամական միջոցները ուղղել վարկային պարտավորության կատարմանը:

22.3.2. Բանկը կատարում է վարկային պայմանագրով Բանկին հասանելիք գումարների մարում (հետվերադարձ) Դեպոզիտ հաշվից դրամական միջոցների անակցեպտ հաշվանցման եղանակով Հաճախորդի կողմից վարկային պայմանագրի ստորագրման ուժով Բանկին տրամադրված չակցեպտավորված հաշվանցման իրավունքի հիման վրա: Վարկային պայմանագրի ստորագրմամբ սույն կետի դրույթը համարվում է Հաճախորդի կողմից Բանկին տրված հանձնարարագիր՝ Բանկի հանդեպ ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովելու համար:

22.3.3. Հաճախորդի կողմից **վարկի** (ներառյալ մայր գումար, տոկոսներ, տուգանքներ, տույժեր և այլ վճարներ՝ առկայության դեպքում) հերթական մարման պարտավորությունը չկատարելու(մինչև վարկի գործողության ավարտը) դեպքում առանց Հաճախորդին լրացուցիչ ծանուցելու՝

1) ընթացիկ պարտքի չափով իրականացվում է գրավի (ավանդի) գումարի նվազեցում, սակայն ոչ ավել, քան ավանդային պայմանագրի պայմաններով սահմանված ավանդի նվազագույն մնացորդի չափը, իսկ ավանդի մնացած մասը շարունակում է սպասարկվել համաձայն ավանդի տվյալ տեսակի համար գործող պայմաններին:

2) այն դեպքում, եթե ընթացիկ պարտքի մարման արդյունքում ավանդի գումարը կլինի տվյալ ավանդատեսակի համար Բանկում սահմանված նվազագույն գումարից փոքր՝ Հաճախորդի ավանդային պայմանագիրը լուծվում է և իրականացվում է վարկի (ներառյալ մայր գումար, տոկոսներ, տուգանքներ, տույժեր և այլ վճարներ՝ առկայության դեպքում) ամբողջական մարում ավանդի գումարի հաշվին:

Ավանդի հաշվին ժամանակացույցի համաձայն վարկի ընթացիկ պարտավորության ավտոմատ 2 (երկու) մարումներից հետո Հաճախորդի կողմից ժամանակացույցի համաձայն պարտավորության հերթական չվճարման դեպքում Հաճախորդի ավանդային պայմանագիրը լուծվում է առանց իրեն լրացուցիչ ծանուցելու և իրականացվում է Վարկի (ներառյալ մայր գումար, տոկոսներ, տուգանքներ, տույժեր և այլ վճարներ՝ առկայության դեպքում) ամբողջական մարում ավանդի գումարի հաշվին: Այն դեպքում, եթե ավանդի հաշվին Վարկի ամբողջական մարումից հետո առաջանում է

դրական տարբերություն՝ գերազանցող գումարը փոխանցվում է Հաճախորդի բանկային հաշվին: Ընդ որում՝ ավանդի նկատմամբ հաշվարկվող տոկոսների վերահաշվարկը իրականացվում է ավանդային պայմանագրի պայմանների համաձայն: Եթե ավանդային պայմանագրի լուծման բոլոր վերոնշյալ դեպքերում ավանդի գումարը բավական չէ վարկի (ներառյալ մայր գումար, տոկոսներ, տուգանքներ, տույժեր և այլ վճարներ՝ առկայության դեպքում) ամբողջական մարման համար, ապա Վարկի մնացած չմարված մասը տվյալ մնացորդի չափով շարունակում է սպասարկվել որպես հաշիվներով միջոցների շրջանառության ապահովմամբ սպառողական վարկ:

22.3.4. Վարկային պարտավորությունների ամբողջական մարման օրը այդ պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Ժամկետային ավանդային պայմանագիրն ավտոմատ լուծվում է առանց Հաճախորդին լրացուցիչ ծանուցելու և իրականացվում է վարկի (մայր գումարի, տոկոսների, տուգանքների, տույժերի և այլ վճարների՝ առկայության դեպքում) մարում՝ Ավանդի գումարի հաշվին: Այն դեպքում, եթե Ավանդի գումարը գերազանցում է վարկի գումարը (մայր գումարը, տոկոսները, տուգանքները, տույժերը և այլ վճարները՝ առկայության դեպքում)՝ գերազանցող գումարը փոխանցվում է Հաճախորդի բանկային հաշվին: Ընդ որում՝ Ավանդի դիմաց վճարվում են Ավանդի լուծման ամսաթվի դրությամբ հաշվարկված տոկոսները, բայց Ավանդի ձևակերպման պահին գործող նախորդող ժամանակահատվածի/ժամկետի տոկոսադրույքով: Օրինակ, եթե վարկային պայմանագրի գրավ հանդիսացող ավանդի լուծումը իրականացվել է ավանդի գործողության 95-րդ օրը, ընդ որում՝ նշված ժամկետը, համաձայն տվյալ ավանդի ձևակերպման պահին գործող պայմանների, մտնում է 91-ից 180 օր ժամանակահատվածի մեջ, որի տոկոսադրույքը կազմում էր x%, իսկ նաղորդող 60-ից 90 օր ժամանակահատվածի համար տոկոսադրույքը ավանդի ձևակերպման պահին կազմում էր y%, ապա տվյալ դեպքում ավանդի վաղաժամկետ մարման դեպքում տոկոսների հաշվարկը կիրականացվի y% տոկոսադրույքով, այլ ոչ թե x%-ով: Այն դեպքում, եթե տվյալ Ավանդի պայմաններով նախորդող ժամանակահատված/ժամկետ չկա, ապա Ավանդի տոկոսների հաշվարկն իրականացվում է Ավանդի լուծման պահին գործող ցպահանջ ավանդի տոկոսադրույքով:

22.3.5. Հաճախորդի կողմից **վարկային գծի** պայմանագրով նախատեսված վարկային գծի վերջնաժամկետի օրվա դրությամբ վարկային գծի ամբողջական մարում չկատարելու դեպքում Բանկն իրավունք ունի, ավանդի վերջնաժամկետը վարկային գծի վերջնաժամկետի հետ համընկնելու կամ գերազանցելու դեպքում՝ առանց Հաճախորդին լրացուցիչ ծանուցելու ավանդի գումարը անակցեպատ կարգով ուղղել վարկային գծի գումարի և հաշվեգրված տոկոսների (առկայության դեպքում՝ նաև տուգանքների, տույժերի և այլ վճարների) մարմանը՝ լուծելով ավանդը վարկային գծի վերջնաժամկետին: Այն դեպքում, եթե վվանդի գումարը գերազանցում է վարկային գծի գումարը և հաշվեգրված տոկոսները (առկայության դեպքում՝ նաև տուգանքները, տույժերը և այլ վճարները), գերազանցող գումարը փոխանցվում է Հաճախորդի բանկային հաշվին: Ընդ որում՝ ավանդի դիմաց վճարվում են ավանդի լուծման ամսաթվի դրությամբ հաշվարկված տոկոսները, բայց ավանդի ձևակերպման պահին գործող նախորդող ժամանակահատվածի/ժամկետի տոկոսադրույքով: Օրինակ, եթե վարկային գծի գրավ հանդիսացող ավանդի լուծումը իրականացվել է ավանդի գործողության 95-րդ օրը, ընդ որում՝ նշված ժամկետը, համաձայն տվյալ ավանդի ձևակերպման պահին գործող պայմանների, մտնում է 91-ից 180 օր ժամանակահատվածի մեջ, որի տոկոսադրույքը կազմում էր 11%, իսկ նաղորդող 60-ից 90 օր ժամանակահատվածի համար տոկոսադրույքը ավանդի ձևակերպման պահին կազմում էր 10%, ապա տվյալ դեպքում ավանդի վաղաժամկետ մարման դեպքում տոկոսների հաշվարկը կիրականացվի 10% տոկոսադրույքով, այլ ոչ թե 11%-ով: Այն դեպքում, եթե տվյալ ավանդի պայմաններով նախորդող ժամանակահատված/ժամկետ չկա, ապա ավանդի տոկոսների հաշվարկն իրականացվում է ավանդի լուծման պահին գործող ցպահանջ ավանդի տոկոսադրույքով:

22.4. Գրավի առարկա հանդիսացող ոսկյա իրերի վրա առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու կարգը.

22.4.1. Վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում գրավադրված ոսկյա իրերի (այսուհետ՝ Գրավի առարկա) վրա Բանկն իրավունք ունի բռնագանձում տարածել արտադատական կարգով, ընդ որում՝ Բանկն իրավունք ունի օգտվելու հետևյալ հնարավորություններից ցանկացածից.

- հիմնական պարտավորության համապատասխան չափի դիմաց Գրավի առարկան վերցնել ի սեփականություն կամ հանձնել այն երրորդ անձին ի սեփականություն, կամ
- իրացնել Գրավի առարկան Հաճախորդի անունից ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով, այդ թվում՝ ուղղակի վաճառքի ճանապարհով:

22.4.2. Հաճախորդի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Բանկը գրավոր՝ պատշաճ ձևով ծանուցում է Հաճախորդին առանց դատարան դիմելու Գրավի առարկայի բռնագանձման մասին:

22.4.3. Բռնագանձման ծանուցումը Հաճախորդին հանձնելուց 2 /երկու/ ամիս հետո Բանկը ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ իրավունք ունի օգտվել (պարտավոր չէ) իրեն վերապահված իրավունքներից ցանկացածից:

22.4.4. Գրավի առարկայի իրացումից ստացված գումարից դրա վրա բռնագանձում տարածելու և իրացնելու համար ծախսերը վճարելու համար անհրաժեշտ գումարները պահելուց հետո, Բանկը բավարարում է վարկային պայմանագրից բխող իր բոլոր պահանջները, իսկ մնացած գումարը վերադարձնում է Հաճախորդին:

22.4.5. Եթե Գրավի առարկայի իրացումից հետո Բանկի պահանջները լրիվ ծավալով չեն բավարարվում, Բանկն իրավունք ունի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով բռնագանձում տարածել Հաճախորդի այլ գույքի վրա:

22.4.6. Գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու և այն իրացնելու պահից Հաճախորդի՝ Գրավի առարկայի նկատմամբ ունեցած բոլոր իրավունքները դադարում են:

22.4.7. Բռնագանձման ծանուցումը Հաճախորդին հանձնելու պահից վարկային պայմանագրից բխող, Բանկի հանդեպ Հաճախորդի ունեցած պարտավորություններն ամբողջությամբ /Վարկի մնացորդը, մինչ այդ պահը կուտակված տոկոսները, տուժանքներն ու վարկային պայմանագրով Հաճախորդի ստանձնած այլ վճարումները/ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 252-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով համարվում են ՉԿԱՏԱՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, այսինքն՝ Հաճախորդն իրավունք ունի դադարեցնելու Գրավի առարկայի արտադատական կարգով բռնագանձումը և դրա իրացումը, եթե կատարի այդ ՉԿԱՏԱՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ամբողջությամբ:

22.4.8. Վարկային պայմանագրի շրջանակներում Հաճախորդին ուղարկված Գրավի առարկայի բռնագանձման վերաբերյալ ցանկացած ծանուցում կամ պահանջ (այսուհետ՝ Ծանուցում), կհամարվի Հաճախորդի կողմից պատշաճ ստացված (վերջինիս պատշաճ հանձնված), եթե այն առձեռն տրամադրվել է Հաճախորդին, կամ պահպանվել է Ծանուցման հետևյալ կարգը.

22.4.8.1. Ծանուցումն ուղարկվել է Հաճախորդի՝ վարկային պայմանագրի վերջում նշված փոստային հասցեով (հասցեի փոփոխված լինելու դեպքում՝ Բանկին ծանուցած վերջին հասցեով),

22.4.8.2. Ծանուցումը Հաճախորդին վերջինիս՝ վարկային պայմանագրի վերջում նշված փոստային հասցեով (հասցեի փոփոխված լինելու դեպքում՝ Բանկին ծանուցած վերջին հասցեով) ուղարկելու օրվանից հաշված 7-րդ (յոթերորդ) օրացուցային օրը Ծանուցումը կհամարվի Հաճախորդին պատշաճ ուղարկված/հանձնված/վերջինիս կողմից ստացված՝ անկախ.

- Հաճախորդի կողմից Ծանուցումը փաստացի ստացված լինելու կամ չլինելու հանգամանքից,

- Ծանուցումը Հաճախորդի փոխարեն այլ անձի կողմից ստացված/կարդացված լինելու հանգամանքից (անկախ նրանից Հաճախորդն այդ մասին իմացել է, թե ոչ),
- այն հանգամանքից, թե 7-րդ (յոթերորդ) օրացուցային օրն աշխատանքային է, թե ոչ:

22.4.9. Ծանուցման ուղարկման օրը որոշվում է Ծանուցումը փոստային ծառայությանը հանձնելու օրով:

22.4.10. Հաճախորդի կողմից իր փոստային հասցեի փոփոխության դեպքում այդ մասին Բանկին չտեղեկացնելու դեպքում՝ Ծանուցումները Բանկին հայտնի /ծանուցված/ վերջին հասցեով ուղարկված լինելու դեպքում դրանք կդիտվեն որպես Հաճախորդի կողմից պատշաճ ստացված Ծանուցումներ:

22.5. Գրավի առարկա հանդիսացող ավտոմեքենայի և/կամ անշարժ գույքի վրա բռնագանձում տարածելու կարգը.

22.5.1. Ստորագրելով վարկային պայմանագիրը Հաճախորդը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տալիս է իր համաձայնությունը և իրավունք է վերապահում (լիազորում է) Բանկին վարկային պայմանագրով սահմանված պարտավորությունների չկատարման կամ անպատշաճ կատարման դեպքում, առանց դատարան դիմելու բռնագանձում տարածել գրավի առարկա հանդիսացող ավտոմեքենայի և/կամ անշարժ գույքի (այսուհետ՝ Գրավի առարկա) վրա և իրացնել այն կամ վարկային պարտավորության /մայր գումար, Վարկային հաշվի սպասարկման ամսական/տարեկան վճարը (առկայության դեպքում), ապահովագրավճար (առկայության դեպքում) տոկոս, տույժ, տուգանք/ համապատասխան չափի դիմաց Գրավի առարկան ի սեփականություն հանձնել Բանկին կամ Բանկի նշած երրորդ անձին կամ ուղղակի վաճառքի ձևով այն վաճառել երրորդ անձին կամ իրացնել Գրավի առարկան լիցենզավորված այլ ընկերությունների կողմից կազմակերպվող հրապարակային սակարկություններում: Ընդ որում, Գրավի առարկայի իրացման նախնական գին է համարվում վարկային պայմանագրում նշված գնահատված գինը: Գրավի առարկան նախնական գնով չվաճառվելու դեպքում, Բանկն իրավունք ունի հաջորդաբար իջեցնել վաճառքի գինը:

22.5.2. Վարկային պայմանագրով նախատեսված գրավով ապահովված վարկային պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու (տոկոսագումարների, վարկային պայմանագրի հավելվածով /տարածամեկետ վճարումների ժամանակացույցով/ սահմանված Վարկի մասնակի մարումների, Վարկային հաշվի սպասարկման ամսական/տարեկան վճարի (առկայության դեպքում), ապահովագրավճարի (առկայության դեպքում), այլ առկա միջնորդավճարների և վարկային պայմանագրով նախատեսված այլ պարտավորությունների կետանց) դեպքում Բանկն իրավունք ունի գրավոր՝ պատշաճ ձևով ծանուցել Հաճախորդին առանց դատարան դիմելու Գրավ առարկայի բռնագանձման մասին (բռնագանձման ծանուցում): Այդպիսի ծանուցումը համարվում է պատշաճ ձևով ուղարկված, եթե այն Հաճախորդը ստացել է առձեռն Բանկից կամ այն ուղարկվել է պատվիրված փոստային նամակով (հեռագրով)՝ վարկային պայմանագիր կնքելիս Հաճախորդի կողմից նշված հասցեով: Նշված եղանակներով Հաճախորդին ծանուցելը համարվում է բռնագանձման ծանուցման պատշաճ ձևով հանձնում:

22.5.3. Բռնագանձման ծանուցումը Հաճախորդին պատշաճ ձևով հանձնելու օրվանից երկու ամիս հետո, Բանկը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի ուժով և պահպանելով գնելու նախապատվության իրավունքի կանոնները՝ իրավունք ունի Հաճախորդի անունից և նրա հաշվին իրացնել Գրավի առարկան Բանկի հայեցողությամբ վերոնշյալ կետում սահմանված ցանկացած եղանակով: Ընդ որում՝ Հաճախորդը և Բանկն ընդունում են, որ նշված ձևերով Գրավի առարկայի իրացման գինը համապատասխանում է տվյալ պահին շուկայում գործող ողջամիտ գնին:

22.5.4. Գրավի առարկայի իրացումից ստացված գումարից պահվում են Գրավ առարկայի իրացման հետ կապված ծախսերը, այսուհետև բավարարվում են Բանկի պահանջները, առկայության դեպքում մարվում են հարկային պարտավորությունները, իսկ մնացած գումարը փոխացվում է

Հաճախորդին (կամ նրա հաշվին Գրավի առարկայի իրացումից հետո 5/հինգ/ բանկային օրվա ընթացքում:

22.5.5. Այն դեպքում, երբ Հաճախորդը և գրավի պայմանագրով Գրավատուն/ները տարբեր անձիք են, ապա սույն գլխում նախատեսված գործընթացներն իրականացվում են նաև Գրավատուի/ների նկատմամբ:

22.5.6. Գրավի իրացումից ստացված գումարով սույն պայմանագրով առաջացած պարտավորություններն ամբողջությամբ չմարվելու դեպքում Բանկն իրավունք ունի առանց լրացուցիչ ծանուցման մնացած պարտավորության մարման պահանջ ներկայացնել դատարան:

22.5.7. Երաշխավորությամբ ապահովված վարկերի դեպքում՝ Հաճախորդի կողմից իր պարտավորությունների չկատարման կամ թերի կատարման պարագայում՝ Բանկն իրավունք է ստանում չկատարված կամ թերի կատարված պարտավորություն կատարման պահանջ ներկայացնել երաշխավորներին՝ համաձայն Բանկի և երաշխավորի միջև կնքված համապատասխան երաշխավորության պայմանագրի դրույթների:

23. ԳՈՒՅՔԻ ԳՐԱՎԱԴՐՄԱՄԲ ՎԱՐԿԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՈՒՅՔԻ ԵՎ/ԿԱՄ ԱՆՁԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

23.1. Ավտովարկի կամ ավտոմեքենայի գրավադրմամբ սպառողական վարկի (այդ թվում՝ վարկի գնման/վերաֆինանսավորման) դեպքում Բանկը պարտավորվում է՝

- Վարկը տրամադրելուց հետո Գրավի առարկան /ավտոմեքենան/ ապահովագրել 1 (մեկ) տարի ժամկետով Բանկի հետ համագործակցող ապահովագրական ընկերություններից մեկում վարկի մնացորդի կամ Գրավի առարկայի /ավտոմեքենայի/ շուկայական արժեքի չափով՝ ելնելով հստակ վարկատեսակի պայմաններից: Յուրաքանչյուր տարի երկարացնել ապահովագրությունը 1 (մեկ) տարով նախորդ տարում վարկի մնացորդի չափով կամ Գրավի առարկա հանդիսացող ավտոմեքենայի շուկայական արժեքի գումարով: Ընդ որում՝ ապահովագրության ժամանակ հաշվի առնվող ավտոմեքենայի շուկայական արժեքը յուրաքանչյուր տարի նվազեցվում է 10-ով%: Վերջին տարվա համար Գրավի առարկան ապահովագրել Վարկի մնացորդային ժամկետով: Եթե ապահովագրության պայմանագրի կնքման/վերակնքման պահին Վարկի մայր գումարի մնացորդը փոքր կամ հավասար է նվազագույն ֆրանշիզային, և/կամ Վարկի մնացորդը փոքր է 30 000 ՀՀ դրամից և/կամ տվյալ Վարկի գծով (մայր գումար և/կամ տոկոսներ) ժամկետանց օրերի քանակը գերազանցում է 271 օրը, ապա ապահովագրության պայմանագրի վերակնքում տեղի չի ունենում:
- Ելնելով հստակ վարկատեսակի պայմաններից՝ Վարկը տրամադրելուց հետո ապահովագրել Հաճախորդին 1 (մեկ) տարով Բանկի հետ համագործակցող ապահովագրական ընկերություններից մեկում դժբախտ պատահարի հետևանքով վրա հասած մահվան, ժամանակավոր և լրիվ անաշխատունակության ռիսկերից՝ կիրառելով վարկային պայմանագրում նշված վարկի գումարի մեջ վարկառուի/համավարկառուի կշռի համամասնությունը առնվազն վարկի գումարի մնացորդի նկատմամբ՝ հայտարարագրելով դա որպես ապահովագրական գումար յուրաքանչյուր անձի գծով, յուրաքանչյուր տարվա համար: Բանկը պարտավոր է յուրաքանչյուր տարի երկարացնել ապահովագրությունը 1 (մեկ) տարով: Վերջին տարվա համար Հաճախորդին ապահովագրել վարկի մնացորդային ժամկետով: Եթե վարկի մնացորդը փոքր է 30 000 ՀՀ դրամից և/կամ տվյալ վարկի գծով (մայր գումար և/կամ տոկոսներ) ժամկետանց օրերի քանակը գերազանցում է 271 օրը, ապա ապահովագրության պայմանագրի վերակնքում տեղի չի ունենում: Ապահովագրությունն իրականացվում է մինչև անձի 65 տարեկանը լրանալը ներառյալ:

(23.1 ենթակետը փոփոխվել է 22.02.2021թ. Տնօրինության թիվ 36 որոշմամբ)

23.2. գույքի գրավադրմամբ ցանկացած սպառողական վարկի (այդ թվում՝ վարկի գնման/վերաֆինանսավորման) դեպքում Բանկը պարտավորվում է

- Վարկը տրամադրելուց հետո Գրավի առարկան /անշարժ գույքը/ ապահովագրել 1 (մեկ) տարով Հաճախորդի կողմից ընտրված Բանկի հետ համագործակցող ապահովագրական ընկերությունում Գրավի առարկայի /անշարժ գույքի/ շուկայական արժեքի կամ վարկի մայր գումարի մնացորդի չափով /չափը որոշվում է ելնելով կոնկրետ վարկատեսակի պայմաններից/: Յուրաքանչյուր տարի երկարացնել ապահովագրությունը 1 (մեկ) տարով: Վերջին տարվա համար Գրավի առարկան /անշարժ գույքը/ ապահովագրել Վարկի մնացորդային ժամկետով: Եթե Վարկի մայր գումարի մնացորդը փոքր է 30 000 ՀՀ դրամից և/կամ տվյալ Վարկի գծով (մայր գումար և/կամ տոկոսներ) ժամկետանց օրերի քանակը գերազանցում է 271 օրը, ապա վերականգնում տեղի չի ունենում,
- Վարկը տրամադրելուց հետո Գրավի առարկան /անշարժ գույքը/ շուկայական արժեքի կամ վարկի մայր գումարի մնացորդի չափով /չափը որոշվում է ելնելով կոնկրետ վարկատեսակի պայմաններից/ ապահովագրել հրդեհից, պայթյունից, ջրի վնասվածքներից, մեխանիկական վնասվածքներից, տարերային աղետներից, երրորդ անձանց հակաօրինական գործողություններից:

23.3. Ստորագրելով վարկային պայմանագիրը Հաճախորդը հավաստում է, որ տեղյակ է և համաձայն, որպեսզի վարկային պայմանագրով նախատեսված ցանկացած ապահովագրության դեպքում Բանկը հանդես գա որպես Ապահովադիր և Շահառու ինչպես նաև այն, որ նա տեղյակ է և համաձայն Ցամաքային տրանսպորտի, Անշարժ գույքի և Դժբախտ պատահարներից ապահովագրության պայմաններին, որոնց ծանոթանում է Բանկում, իսկ ավելի մանրամասն ապահովագրության պայմաններին կարող է ծանոթանալ Բանկի և/կամ համապատասխան ապահովագրական ընկերության կայքից, որի վերաբերյալ նշված է վարկային պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող ապահովագրության հակիրճ տեղեկատվական թերթիկներում: Նշված պայմանները գործում են մեկ տարի ժամկետով, իսկ դրանց փոփոխությունների մասին Հաճախորդը տեղեկացվում է էլեկտրոնային փոստի միջոցով, իսկ Բանկում առկա Հաճախորդի տվյալների մեջ դրա բացակայության դեպքում՝ կարճ հաղորդագրությամբ (SMS)՝ նոր պայմանների ուժի մեջ մտնելուց և դրանց մասին Բանկի տեղեկանալուց հետո առավելագույն 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում:

23.4. Բանկը համաձայնվում է որ պատահարի առաջացման դեպքում Հաճախորդը կամ նրա լիազորված անձը/վարորդը հանդես գա/գան որպես հատուցման գործընթացի անմիջական մասնակից, այդ թվում՝ անհապաղ տեղեկացնի/են ապահովագրական ընկերությանը պատահարի մասին, ներկայացնի/են գրավոր դիմում՝ ապահովագրական հայցը, պատահարը կարգավորելու նպատակով, ինչպես նաև բողոքարկի/են ապահովագրական ընկերության կայացրած որոշումը:

(23 գլխի անվանումը փոփոխվել է Տնօրինության 21.01.2021թ. թիվ 10 որոշմամբ)

24. ԱՌՑԱՆՑ ՎԱՐԿԱՎՈՐՈՒՄ

24.1. Վարկի ստացման հայտը կարող է ներկայացվել նաև առցանց եղանակով: Առցանց եղանակով վարկային հայտի ներկայացման և վարկի ստացման հետագա գործընթացը կազմակերպելու համար անհրաժեշտ է գրանցվել Բանկի պաշտոնական կայքի անձնական էջում (այսուհետ՝ Անձնական էջ):

24.2. Անձնական էջում գրանցվելու համար անհրաժեշտ է Բանկի պաշտոնական կայքում սեղմել աջ անկյունում տեղակայված «Մուտք» կոճակը, այնուհետև ընտրել «Գրանցվել» հրահանգը և լրացնել պահանջվող դաշտերը:

24.3. Անձնական էջում գրանցումից հետո Հաճախորդը հնարավորություն է ստանում ցանկացած պահի մուտք գործել Անձնական էջ և ընտրելով «Ֆիզիկական անձի հայտ» դաշտը, ներկայացնել վարկի ստացման հայտ՝ հետևելով հրահանգներին: «Իմ հայտեր» բլոկում հայտի կարգավիճակը «Ուղարկված է Բանկ» գրառումը ստնալուց հետո անհրաժեշտ է սպասել մինչև Բանկի

համապատասխան աշխատակիցը հինգ աշխատանքային օրվա ընթացքում կապնվի Հաճախորդի հետ՝ հետագա գործընթացը կազմակերպելու համար:

24.4. Լրացված վարկային հայտով որոշման մասին Հաճախորդը կարող է տեղեկանալ Անձնական էջում «Հայտի կարգավիճակ» դաշտում:

24.5. Ապառիկ վարկի առցանց վարկավորման դեպքում՝ հայտի հաստատումից հետո համապատասխան աշխատակիցը ձեռք բերված ապրանքը և վարկային պայմանագիրն ու կից փաստաթղթերը մոտեցնում է Հաճախորդի նշված վայր, որտեղ աշխատակիցը լուսանկարում է Հաճախորդին անձը հաստատող փաստաթղթի հետ միասին և անձը հաստատող փաստաթուղթը առանձին, որից հետո վարկային պայմանագիրն ու կից փաստաթղթերը տալիս է Հաճախորդի ստորագրմանը:

24.6. Սպառողական վարկի առցանց վարկավորման դեպքում՝ վարկային հայտի հաստատումից հետո վարկի տրամադրման գործընթացն իրականացվում է կամ Անձնական էջի միջոցով՝ առանց Բանկ այցելելու կամ Բանկ այցելելու միջոցով:

24.6.1. Անձնական էջի միջոցով վարկային պայմանագրի և կից պայմանների ընդունման համար Հաճախորդը պետք է պատշաճ նույնականացվի: Եթե Հաճախորդը Բանկում ունի գործող քարտ (առանց վարկային սահմանաչափի), ապա անհրաժեշտ է Անձնական էջի համապատասխան դաշտում լրացնել դրա տվյալները: Հաճախորդի Բանկում գրանցված հեռախոսահամարին Բանկի կողմից ուղարկվում է ՍՄՍ հաղորդագրություն, որում նշվում է մեկանգամյա օգտագործման կոդը: Ստացված կոդը ճիշտ մուտքագրած Հաճախորդը համարվում է պատշաճ նույնականացված: Վարկային պայմանագրի և կից պայմանների ընդունումից հետո վարկը տրամադրվում է Հաճախորդի կողմից նշված քարտի հաշվեհամարին՝ համաձայն վարկային պայմանագրի դրույթների, իսկ վարկային պայմանագիրը՝ Բանկի կողմից ստորագրված մեխանիկական միջոցներով՝ օգտագործելով էլեկտրոնային ստորագրման պլանշետները, և կից փաստաթղթերը մեկ աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում են Հաճախորդի էլեկտրոնային փոստի հասցեին: Սպառողական վարկի անհատական թերթիկի, վարկային պայմանագրի և կից պայմանների ընդունման համար Հաճախորդին ուղարկվում է ՍՄՍ հաղորդագրություն՝ համապատասխան հղումով, որի հաստատումը համարվում է նշված պայմանների ընդունում:

24.6.2. Սույն Կանոնների 24.6.1. ենթակետում ներկայացված գործընթացի փուլերից որևէ մեկի իրականացման անհնարինության դեպքում անհրաժեշտ է այցելել Բանկ՝ վարկի ստացման գործընթացը կազմակերպելու նպատակով:

(24 գլուխը լրացվել է 21.12.2020թ. Տնօրինության թիվ 381 որոշմամբ)

25. ՎԱՐԿԵՐԻՆ ԶՈՒԳԱՇԵՌ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀԱՎԵԼՅԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ԶԵՂԶԵՐ

ՀԱՎԵԼՅԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝

25.1. Սպառողական վարկ առանց գույքի գրավադրման, Վարկային գիծ, Ապառիկ վարկ, Ոսկյա իրերի գրավադրման դիմաց վարկ, Ուսանողական վարկ (Բանկի ռեսուրսով) վարկատեսակների համար Բանկում գործում է «Վարկային հաշվի հավելյալ սպասարկում» ծառայությունը, որն իր մեջ ներառում է հետևյալ ծառայությունները՝

- Հատուկ ընդհանրացված տեղեկատվական ձևաչափով հաճախորդի վարկային պատմության վերաբերյալ (ԱՔՌԱ հարցման պատասխանի հիման վրա ձևավորված) տեղեկատվության տրամադրում:
- Դժբախտ պատահարներից ապահովագրություն՝ վարկի գումարի/մնացորդի չափով/վարկի առավելագույն սահմանաչափով (Վարկային գծերի դեպքում) Վարկային հաշվի հավելյալ սպասարկման ժամանակահատվածում:

- Ապառիկ վարկավորման դեպքում շարժական գույքի (ձեռքբերվող ապրանքի) ապահովագրություն՝ Վարկային հաշվի հավելյալ սպասարկման ժամանակահատվածում:

Բանկը «Վարկային հաշվի հավելյալ սպասարկման» ընթացքում Հաճախորդին ապահովագրում է Բանկի հետ համագործակցող ապահովագրական ընկերություններից որևէ մեկում դժբախտ պատահարի հետևանքով վրա հասած մահվան, ժամանակավոր և լրիվ անաշխատունակության ռիսկերից՝ նվազագույնը վարկի գումարի մնացորդի չափով/վարկի առավելագույն սահմանաչափով (Վարկային գծերի դեպքում), առավելագույնը մեկ տարի ժամկետով, որից հետո ապահովագրությունը երկարաձգվում է: Վերջին տարվա համար Բանկը Հաճախորդին ապահովագրում է վարկի մնացորդային ժամկետով: Եթե վարկի մնացորդը/առավելագույն սահմանաչափը փոքր է 30 000 ՀՀ դրամից կամ տվյալ վարկի գծով (մայր գումար և/կամ տոկոսներ) ժամկետանց օրերի քանակը գերազանցում է 90 օրը, ապա վերականգնում տեղի չի ունենում: Ապահովագրությունն իրականացվում է մինչև անձի 65 տարեկանը լրանալը ներառյալ:

Ապառիկ վարկավորման դեպքում «Վարկային հաշվի հավելյալ սպասարկում» ծառայությունը Դժբախտ պատահարներից ապահովագրության փոխարեն ներառում է ձեռք բերվող գույքի ապահովագրություն՝ վարկային հաշվի հավելյալ սպասարկման ժամանակահատվածում, որը ներառում է վարկային պայմանագրով ձեռք բերվող ապրանքների՝ էլեկտրատեխնիկայի, ջեռուցիցների, սանտեխնիկայի և կահույքի հրդեհից և գույքին հասցված այլ ֆիզիկական վնասներից ապահովագրություն՝ առավելագույնը Գրավի առարկայի ձեռք բերման արժեքի չափով առավելագույնը մեկ տարի ժամկետով, որից հետո ապահովագրությունը երկարաձգվում է: Վերջին տարվա համար ապահովագրությունն իրականացվում է Վարկի մնացորդային ժամկետով: Եթե Վարկի մնացորդը փոքր է 30 000 ՀՀ դրամից և/կամ տվյալ Վարկի գծով (մայր գումար և/կամ տոկոսներ) ժամկետանց օրերի քանակը գերազանցում է 90 օրը, ապա վերականգնում տեղի չի ունենում:

Հաճախորդը հնարավորություն ունի սույն գլխում նշված Վարկերից որևէ մեկի վարկային պայմանագիր կնքելիս ընտրել «Վարկային հաշվի հավելյալ սպասարկման» ծառայությունը կամ հրաժարվել դրանից: Հաճախորդն իրավունք ունի ցանկացած պահի հրաժարվել «Վարկային հաշվի հավելյալ սպասարկման» ծառայությունից՝ վճարելով Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված միանվագ տուգանք 1000 ՀՀ դրամի չափով:

Հաճախորդի կողմից «Վարկային հաշվի հավելյալ սպասարկման» ծառայությունն ընտրելու դեպքում՝ նրան կարող են տրամադրվել Բանկում Վարկի սպասարկման արտոնյալ պայմաններ՝ համաձայն տվյալ պահին Բանկում գործող պայմանների և Սակագների: Ընդ որում, Հաճախորդի կողմից «Վարկային հաշվի հավելյալ սպասարկման» ծառայությունից հրաժարման դեպքում, նշված արտոնյալ պայմանները կդադարեն գործել:

Հաճախորդի կողմից «Վարկային հաշվի հավելյալ սպասարկման» ծառայությունն ընտրելու դեպքում՝ Հաճախորդը հավաստում է, որ տեղյակ է և համաձայն, որպեսզի Բանկը հանդես գա որպես ապահովագրիչ և շահառու: Բանկը ապահովագրական պատահարի դեպքում, որպես շահառու միակողմանիորեն տնօրինում է ապահովագրական հատուցման գումարը Բանկում գործող ներքին իրավական ակտերով սահմանված կարգին և ձևին համաձայն:

Բանկն իր հերթին համաձայնվում է, որպեսզի պատահարի առաջացման դեպքում Հաճախորդը հանդես գա, որպես հատուցման գործընթացի անմիջական մասնակից, այդ թվում՝ անհապաղ տեղեկացնել ապահովագրական ընկերությանը պատահարի մասին, ներկայացնել գրավոր դիմում՝ ապահովագրական հայցը, պատահարը կարգավորելու նպատակով, ինչպես նաև բողոքարկել ապահովագրական ընկերության կայացրած որոշումը:

Համապատասխան վարկային պայմանագրով ընտրելով «Վարկային հաշվի հավելյալ սպասարկում» ծառայությունը՝ Հաճախորդը հավաստում է, որ տեղյակ է և համաձայն Դժբախտ պատահարներից ապահովագրության պայմաններին, իսկ Ապառիկ վարկավորման դեպքում՝ Գույքի

ապահովագրության պայմաններին, որոնց ծանոթանում է Բանկում, իսկ ավելի մանրամասն ապահովագրության պայմաններին կարող է ծանոթանալ Բանկի և/կամ համապատասխան ապահովագրական ընկերության կայքից, որի վերաբերյալ նշված է վարկային պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող ապահովագրության հակիրճ տեղեկատվական թերթիկում: Նշված պայմանները գործում են վարկային պայմանագրի գործողության ընթացքում, իսկ դրանց փոփոխությունների մասին Հաճախորդին տեղեկացվում են կարճ հաղորդագրությամբ (SMS)՝ նոր պայմանների ուժի մեջ մտնելուց և դրանց մասին Բանկի տեղեկանալուց հետո առավելագույնը 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում:

ԶԵՂՉԵՐ՝

25.2. Հաճախորդը հնարավորություն ունի օգտվել Բանկում առկա հաշվով ստացվող աշխատավարձի շրջանակում տրամադրվող արտոնյալ պայմաններից, եթե աշխատավարձ է ստանում Բանկում առկա հաշվով կամ համաձայնվում է աշխատավարձային քարտ բացել Բանկում և դրանով ստանալ իր աշխատավարձը կամ համապատասխանում է «Գործի մարդիկ» ծրագրի պայմաններին:

Բանկում առկա հաշվով ստացվող աշխատավարձի առկայության կամ վարկային պայմանագրի կնքումից հետո աշխատավարձը Բանկ տեղափոխելու պայմանն ընտրելու դեպքում՝ Բանկը Հաճախորդին կարող է տրամադրել արտոնյալ պայման՝ տվյալ վարկատեսակի համար Բանկում գործող տոկոսադրույքից զեղչի տեսքով համաձայն տվյալ վարկատեսակի Սակագների: Համապատասխան արտոնյալ պայմաններով վարկային պայմանագրի գործողության ընթացքում Հաճախորդի՝ Բանկում առկա հաշվով ստացվող աշխատավարձի մուտքերի դադարման դեպքում, այդ մասին տեղեկանալու պահից, իսկ աշխատավարձը Բանկ տեղափոխելու պայմանով տրամադրված վարկի դեպքում՝ համապատասխան վարկային պայմանագրի կնքումից հետո 2 (երկու) ամսվա ընթացքում աշխատավարձը Բանկ չտեղափոխելու և/կամ տեղափոխման պարագայում աշխատավարձի մուտքերի դադարման դեպքում, այդ մասին տեղեկանալու պահից, Բանկն իրավունք է ձեռք բերում բարձրացնել համապատասխան վարկային պայմանագրով սահմանված Վարկի տարեկան տոկոսադրույքը Հաճախորդին տամադրված զեղչի չափով, ինչի մասին Բանկը Հաճախորդին տեղեկացնում է տոկոսադրույքի փոփոխման պահից 7 (յոթ) աշխատանքային օր առաջ՝ Բանկի և Հաճախորդի միջև կնքված համապատասխան պայմանագրով ընտրված հաղորդակցման եղանակով: Ստորագրելով վարկային պայմանագիրը՝ Հաճախորդը անվերապահորեն տալիս է իր համաձայնությունը տոկոսադրույքի փոփոխման մասով, և ընդունում, որ որևէ այլ հավելյալ համաձայնագիր չի կնքվելու:

ՎԱՐԿԻ ԳՆՈՒՄ/ՎԵՐԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ՝

25.3. Այն դեպքում, երբ Հաճախորդն ունի լավ սպասարկվող (Բանկի կողմից սահմանված չափանիշներին բավարարող) Վարկ/վարկային գիծ այլ ֆինանսական կազմակերպությունում, Բանկն առաջարկում է օգտվել վարկի գնում ծառայությունից:

Վարկերի գնումը հաճախորդին հնարավորություն է տալիս՝

1. Նվազեցնել վարկի/վարկերի տարեկան անվանական տոկոսադրույքը,
2. Միավորել մի քանի վարկերի վճարումները՝ օպտիմալացնելով վարկերի ամենամսյա վճարումները, ինչպես նաև երկարացնել վարկի ժամկետը,
3. Ստանալ լրացուցիչ վարկային սահմանաչափ:
4. Ստանալ վարկի սպասարկման արտոնյալ պայմաններ՝ համաձայն տվյալ պահին Բանկում գործող պայմանների և Սակագների:

25.4. Վարկը տրամադրվում է միանվագ, անկանխիկ եղանակով՝ ուղղելով այլ ֆինանսական կազմակերպությունում առկա վարկի հիմնական գումարի մարմանը:

25.5. Այն դեպքում, երբ Հաճախորդի՝ այլ ֆինանսական կազմակերպության նկատմամբ առկա վարկային պարտավորության չափը (ներառյալ հաշվեգրված տոկոսագումարները, տուժանքը և

տուքանքները և այլ վճարները) գերազանցում է Բանկի հետ կնքված վարկային պայմանագրով տրամադրվող Վարկի ընդհանուր գումարը, Հաճախորդը պարտավորվում է սեփական միջոցների հաշվին գերազանցող գումարի չափով ամբողջությամբ մարել այլ ֆինանսական կազմակերպության նկատմամբ առկա իր վարկային պարտավորությունը և վարկային պայմանագրով նախատեսված ժամկետներում Բանկ ներկայացնել ամբողջական մարումը հաստատող փաստաթուղթ:

25.6. Հաճախորդը պարտավոր է այլ ֆինանսական կազմակերպություններից վարկային պարտավորությունների գնման, վերաֆինանսավորման կամ մարման պայմանով տրամադրված վարկային միջոցները դրանց տրամադրումից հետո՝

- 8 (ութ) բանկային օրվա ընթացքում ուղղել այլ ֆինանսական կազմակերպությունում առկա վարկային պարտավորությունների ամբողջական մարմանը և վարկային պայմանագրի փակմանը:

- այլ ֆինանսական կազմակերպություններից վարկերի վերաֆինանսավորման դեպքում Բանկի կողմից այլ ֆինանսական կազմակերպություններում առկա վարկի մարմանն ուղղված գումարների փոխանցումից հետո կատարել վարկային պարտավորությունների ամբողջական մարում՝ չմարված վարկային պարտավորությունների չափով (կուտակած տոկոսագումար, սպասարկման վճարներ և այլն)* և առավելագույնը 5 աշխատանքային օրվա ընթացքում Բանկ ներկայացնել վարկի/վարկային գծի մարման օրդերը («վարկի մարում/փակում» կամ այլ համանման գրառմամբ) կամ վարկի/վարկային գծի ամբողջական մարման տեղեկանքը կամ վարկային հաշվի զրոյական քաղվածքի պատճենը/նկարը:

* սույն պարտավորության չկատարման, թերի կատարման դեպքում այլ ֆինանսական կազմակերպության չմարված վարկային պարտավորությունների մասով վարկը կժամկետանցվի և Հաճախորդի մասին տեղեկատվությունը կուղարկվի վարկային բյուրո (ԱՔՌԱ):

25.7. Վարկը կարող է տրամադրվել եկամտի ստացման իրավունքի, ավտոմեքենայի կամ անշարժ գույքի գրավով՝ համաձայն տվյալ վարկատեսակի պայմանների:

25.8. Ավտոմեքենային գրավադրմամբ վարկի տրամադրման դեպքում Բանկի և Հաճախորդի հարաբերությունների նկատմամբ կիրառելի են սույն Կանոնների 18.3-18.6 կետերով սահմանված դրույթները, եթե այլ բան նախատեսված է կոնկրետ վարկային պայմանագրով:

26. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

26.1. Սույն Կանոնների, ինչպես նաև հետագայում կնքվող պայմանագրերի չկատարման կամ անպատշաճ կատարման, ինչպես նաև միմյանց հասցված վնասների համար, Կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

26.2. Հաճախորդը սույնով տեղեկացվում է, իսկ վարկային պայմանագիրը ստորագրելով նաև հավաստում է, որ տեղյակ է, որ վարկային պայմանագրերով սահմանված ժամկետներում վարկային պարտավորության չկատարման, թերի կատարման մասին տեղեկատվությունը երեք աշխատանքային օր հետո ուղարկվում է վարկային բյուրո (ԱՔՌԱ), ինչպես նաև, որ վատ վարկային պատմություն ունենալը հետագայում կարող է խոչընդոտ հանդիսանալ Հաճախորդի համար այլ վարկեր ստանալիս:

26.3. Հաճախորդը, ստորագրելով վարկային պայմանագիրը, համաձայնվում է, որ Բանկն իրավունք ունի վարկային պայմանագրով նախատեսված ժամկետներում պարտավորությունների չկատարման դեպքում՝ պարտավորության խախտման պահից սկսած նշված պարտավորությունները կատարել Հաճախորդի՝ Բանկում առկա բանկային/քարտային հաշիվների մնացորդների հաշվին՝ առանց վերջինիս կողմից Բանկին ուղղված վճարման համապատասխան կարգադրություններ ստանալու, որի ապահովման համար սույնով Հաճախորդն անհետկանչելիորեն իրավունք է վերապահում Բանկին վարկային պայմանագրից բխող ցանկացած դրամական պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքերում իր՝ ինչպես Բանկում, այնպես էլ ՀՀ տարածքում գործող այլ բանկերում սպասարկվող հաշիվներից անվիճելի կարգով

գանձել պահանջվող պարտքի գումարը: Ընդ որում՝ նշված գումարները գանձվում են Հաճախորդի ինչպես դրամային հաշվից/ներից/, այնպես էլ արտարժույթային հաշվից/ներից/, որի դեպքում համապատասխան փոխարկումն իրականացվում է այդ պահին Բանկում գործող առքի փոխարժեքով:

26.4. Վարկային պայմանագրով/երով նախատեսված ժամկետներում Վարկի մայր գումարը և/կամ տոկոսագումարները չվճարելու դեպքում Բանկն իրավունք ունի դադարեցնել Վարկի ժամկետանց մասի նկատմամբ տոկոսագումաների հաշվարկը՝ պահպանելով չժամկետանցված մասի նկատմամբ տոկոսագումարների հաշվարկը, և ժամկետանց Վարկի և/կամ ժամկետանց տոկոսագումարների նկատմամբ (մինչև դրանց փաստացի վճարումը) կիրառել տույժ՝ վարկային պայմանագրով սահմանված չափով, սակայն ոչ ավել, քան ՀՀ օրենսդրությամբ սահմանված տուժանքի առավելագույն չափը, իսկ նշված առավելագույն չափին հասնելուց հետո Բանկն իրավունք ունի վերականգնել Վարկի մնացորդի (ներառյալ ժամկետանց մասի) նկատմամբ տոկոսագումարների հաշվարկը: Յուրաքանչյուր վարկատեսակի առանձնահատկություններից ելնելով՝ կոնկրետ վարկային պայմանագրով կարող է սահմանվել տույժերի կամ տուգանքի հաշվարկման ու վճարման այլ կարգ:

26.5. Վարկային պայմանագրի շրջանակներում այլ ֆինանսական կազմակերպությունների վարկային պարտավորությունների գնման, վերաֆինանսավորման կամ մարման պայմանի առկայության և վերջինիս չկատարման ինչպես նաև վարկային պայմանագրով սահմանված ժամկետներում այլ ֆինանսական կազմակերպությունների վարկային պարտավորությունների ամբողջական մարումը հաստատող փաստաթուղթը Բանկ չներկայացնելու դեպքում Բանկն իրավունք ունի Պայմանագրով նախատեսված տոկոսադրույքը միակողմանիորեն փոփոխել և Վարկի մնացորդի նկատմամբ հաշվարկել Բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկի չափով տոկոս՝ այդ մասին 7 (յոթ) աշխատանքային օր առաջ ծանուցելով Հաճախորդին՝ Բանկի և Հաճախորդի միջև կնքված համապատասխան պայմանագրով ընտրված հաղորդակցման եղանակով:

27. ՎԵՃԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

27.1. Բանկի և Հաճախորդի միջև ծագած վեճերն ու տարաձայնությունները, նաև պայմանագրերով չնախատեսված այլ հարցերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

27.2. Հաճախորդն իրավունք ունի Բանկի և իր միջև կնքված պայմանագրից/երից բխող գույքային բնույթ կրող բոլոր-պահանջները ներկայացնել Ֆինանսական համակարգի հաշվարարին, եթե Հաճախորդի պահանջը չի գերազանցում տասը միլիոն ՀՀ դրամը կամ արտարժույթով համարժեք գումարը:

Նախքան Ֆինանսական համակարգի հաշվարարին դիմելը Հաճախորդը պարտավոր է իր պահանջը գրավոր ներկայացնել Բանկին՝ նշելով, թե որն է Բանկի խախտումը՝ ներկայացնելով խախտման փաստի հիմնավորումները:

Սույնով տեղեկացվում է, որ Բանկը կնքել է Ֆինանսական համակարգի հաշվարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնագիր այն պահանջներով, որոնց ընդհանուր չափը չի գերազանցում 250,000 (երկու հարյուր հիստոն հազար) ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը և գործարքի ընդհանուր գումարը չի գերազանցում 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը:

27.3. Բանկային/քարտային հաշիվների բացման և սպասարկման պայմանագրերի, վարկային պայմանագրերի շրջանակներում Բանկի և Հաճախորդի միջև ծագած վեճերն ու տարաձայնությունները կարող են լուծվել նաև արբիտրաժային դատարանով:

(27.3 կետը լրացվել է 15.04.2025թ. Տնօրինության թիվ 71 որոշմամբ)

27.4. Սույնով տեղեկացվում է, որ վարկային պայմանագրով Արբիտրաժային դատարանով և դրա ընթացակարգով վեճերի լուծման "ԱՅՈՒ" տարբերակն ընտրելու դեպքում Բանկի և Հաճախորդի միջև

կնքված պայմանագրի շուրջ ծագած բոլոր վեճերի լուծումը, բացառելով ընդհանուր իրավասության դատարանների ենթակայությունը, դիմող կողմի ընտրությամբ կարող է հանձնվել ներքոնշյալ արբիտրաժային դատարաններից որևէ մեկին՝

- «Արբիտրաժ» ՍՊԸ կից մշտապես գործող «Արբիտրաժային դատարան»
- ՀԲՄ «Ֆինանսական արբիտրաժ» հիմնարկ
- «Միջազգային Արբիտրաժային դատարան» ՍՊ ընկերության մշտապես գործող արբիտրաժային դատարան
- «ԳՆՄ Արբիտրաժ» հիմնարկ

Արբիտրաժային դատարանում գործի քննությունը իրականացվելու է, «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքին և Արբիտրաժային դատարանների կանոնակարգերին համապատասխան: Ընդ որում, ընտրելով վեճերի լուծման արբիտրաժային կարգը, Հաճախորդը հավաստիացնում է, որ տեղեկացված է Արբիտրաժային դատարանում գործերի քննության ընթացակարգին: Վերոհիշյալ նորմատիվային նյութերը տեղակայված են Արբիտրաժային դատարանների www.arb.am, www.uba.am, www.int-arbitrage.com, www.arbitragegm.com, և Բանկի ինտերնետային կայքերում, ինչպես նաև կարելի է ստանալ Բանկի գլխամասային գրասենյակից և մասնաճյուղերից: Կողմերը սահմանում են, որ արբիտրաժային դատարանի տրիբունալը և արբիտրների կազմը ձևավորվում է Արբիտրաժային դատարանի կանոնակարգին համաձայն: Կողմերը պայմանավորվում են, որ վեճի քննությունը իրականացվելու է միայն գրավոր նյութերի հիման վրա՝ առանց բանավոր քննության անցկացման: Վեճերը լուծվում են ՀՀ նյութական իրավունքի նորմերին համապատասխան: Արբիտրաժային դատավարության լեզուն հայերենն է, արբիտրաժի վայրը՝ ՀՀ, ք. Երևանը: Արբիտրաժային դատարանի կողմից կայացված վճիռը վերջնական է և կարող է վիճարկվել միայն չեղյալ ճանաչելու միջոցով: Վեճերի քննությունը Արբիտրաժային դատարանի կողմից վճարովի է:

27.5. Բանկում գործող բոլորքների ներկայացման կարգին, ինչպես նաև վեճերի արբիտրաժային քննության առանձնահատկություններին, «Ինչ անել, եթե բոլորք ունեք» փաստաթղթին հնարավոր է ծանոթանալ Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում «Հաճախորդի իրավունքներ» բաժնում:

27.6. Բանկի կողմից թողարկած քարտերի քարտապանների Բանկի բանկոմատների կողմից չստացված գումարի բոլորքարկման դիմումները պետք է ներկայացվեն Հաճախորդի կողմից գումարը չստանալու փաստը բացահայտելուց առավելագույնը 1 տարվա ընթացքում, նշված ժամկետից հետո ներկայացված դիմումը Բանկի կողմից ուսումնասիրման ենթակա չէ:

(27.6 կետը լրացվել է 21.12.2020թ. Տնօրինության թիվ 381 որոշմամբ, 27.4 կետը փոփոխվել է 21.11.2022թ. Տնօրինության թիվ 270 որոշմամբ, 27.3 և 24.4 կետերը փոփոխվել են 23.08.2023թ. թիվ Տնօրինության թիվ 172 որոշմամբ, 27.3 և 27.4 կետերը փոփոխվել են 01.02.2023թ. թիվ 18 որոշմամբ):